

Ա. Պ. Աբրահամյան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅԵՐԵՆԻ
ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐ

ՀԱՅԵՐԵՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

11



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

С. Г. АБРААМЯН

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ
СИНТАКСИСА СОВРЕМЕННОГО
АРМЯНСКОГО ЯЗЫКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1962

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻԻՆՍՏԻՑՈՒՏ

Ս. Գ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ
ՇԱՐՍՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1962

Տպագրվում է
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի
որոշմամբ

Սույն աշխատության մեջ ուսումնագիրված են ժամանակակից հայերենի՝ հետադուստության խիստ կարիք զգացող մի քանի հարցեր՝ նախադասության տեսություն, նախադասությունների փոխհարաբերությունները խոսքի մեջ, նախադասության տեսակներն ըստ բնույթի, միակազմ նախադասություն, բառ-նախադասություն, քերի նախադասություն, Աշխատությունը կարող է օգտակար լինել հայոց լեզվի ուսուցիչների, բանասիրական ֆակուլտետի ուսանողների և առհասարակ հայերենի քերականական կրթության ընդհանուր ուսումնասիրողների համար:

«Հայերենի գիտական ֆերականության հարցեր» մատենաշարով հրատարակվել են Ա. Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (1953), Ա. Ա. Մուրվալյանի «Հայոց լեզվի բառային կազմը» (1955), Վ. Դ. Առաքելյանի «Ժամանակակից հայերենի հընչյունաբանությունը» (1955), Ս. Գ. Աբրահամյանի «Արդի հայերենի դերանունները» (1956), Վ. Դ. Առաքելյանի «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» (1957), Վ. Դ. Առաքելյանի «Հայերենի ջարահյուսություն» (1958), Ա. Ա. Մուրվալյանի «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն» (1959), Ս. Գ. Աբրահամյանի «Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը» (1959), Հ. Զ. Պետրոսյանի «Գոյականի առումները հայերենում» (1960), Ն. Ա. Պառնասյանի «Խոտորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում» (1961)։

Ե Ր Կ ՈՒ Խ Ո Ս Ք

Սույն աշխատության մեջ ուսումնասիրված են ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքի մի քանի կարևոր հարցեր՝ նախադասությունը և նրա հիմնական հատկանիշները, նախադասությունների իմաստային ու քերականական փոխհարաբերությունները խոսքի մեջ, նախադասության տեսակներն ըստ բնույթի, միակազմ նախադասություն, բառ-նախադասություն, թերի նախադասություն:

Այս հարցերի մի մասը մեզանում քննված է միայն դասագրքերի ու ձեռնարկների սահմաններում՝ ընդհանուր ձևով (տե՛ս Ստ. Պալասանյանի, Մ. Աբելյանի, Գր. Ղափանցյանի, Գ. Սևակի, Ա. Ղարիբյանի, Էդ. Աղայանի, Ա. Գրիգորյանի դասագրքերը), մյուս մասը չի ուսումնասիրված: Նախադասության փնհատման վերաբերյալ կարևոր գիտողություններ կան Կրոժ. Գուրգեն Սևակի «Շարահյուսության մի քանի հարցեր մարքս-լենինյան իմացաբանության լույսի տակ» հոդվածում (ՀՍՍՌ ԳԱ Լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», հ. 4, 1949, էջ 5—26): Համեմատաբար հանգամանորեն են ուսումնասիրված նախադասության տեսակներն ըստ բնույթի (Վ. Առաքելյան, «Հայոց լեզվի շարահյուսություն», հ. 1, 1958, էջ 13—28, Ս. Աբրահամյան, «Նախադասության տեսակներն ըստ բնույթի», «Լեզվի և ոճի հարցեր», 1960, էջ 84—124):

Այսպիսով՝ եթե շարահյուսությունը հայերենի կառուցվածքի համեմատաբար քիչ ուսումնասիրված բաժինն է, ապա սույն ուսումնասիրության նյութ հանդիսացող հարցերն էլ ավելի քիչ ուշադրության են արժանացել շարահյուսության մյուս հարցերի համեմատությամբ: Մեր նպատակն է հայ ժամանակակից գրական լեզվի փաստական նյութի հիման վրա ուսումնասիրել հիշյալ հարցերը և դրանով նպաստել հայերենի գիտական քերականության ստեղծմանը:

Ն Ա Խ Ա Դ Ա Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Յուրաքանչյուր լեզու մարդկային հաղորդակցման կարևորագույն միջոցի իր հասարակական դերը կատարելու համար ունի շատ բարդ ու ճկուն կառուցվածք, հանդիսանում է բազմաթիվ ու բազմապիսի միավորների և կատեգորիաների մի ներդաշնակ համակարգ։ Այդ համակարգում յուրաքանչյուր միավոր ունի իր տեղն ու դերը, որով այն մասնակցում է լեզվի հաղորդակցման ֆունկցիայի իրականացմանը։

Այդ բոլոր միավորների ու կատեգորիաների մեջ, սակայն, իրենց բնույթով ու կշիռով աչքի են ընկնում հատկապես երեքը՝ հնչույթ, ձևույթ և նախադասություն։ Սրանք լեզվի երեք նվազագույն միավորներն են յուրաքանչյուրը մի տեսակետից. հնչույթը՝ նյութական-արտասանական, ձևույթը՝ իմաստային (կամ ձևաիմաստային), նախադասությունը՝ մտքի արտահայտման տեսակետից։

Հնչյունական համակարգի ուսումնասիրությունը հնչույթի (ներառելով, դրսևորումների, զարգացման, փոփոխությունների) ուսումնասիրումն է։ Ձևույթն ընկած է բառի թև՝ բառական, թե՛ ձևաբանական կառուցվածքի հիմքում։ Լեզվի շարահյուսական կառուցվածքը և նրա ուսումնասիրումը հիմնականում հանգում են նախադասության կառուցվածքին ու նրա ուսումնասիրմանը։

Այսպիսով, հնչույթը, ձևույթը և նախադասությունը լեզվի կառուցվածքի մեջ իրենց բնույթով ու դերով, կարելի է ասել, առանցքային միավորներ են։

Մեր խոսքը՝ մասնավորելով նախադասության վերաբերյալ, նշենք, որ նախադասությունը շարահյուսության հիմնական առարկան է: Ինչ վերաբերում է բառակապակցությանը, որը վերջին շրջանում դիտվում է որպես շարահյուսության ուսումնասիրության առարկա, պետք է ասել, որ նա բառակապակցությունը, նախադասության բաղադրիչ միավոր է, և նրա ուսումնասիրումը ևս վերջին հաշվով նախադասության կառուցվածքի ուսումնասիրությանն է ծառայում և ամբողջացնում է այն:

Խոսքը ևս պետք է ուսումնասիրվի շարահյուսության բաժնում: Դա նույնպես չի խանգարում նախադասությունը լեզվի շարահյուսական կառուցվածքի մեջ առանցքային, կենտրոնական միավոր համարելուն, քանի որ խոսքի կառուցվածքի ուսումնասիրումը հանդիսանում է նախադասությունների փոխհարաբերությունների, նախադասությունների կապակցությունների ուսումնասիրում, էլ չենք խոսում այն մասին, որ խոսքը կարող է ամբողջովին համընկնել նախադասության հետ (երբ այն արտահայտված է մեկ նախադասությամբ), և այդ դեպքում նրանք, ինչպես և նրանց ուսումնասիրումը նույնանում են:

Այսպիսով՝ նախադասությունը շարահյուսության ուսումնասիրության հիմնական առարկան է:

Լեզվի հասարակական ֆունկցիայի մեջ նախադասության դերի գնահատման տեսակետից հետաքրքրական է նկատել նախադասության հաղորդակցական դերի և լեզվի հաղորդակցական դերի փոխհարաբերությունը: Հայտնի է, որ լեզուն մտքեր հաղորդելու միջոց է, իհարկե, կարևորագույն միջոց: Ազատ կերպով կարող ենք ասել նաև, որ նախադասությունը մտքեր հաղորդելու միջոց է, քանի որ մենք, իրոք որ, մտքերը հաղորդում ենք նախադասությունների միջոցով: Իհարկե, լեզվի և նախադասության նույնիսկ հաղորդակցական դերի նույնության մասին խոսք չկա այստեղ, բայց համենայն դեպս պատահական չէ, որ այդ երկուսի դերի մասին հիշյալ ձևակերպումները, որոնք միանգամայն ճիշտ են, նման են իրար: Ինչու՞ է այդպես:

Բանն այն է, որ լեզվի, որպես մի ամբողջական համակարգի, կառուցվածքն ունի որոշ աստիճանականություն, այսինքն ոչ թե լեզվի բոլոր բաղադրիչները տարբեր կողմերից միանալով միասին ու միանգամից կազմում են լեզուն, այլ որոշ բաղադրիչներից կազմվում են ուրիշները, սրանցից՝ մյուսները, վերջիններիցս էլ՝ երրորդները և այլն: Եվ եթե լեզվական միավորներն ըստ այդ աստիճանականության դասավորելու լինենք, ապա ամենաստորին աստիճանի վրա կանգնած կլինի հնչույթը, իսկ ամենաբարձրի վրա՝ նախադասությունը (եթե վերևի բացատրության հիման վրա հաշվի չառնենք խոսքը):

Թեև գիտության համար նախադասությունը դիտվում է իբրև մեկ միավոր (և դա ճիշտ է) կամ, հենց նոր գործածած բառով ասենք, մեկ աստիճան, ի տարբերություն մյուս աստիճանների, իրականում՝ բուն լեզվի մեջ նա ոչ թե մյուսների կողքին, նրանցից դուրս և նրանց զուգահեռ գոյություն ունեցող միավոր կամ աստիճան է, այլ նա իր մեջ ներառնում է նախորդ բոլոր աստիճանները: Ստացվում է, որ նախադասությունը պոտենցիալ կերպով իր մեջ ամփոփում, ներառնում է լեզվական մյուս միավորներն ու քերականական կատեգորիաները: Եվ այսպես, լեզվի բոլոր բաղադրիչ մասերը ուղղակի կամ անուղղակի, առանց միջնորդավորման, կամ միջնորդավորված՝ դեր կատարում են նախադասության մեջ: Սա չի կարող նշանակել, թե նախադասության կառուցվածքը նույնանում է լեզվի կառուցվածքի հետ, այլ միայն այն, որ լեզվական բոլոր միավորները իրենց գոյր գտնում են նախադասությունների մեջ՝ այդպիսով ձևավորելով այն օղակը, ավելի ճիշտ իբրև միավոր դիտվող այն ամբողջական շղթան կամ բարդ օղակը, որով ուղղակիորեն կատարվում է լեզվի խոսողական, հաղորդակցական ֆունկցիան:

Այսպիսով, եթե լեզուն խոսողական, հաղորդակցական ընդհանուր կարողություն է, ապա նախադասությունը այդ ընդհանուր կարողության մասնավոր դրսևորումն է: Կարելի է ասել, որ լեզվի և նախադասության միջև ֆունկցիոնալ տեսակետից կա ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերու-

թյուն: Հենց դրանից էլ բխում է լեզվի և նախադասության ֆունկցիաների ձևակերպման նմանությունը, քանի որ «ամեն մի մասնավոր այսպես թե այնպես ընդհանուր է» (Լենին):

Երբ ասում ենք, որ մարդ իր մտքերը հաղորդում է նախադասությունների միջոցով, դա, իհարկե, չի նշանակում, թե նախադասությունը ծառայում է ինչ-ինչ միջոցներով պատրաստի մաքր խոսակցին (կամ ընթերցողին) սոսկ հաղորդելու համար: Հայտնի է, որ լեզուն մտածողության միջոց է և իր այդ հասարակական դերը կատարում է հենց նախադասությունների միջոցով, նախադասությունների ձևով: Մարդու ուղեղում միտքը կարող է ձևավորվել միայն նախադասությունների մեջ, եթե նույնիսկ դա ներքին միտք է և չի հաղորդվում:

Մարդ իր շրջապատը, առարկայական աշխարհը միանգամից չի ընկալում և չի կարող ընկալել, ճանաչել: Ամբողջական երևույթները, ինչպես և երևույթների ամբողջությունը մարդ ընկալում, ճանաչում է նրանց բաղադրիչների, նրանց տարրեր կողմերի ճանաչման միջոցով, յուրաքանչյուր անգամ առարկան, երևույթը բնորոշելով տվյալ դեպքում կարեւոր ու էական հանդիսացող որևէ հատկանիշով: Այդ տեսակետից քննենք Հովհ. Թումանյանի «Քաջերի կյանքից» պատմվածքից Դսեղի դիրքի և բնության նկարագիրը:

«Դսեղը յուր անառիկ և չքնաղ դիրքով նման է մի բնակերտ ամրոցի: Նրա փոքրիկ հարթավայրը շրջափակված ու ամրացած է հարավից անտառապատ սարերով, իսկ մնացած երեք կողմից՝ խոր ձորերով: Նրա հանդի սահմանները հարավից սկսվում են հովասուն, բարձր լեռներով, հյուսիսում վերջանում անդնդախոր ձորերով: Նրա հարավային սահմանում—Քոշաքարի ժեռոտ կատարին թռչկոտում է քոյր և բուսնում դանձի, իսկ հյուսիսում—Ձաղի ձորում՝ ապրում է կարիճ և հասնում խաղող: Այս երկու սահմանների մեջ կան թանձրախիտ, կուսական անտառներ, ու կառնի ձալն չեն ւսած, ուր ծառերի փշակներում բուն է դնում մեռուն, թափանցում ապահով միտում են երեները. մոռուտներում ինքնիշխան թափավորում է արջը, և շամբուտներում հանգիստ ապրում է վա-

րազը: Կան ժայռեր, ուր բուռն է դնում արծիվը և թռչկոտում
այծյամը...» (Թում., 3, էջ 26):

Այս հատվածը, որ Դսեղի ամփոփ, բայց բազմակողմա-
նի նկարագիրն է, բաղկացած է վեց նախադասություններից,
որոնցից յուրաքանչյուրը Դսեղը բնորոշում է որևէ տեսակե-
տից: Առաջին նախադասությամբ Դսեղը համեմատվում է
բնակերտ ամրոցի հետ, հաջորդ նախադասությամբ տրվում է
Դսեղի սահմանների բնութագիրը: Մի այլ նախադասության
մեջ բնորոշվում է Դսեղի կենդանական աշխարհը, մյուսում՝
նրա բուսական աշխարհը և այլն: Եվ այսպես, տարբեր նա-
խադասությունների միջոցով Դսեղի բնության տարբեր կող-
մերը ներկայացնելով՝ խոսողը, տվյալ դեպքում հեղինակը,
ամբողջացնում է Դսեղի նկարագրությունը: Այլ կերպ հա-
րավոր էլ չէ, քանի որ Դսեղի բնության այս ամբողջ բազմա-
զանությունը անկարելի է միանգամից ընկալել, ըմբռնել կամ
մեկ նախադասությամբ արտահայտել:

Այսպիսով, ամեն դեպքում իրականության մեկ օղակը,
կողմը, հատկանիշն է դարձվում մտքի օբյեկտ, և դա պայմա-
նավորված է նրանով, թե խոսողը ո՞ր հատկանիշն է համա-
րում կարևոր, էական, ըստ որում ոչ թե առարկայի համար
ընդհանրապես էական, այլ խոսելու տվյալ պայմաններում
այս կամ այն տեսակետից ուշադրության արժանի, կարևոր:

Ճիշտ է պրոֆ. Գ. Սևակը, որ իր ուշագրավ հոդված-
ներից մեկում գրում է. «Իր հասարակական կյանքը վերար-
տադրող մարդը շրջապատված է իրերի, երևույթների բարդ
ցանցով և իր գործունեության յուրաքանչյուր ակնթարթում
ընկալում է այդ իրերն ու երևույթները, անդրադարձնում իր
ուղեղում, սակայն իր գործունեության յուրաքանչյուր ակն-
թարթում միևնույն իրերին ու երևույթներին նա մոտենում է
որոշ դիրքից, որոշ նպատակով. այդ իրերի ու երևույթների
մեջ եղած բազմազան հատկանիշներից միայն մեկն է նրա
համար կարևոր, էական, հիմնական հանդիսանում յուրաքան-
չյուր տվյալ ակնթարթում և հենց այս կարևոր, էական հիմ-
նական հատկանիշն է, որ ամեն անգամ զատվում է առար-

կայից, հակադրվում նւան և նույնացվում նրա հետ, իբրև նրան հավասար և նույնական¹:

Պրոֆ. Գ. Սեակը դրանով զարգացնում է պրոֆ. Մ. Աբեղյանի միտքը նախադասության էության ձևավորման մասին:

Ընթնություն առարկան կամ գոյակը և իր ոչ-ինքնություն հատկանիշը կամ ստորոգելին,—գրում է պրոֆ. Մ. Աբեղյանը,— կազմում են մեր մտածության նյութը: Գոյակն և իր ստորոգելին՝ սպիտակ ձյուն, վազող ձի, ծաղկած ծառ՝ մեր դիտողության համար մի անբաժան միություն և մի պարզ գաղափար են կազմում. որովհետև հատկանիշը՝ հատկություն, գործողություն կամ դրություն՝ առարկայի մեջ գտնվում (իբրև նրա բաղադրիչ մասը: Երբ մենք ոչ-ինքնություն հատկանիշը՝ սպիտակ, վազող, ծաղկած՝ մտքով անջատում ենք իր ինքնություն առարկայից (ձյուն, ձի, ծառ) և մեր մտածողությամբ նորից վերագրում ենք առարկային կամ ստորոգում ենք, այդ ժամանակ առաջ է գալիս խոսքը կամ նախադասությունը. ինչպես՝ ձյունը սպիտակ է, ձին վազող է կամ ձին վազում է, վազեց. ծառը ծաղկած է կամ ծառը ծաղկեց²:

Այսպես՝ Արամը գեկուցում է, Աշոտը գերազանցիկ է նախադասություններում տվյալ պարագայում՝ խոսեու պահին Արամի ու Աշոտի համար անբաժան հատկանիշ հանդիսացող գեկուցել ու գերազանցիկ հատկանիշները նրանց հակադրելուց հետո նորից վերագրում ենք նրանց և դրանով իսկ հաստատում նրանց միասնությունը, դիտում որպես միասնական: Այսպիսով՝ յուրաքանչյուր նախադասություն իր մեջ ունի, ընդհանուր ձևով ասած, առարկայի և հատկանիշի, քերականորեն՝ ենթակալի և ստորոգյալի հակադրամիասնություն: Ստորոգյալով արտահայտված հատկանիշը գիտակցվելով և վերցվելով ենթակայով արտահայտված առարկայից և այլնից

1 Գ. Սեակ, Եւրասիականության մի քանի հարցեր մարքս-լենինյան իմացարանության լույսի տակ (ՀՍՍՌ ԳԱ Լեզվի ինստիտուտի գիտական աշխատություններ, հատ. 4, 1949, էջ 13):

2 Մ. Աբեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, վաղարշապատ, 1912, էջ 2—3:

անջատ և հակադրվելով նրան, վերագրվում է նրան, դրանով իսկ հաստատելով նրանց միասնությունը: Այսպես ձևավորվում և արտահայտվում է միտքը նվազագույն միավոր նախադասության միջոցով:

Ասվեց, որ նախադասությունը մտքի արտահայտման նվազագույն միավոր է: Սա պետք է հիմնավորել: Գուցե լինի առարկություն այն իմաստով, որ մի շարք նախադասությունների (պարզ ընդարձակ և բարդ նախադասությունների) որոշ անդամներ, մասեր հանելով և միայն հենթական ուստորոգյալը թողնելով՝ ևս արտահայտվում է միտք: Օրինակ՝ «Ուշ գիշերով մի խումբ զինված մարդիկ եկան մեր գյուղը» (ԱՇ, էջ 321) նախադասությունից, իսկապես, կարելի է հանել մի քանի անդամներ, թողնել միայն «Մարդիկ եկան», որք ևս միտք է արտահայտում: Դրանով մեկ նախադասությունը չբաժանվեց միտք արտահայտող մեկից ավելի միավորների. այդ և նման նախադասություններում միտք արտահայտող մեկ միավոր կա միայն: Իսկ սա նշանակում է, որ բերված և նման փաստերը չեն բացառում նախադասության՝ մտքի նվազագույն միավոր լինելը:

Ինչ վերաբերում է բարդ նախադասության մեջ մեկից ավելի միտք լինելուն, ապա պետք է նկատի ունենալ, որ միեւնույն բարդ նախադասության կազմի մեջ մտնող բաղադրիչ նախադասությունները չեն արտահայտում ինքնուրույն մտքեր, դրանք առանձին միավորներ չեն, և ամեն մեկը առանձին ամփոփ միտք չի արտահայտում: Այդպիսի բաղադրիչ նախադասությունները քերականական ու իմաստային տեսակետից միաձուլված են ամբողջի մեջ և պայմանավորում են այդ ամբողջը: Ուստի բարդ նախադասության, որպես մեկ ամբողջության համար կարևոր են ոչ թե բաղադրիչ նախադասություններն առանձին վերցրած, այլ նախադասություններն իրենց փոխադարձ կապի մեջ, կարևոր է նրանց միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունը: Չէ՞ որ հենց այդ կապով, հարաբերությամբ է որոշվում բարդ նախադասության տեսակային հատկանիշը, իսկ վերջինս էլ նրա էության արտահայտությունն է: Բարդ նախադասության

բաղադրիչների կապն այնքան էական է, որքան որ պարզ նախադասության համար նրա անդամների կապը: Չընդունել և անտեսել այդ կապը նշանակում է չճանաչել նախադասության էությունը, անտեսել նրա առանձնահատկությունը:

Այս տեսակետից տեղին է նկատի ունենալ հնչույթի, որպես լեզվական-նյութական նվազագույն միավորի համանման հատկանիշը: Խոսքը վերաբերում է բարդ հնչյունների յուրահատկությանը: Բարդ հնչյունները որքան էլ բաղկացած լինեն մեկից ավելի հնչյունական բաղադրիչներից, այնուամենայնիվ չեն դադարում մեկ միավոր լինելուց: Ի վերջո, նվազագույն միավոր լինելու տեսակետից որքան էլ բարդ հնչյունները առաջին հայացքից տարակուսանքի տեղիք տան, այնուամենայնիվ, քանի որ հնչյունից փոքր լեզվական-նյութական նվազագույն միավոր չկա, ուստի որպես այդպիսին պետք է համարել և համարվում է հնչյունը: Նույնը և պետք է ասել նախադասության վերաբերյալ: Քանի որ նախադասությունից ավելի փոքր միավորով միտք արտահայտել հնարավոր չէ, ուստի նախադասությունը հենց այդ նկատառումներով էլ պետք է դիտել որպես մտքի ամենափոքր կամ նվազագույն միավոր:

Այժմ տեսնենք, թե ինչպես է ձևավորվում նախադասությունը, որպես մտքի նվազագույն միավոր: Միտքը կարելի է արտահայտել մեկ բառով և մեծ մասամբ բառերի կապակցությամբ, սակայն ամեն մի բառ կամ բառերի ամեն մի կապակցություն չի կարող միտք արտահայտել: Այսպես, մեծ ֆաղաֆ, գեղեցիկ այգի, բաճառ լեռ և նման բառակապակցությունները, իհարկե, իմաստ ունեն, բայց միտք չեն արտահայտում: Դրանք չի կարելի գործածել առանձին և որևէ մեկին հաղորդել իր մտածածը: Ուրեմն, դրանք նախադասություններ չեն: Սակայն ֆաղաֆը մեծ է, այգին գեղեցիկ է, լեռը բաճառ է կապակցությունները կարելի է գործածել առանձին, արտահայտել միտք, հետևապես դրանք նախադասություններ են:

Ինչո՞վ են երկրորդ շարքի կապակցությունները հանդիսանում մտքի միավորներ, և ո՞րն է այդ երկու շարքի բա-

ռակապակցությունների էական տարբերության պատճառը՝ Վերևում բերված առաջին շարքի բառակապակցությունների միջոցով փաստը չի արձանագրվում, դրանով ոչինչ չի հաստատվում կամ ժխտվում: Մինչդեռ երկրորդ շարքի կապակցություններում խոսողը մեծ հատկանիշը վերագրում է Բաղափին, գեղեցիկ հատկանիշը՝ ալգուն, բառ՝ հատկանիշը՝ լեռանը, դրանով իսկ հավաստում, հաստատում քաղաքի մեծ լինելը, այգու գեղեցիկ լինելը: Եվ այսպես՝ թե՛ արձանագրվում է փաստը և թե՛ դրանով իսկ խոսողի վերաբերմունքն է արտահայտվում (տվյալ դեպքում հաստատական վերաբերմունքը) երևույթի նկատմամբ: Հատկանիշի այդպիսի վերագրումը առարկային, ինչպես հայտնի է, կոչվում է ստորոգում, որը նախադասություն կազմելու, միտք արտահայտելու ամենահիմնական միջոցներից մեկն է: Ստորոգման, որպես նախադասության հիմնական հատկանիշ լինելն է հաստատում այն իրողությունը, որ չկա նախադասություն առանց ստորոգման, և չկա ստորոգում նախադասությունից դուրս:

Վերևում բերված նախադասություններում խոսողի վերաբերմունքը հաստատական է, սակայն այն կարող է տարբեր լինել տարբեր դեպքերում, նայած թե ինչպե՛ս է հարաբերում նախադասության բովանդակությունը իրականությանը՝ խոսողի մտքի պրիզմայում: Նախադասությամբ արտահայտվածը կարող է ոչ միայն հաստատվել խոսողի կողմից, այլև վերջինիս համար անհայտ լինելու կամ այլ պատճառով կարող է հարցվել, կարող է դա լինել մի չկատարված, գործողություն և հրամայվել, պարտադրվել կատարելու համար, այն կարող է լինել խոսողի հիացմունքի, զարմանքի առարկա ու արտահայտվել բացականչումով և այլն:

Այսպես՝ «Ես հայ ուսուցիչ եմ» (Ն.-Դ., 2, էջ 547): «Դուք ո՞վ եք» (Ն. տ., էջ 665): «Ա՛խ, ինչքա՞ն ես երջանիկ կլինեի իմ սիրովս, ինչքա՞ն երջանիկ» (Ն. տ., էջ 121): «Իշխանուհի՛, իշխանուհի՛... օգնեցե՛ք ինձ, օգնեցե՛ք» (Ն. տ., էջ 121):

Բայց բոլոր դեպքերում էլ խոսողի վերաբերմունքը և դրանով իսկ նախադասության մտքի հարաբերությունը իրականությանը՝ կան ամեն մի նախադասության մեջ:

Այստեղ տեղին է հիշել, որ ձևական քերականությունը նախադասությունը նույնացնում էր բայ-ստորոգյալի հետ, իսկ ենթական համարում էր վերջինիս լրացումը: Ահա թե ինչ է գրում քերականության այդ ուղղության խոշորագույն ներկայացուցիչը մեզանում՝ պրոֆ. Մ. Աբեղյանը. «Խոսքը (իմա՝ նախադասությունը—Ս. Ա.), ուրեմն, մտածողության արտահայտությունն է բայով»¹: «Ենթակա ապվում են, ուրեմն, այն լրացումները (ընդգծումը մերն է—Ս. Ա.), որոնք բացահայտում են բայի դեմքը, որոշ կերպով ցույց տալով անող կամ եղող առարկան, որին վերագրվում է բայիմաստը կամ մի այլ հատկանիշ»²: Սովետահայ քերականագիտությունը բնականաբար չի ընդունում այս տեսակետը: Որքան էլ ստորոգյալի դերը մեծ է նախադասության ձևավորման խնդրում, այնուամենայնիվ ենթական, որ ցույց է տալիս դործող կամ եողո առարկան, ստորադաս վիճակում չէ ստորոգյալի նկատմամբ, դա այն առարկան է, առանց որի հատկանիշ չկա և չի կարող լինել:

— Ենթական³ և ստորոգյալը նախադասության մեջ միմյանց հակադրված և քերականորեն սերտորեն կապված եր-

1 Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, էջ 5:

2 Նույն տեղում, էջ 15:

3 Ընդունված է, որ ժամանակակից հայերենում ենթական արտահայտվում է միայն ուղղական հոլովով, Մենք գտնում ենք, որ բացի սովորական ենթակայից, որն արտահայտվում է ուղղական հոլովով, ժամանակակից հայերենում (ի՛շպես և շատ բարբառներում) կա նաև մասնական ենթակա, որն արտահայտվում է բացառական հոլովով (մասնական բացառականով). օրինակ՝ Այս գրքից Ձեր գրադարանում կա՝ Այս զարծվածքից ամեն խանութում էլ վաճառվում է: Մասնական ենթական սովորական ենթակայի համեմատությամբ ունի այն առանձնահատկությունը, ինչ որ մասնական ուղիղ խնդրի՝ սովորական ուղիղ խնդրի համեմատությամբ: Եթե նկատի ունենանք, որ հայերենում կա նաև մասնական բացահայտիչ, որն, իհարկե, իր էությունից որոշ չափով տարբերվում է մասնական ուղիղ խնդրից և մասնական ենթակայից, պարզ կդառնա այն օրինաչափությունը, որ հայերենում նախադասության մի շարք սովորական անդամների զուգահեռ՝ ունենք նաև նույն անդամները մասնական նշանակությամբ:

կու ծայրաբևեռներ են: Առարկայի և նրան վերագրվող հատկանիշի, որպես նախադասության ամենասովորական և տարածված տիպի մեջ երկու ծայրաբևեռների հակադրամիասնության ըմբռնումն ու ճանաչումը ինքնին հերքում են ձևական քերականության հիշյալ տեսակետը:

Ասվեց, որ ստորոգման միջոցով է հատկանիշը վերագրվում առարկային: Այժմ տեսնենք, թե ինչ միջոցներով է արտահայտվում ստորոգումը:

Ստորոգման դերը որոշակիորեն երևում է հատկապես բաղադրյալ ստորոգյալների մեջ, ինչպես և բայի բաղադրյալ ժամանակներով արտահայտված ստորոգյալներում: Ծաղիկը հոտավետ է: Գնացք մեկնում է: Է հանգույցով ու օժանդակ բայով հոտավետ և մեկնելու հատկանիշները վերագրվում են ծաղիկ և զնացք առարկաներին:

Ստորոգումը կարող է արտահայտվել ոչ միայն օժանդակ բայով, այլև բայի քերականական վերջավորությունների միջոցով: Օրինակ՝ Ծառը ծաղկեց: Դաշտը կկանաչի և այլն: Այս երևույթը լինում է բայի պարզ ժամանակներով արտահայտված ստորոգյալների մեջ, երբ և՛ հատկանիշը, և՛ ստորոգումը արտահայտվում են մեկ բառով, ըստ որում՝ վերագրվող հատկանիշը արտահայտվում է բառի հիմքով, իսկ ստորոգումը՝ բայական վերջավորությամբ:

Օրինակ՝ «Մենք կսպասենք գիշերվան ու կե՛նենք... ու կֆայլենք դեպի քաղաքները քարահատակ» (Անթ., էջ 16): «Մարգարը ծիծաղեց» (ն. տ., էջ 22):

Ստորոգումը կարող է արտահայտվել նաև վերացական բայերի միջոցով, ինչպես՝ Հեղուկը գոլորշի դարձավ (հմտ. Հեղուկը գոլորշիացավ): Իր հերթին էլ վերացական բայը կարող է դրսևորվել ոչ միայն պարզ, այլև բաղադրյալ ձևով:

Անկախ նրանից, թե ստորոգումն ինչպիսի՝ ձևերով ու միջոցներով է արտահայտվում, նրա էությունը և դերը միշտ նույնն են:

Նախադասությունների ճնշող մեծամասնության մեջ լեզվականորեն տարրորոշված կերպով արտահայտվում են թե՛

գործող կամ եղող առարկան (քերականորեն ենթական), թե՛ նրան վերագրվող հատկանիշը և թե՛ հատկանիշը առարկային վերագրող միջոցը՝ հանգույցը կամ քերականական վերջավորությունը¹:

Դրանք երկկազմ նախադասություններ են, որոնցում ստորոգումը իր հետ կապված բոլոր բաղադրիչներով իրեն որոշակիորեն զգալ է տալիս և դժվար է դրանք դիտել, վերլուծել:

Սակայն միակազմ նախադասությունները (որոնք դպրոցական քերականության մեջ հայտնի են որպես անենթակա և անդեմ նախադասություններ) այդպես չեն: Մանրամասնությունները թողնելով համապատասխան բաժնին, այստեղ հշենք, որ միակազմ նախադասությունները այդպես են կոչվում այն պատճառով, որ նրանցում երկկազմ նախադասությանը հատուկ երկու բևեռներ չկան. այդպիսի նախադասություններն ունեն մեկ մաս, անկախ այն բանից՝ նրանք մե՞կ, թե մեկից ավելի բառերից են կազմված, ինչպես՝ Լուսացավ: Ինչի՞ց սկսել: Պահպանել պետական զույգը: Բարձրացնել՝ աշխատանքի արտադրողականությունը:

Անշուշտ սրանք և սրանց նմանները ևս լիարժեք նախադասություններ են, քանի որ մտքի ինքնուրույն միավորներ են, արտահայտում են ամփոփ, ավարտված միտք. դրանցով մենք հաստատում ենք մի բան, մեր վերաբերմունքն ենք արտահայտում եղած, լինելիք իրողության նկատմամբ: Սակայն այստեղ մտքի ձևավորումը, ստորոգումը այլ կերպ է կատարվում: Միակազմ նախադասություններում թե՛ եղող առարկան, թե՛ հատկանիշը, թե՛ ստորոգող քերականական բաղադրիչը կարող են արտահայտվել մեկ բառով:

Օրինակ՝ «Լուսացավ: Դադարեց Արտակի գիշերամարտը»

¹ Այս միտքը չի հակասում զեղչված անդամներով նախադասությունների, այլև որոշ թերի նախադասությունների (որոնք գործածվում են հատկապես երկախոսությունների ժամանակ) գոյության փաստին, քանի որ տվյալ նախադասության մեջ զեղչված անդամը մեծ մասամբ արտահայտվում է կից նախադասության մեջ և կամ համենայն դեպս որոշակիորեն հասկացվում է:

(ԳՎ, էջ 171): «Մքնեց: Անտառի խորքում մի թռչուն սկսեց տխուր կանչել» (ՎԱ, ԼԿ, էջ 30):

Երբ միակազմ նախադասությունն արտահայտված է խոնարհվող բայով կամ իր կազմի մեջ ունի խոնարհվող բայ, բնականաբար նայած թե ո՞ր ժամանակով է կիրառվում, ստորոգումը կարող է արտահայտվել օժանդակ բայով, իսկ գործող, եղող առարկան ու նրան վերագրվող հատկանիշը մեկ բառով են արտահայտվում:

Օրինակ՝ «Առսաճում է,— հանկարծ շշնջաց Արտակը» (ԳՎ, էջ 171): Հիշյալ միակազմ նախադասություններում ստորոգումն այսպես թե այնպես ունի իր քերականական դրսևորումը, այն է՝ մի դեպքում այն արտահայտվում է խոնարհման վերջավորությամբ (մքնեց, լուսացավ բայաձևերում), մյուս դեպքում՝ է օժանդակ բայով: Այդ այդպես է անենթակա կոչվող նախադասություններում:

Մենք խոսեցինք ստորոգման ձևավորման տարբեր միջոցների մասին: Որքան էլ այդ միջոցները իրենց դրսևորման ձևերով տարբեր են, այնուամենայնիվ կարևոր է նշել, որ դրանց միջև կա շատ էական ընդհանրություն, այն է՝ դրանք բոլորն էլ բայական ձևեր են: Անշուշտ բայն այդ հարցում շատ կարևոր դեր ունի, և թերևս դա է պատճառն այն թյուրիմացության, որ անցյալի մի շարք լեզվաբաններ բայը (դիմավոր ձևերը) նույնացրել են նախադասության հետ: Եթե ամեն մի նախադասության մեջ արտահայտվում է, որ մի առարկա մի բան կատարում է, լինում է և այլն, այդ նշանակում է, որ նախադասության մեջ արտահայտվում է առարկայի գործողության, եղելության գաղափար, սրանք էլ հատկանիշներ են, որոնք հատուկ են բային, որպես խոսքի մասի:

Ավելին, գործողության, եղելության որոշ (թեկուզ և տարտամ) իմաստ կա նույնիսկ միակազմ անվանական նախադասություններում, թեև վերջիններիս մեջ բայ չկա:

Օրինակ՝ «—Դո՛ւս, —հրամայեց Գյուտը բարձրագուշ...

— Դո՛ւս, —կրկնեց կատաղած Գյուտը»

(ԳՎ, էջ 100):

«Փարիզ: Մշուշ ու ան: Ես պոետս, Լենինյան բու-
շակիս՝ պատին կռթնած ահա լսում եմ նրանց ձայնը,
շշուկը» (ԵԶ, էջ 368—369): Ընդգծված նախադասություննե-
րում ենթադրվում է գործողության կամ եղելության իմաստ,
թեև նրանցում բայական բաղադրիչ չկա: Այդ իմաստը կարե-
լի է արտահայտել մոտավորապես հետևյալ կերպ. «Դուրձ
զնա» կամ «Դուրս կորիւ», «Այդ Փարիզն է», «Փարի-
զում է», «Մշուշ ու ահ է տիրում», «Մշուշ ու ահ կա» և այլն,
որոնք, իհարկե, կազմությանմբ տարբեր են նախորդներից:

Որքան էլ բայի գործողության իմաստը կարևոր է ստո-
րոգման համար, այնուամենայնիվ միայն այդ իմաստը ինք-
նին վերցրած ստորոգում չի ձևավորում: Դրա լավագույն
ապացույցը բայական միակազմ նախադասությունն է, որը
կամ որի գերադաս անդամն արտահայտվում է բայով, բայ-
այնուամենայնիվ այդ բայով ստորոգում չի արտահայտվում:

Օրինակ՝ «Կանգնե՛լ,—գոռում է հրամանատարը ցնցվելով»
(Անթ., էջ 376): «Ինչպե՞ս սկսել նոր ուսումնական տարին,
ինչպիսի՞ նոր միջոցներ ու ձևեր կիրառել քաղաքական ուսու-
ցումը ներկա խնդիրների մակարդակին բարձրացնելու հա-
մար» (ՍԶ, 22.9.1960):

Ստորոգումը սերտորեն կապված է բայի կատեգորիա-
ների հետ, բայց ոչ բոլոր: Այսպես, բայի սեռի կատեգորիան
ստորոգման ձևավորման համար կարևոր չէ: Ստորոգման
համար կարևոր են բայի մասնավորապես եղանակային ձևե-
րին հատուկ քերականական կատեգորիաները՝ եղանակ,
դեմք, ժամանակ, թիվ: Եվ ստորոգումը որպես շարահյուսա-
կան կատեգորիա ձևավորվում է բայի ձևաբանական այս կա-
տեգորիաների հիմքի վրա:

Բերենք մի քանի օրինակներ: «Կատարվել էր նրա ցան-
կությունը» (ՍԽԶ, էջ 30): «Մտափկը եկավ» (Ն. տ., էջ 31):
«Ինձ համար տեղ պահիր» (Ն. տ. էջ 30): «Գինին խանութի
կրեքեմ» (Ն. տ., էջ 38): «Ոմանք կնախաձեռնեմ, ոմանք էլ
կչարախոսեն» (Ն. տ., էջ 45): «Թող այնքան չարախոսեն, որ
տրափվեն» (Ն. տ.): «Այդ առաջուց պիտի առնիր» (Ն. տ.,
էջ 43):

կասկածի ենթակա չէ, որ բայի եղանակի, ժամանակի, թվի, դեմքի կատեգորիաները կան հիշյալ նախադասություններում՝ դրանորված պարզ և բաղադրյալ ժամանակներով արտահայտված ստորոգյալների մեջ: Այդ կատեգորիաները հատուկ են նույնիսկ բաղադրյալ ստորոգյալներին և արտահայտված են նրանց հանգույցի մեջ: Օրինակ՝ «Մարգարյանը չուռ էր» (ՍեՀ, էջ 264): «Դա հին, շատ հին պատմություն է» (ն. տ., էջ 297): «Դա մի մեծ ու երկարատև ծես էր» (ԴԴ, 6, էջ 386): «Նա բավական խելացի էր» (ԴԴ, 6, էջ 399):

Նախադասության մեջ ստորոգման մշտական գուգակցումը վերոհիշյալ կատեգորիաներին (եղանակ, թիվ, դեմք, ժամանակ) պատահական չէ: Վերջիններս ձևաբանական հիմք են ստորոգման համար: Սակայն պետք է ասել, որ դրանք բոլորը հավասար դեր չունեն ստորոգման համար: Այս հարցում առավել զգալի դերը պատկանում է եղանակի կատեգորիային: «Այն (եղանակի կատեգորիան—Ս. Ա.) արտահայտում է գործողության և նրա սուբյեկտի կապի ռեալության գնահատականը (оценку) խոսողի տեսակետից կամ խոսողի կամքը՝ այդ կապի իրականացման կամ ժխտման նկատմամբ: Եղանակի կատեգորիան փերականական կատեգորիա է բայի սիստեմում, որը որոշում է գործողության եղանակայնությունը (модальность), այսինքն՝ ցույց է տալիս գործողության հարաբերությունը իրականությանը, որը որոշվում է խոսողի կողմից»:

Եվ իրոք, եղանակի կատեգորիայով արտահայտվող խոսողի վերաբերմունքը գործողության, եղելության նկատմամբ շատ կարևոր է ստորոգման և դրանով իսկ նախադասության ձևավորման ու նրանով արտահայտվող վերաբերմունքի համար: Սակայն այդ ձևաբանական կատեգորիայի և ստորոգման շարահյուսական կատեգորիայի միջև հավասարության նշան դնել չի կարելի:

Եվ այդ՝ հետևյալ պատճառներով:

Նախ, նախադասության մեջ վերաբերմունքը ավելի բարդ է ու բազմազան ձևերով է արտահայտվում, քան բայի եղանակային ձևերին հատուկ վերաբերմունքը: Ստորոգման կամ, ավելի ընդհանուր ձևով ասած, նախադասության մեջ արտահայտվող վերաբերմունքը դրսևորվում է տարբեր ու բազմազան միջոցներով ու ձևերով՝ նախադասության ինտոնացիայով (որն իր հերթին ունենում է բազմազան երանգներ), եղանակավորող բառերով, այդպիսի դեր կատարող բառակապակցություններով և այլն:

Հմմտ. Եկել է եղանակային ձևը հետևյալ օրինակներում.

Նա եկել է:

Գո՛ւցե եկել է:

Ըստ երևույթին եկել է:

Երևի եկել է:

Ծնթադրենք եկել է:

Նա եկե՛լ է:

Նա եկե՛լ է, և այլն:

Այնուհետև, ստորոգման ձևավորման հարցում, բայի եղանակի կատեգորիայից բացի, դեր ունեն նաև դեմքի, թվի, ժամանակի կատեգորիաները: Այս կատեգորիաները տարբեր կողմերով կոնկրետացնում են տվյալ գործողության կամ հատկանիշի կապը սուբյեկտի հետ, հետևապես և որոշ դեր կատարում են ստորոգման, ուրեմն և նախադասության ձևավորման խնդրում: Դրանց դերը ճիշտ գնահատելու համար կարելի է փորձել պատկերացնել գործողության և առարկայի (սուբյեկտի) կապ կամ գործողության վերադրում առարկային, առանց դեմքի, առանց ժամանակի, առանց թվի: Այդպիսի վերադրումը նույնիսկ պատկերացնելը դժվար է:

Այսպիսով՝ ստորոգումը ձևավորվում է բայի եղանակային ձևերին հատուկ կատեգորիաների հիմքի վրա:

Պատահում է նաև, որ ստորոգումը քերականական-ձևային դրսևորում չի ունենում, բայց ըստ էության նա գոյություն է ունենում: Այդպիսին է անդեմ նախադասությունների

1 Որոշ յուրահատկություն ունեն միայն անդեմ նախադասությունները:

ստորոգումը: Ինչպե՞ս է ձևավորվում անդեմ նախադասությունը: Եթե անենթակա նախադասության մեջ հատկանիշն ու կրող առարկան միասնաբար են հանդես գալիս, բայց այնուամենայնիվ դիմային վերջավորությունը ձևավորում է ստորոգումը, ապա անդեմ նախադասությունները, ինչպես երևում է անվանումից, զուրկ են նաև քերականական դեմքից և այդ պատճառով էլ նախադասության, որպես ամփոփ միտք արտահայտող լեզվական միավորի, ձևավորումը վերևում նշված քերականական միջոցներով չի կատարվում:

Անդեմ նախադասության ձևավորման առանձնահատկությունները քննելուց առաջ անհրաժեշտ է կանգ առնել նախադասության մեկ այլ հիմնական հատկանիշի վրա:

Նախադասության հիմնական հատկանիշներից մեկն էլ, բացի ստորոգումից, հատուկ ինտոնացիան է: Եթե ստորոգումը հատկանիշը վերագրում է առարկային, մի բան, որ խիստ էական է նախադասության համար, ապա նախադասության ինտոնացիան ձևավորում է մտքի ավարտվածությունը: Չէ՞ որ կարող է մի հատկանիշ վերագրվել որևէ առարկայի, բայց դեռ դրանով չավարտվել խոսողի միտքը: Որպեսզի բառերի տվյալ կապակցությունը ամփոփ միտք արտահայտի, այսինքն՝ լինի ինքնուրույն նախադասություն, այն պետք է նաև ավարտված լինի. դա ցույց տանք պատմողական նախադասության վրա:

Վերցնենք այսպիսի օրինակ.

Աշոտը ուսման առաջավոր է: Սա, անշուշտ, մի ավարտված նախադասություն է, որովհետև և՛ ստորոգում ունի, և՛ պատմողական նախադասությանը հատուկ՝ բարձրացող-իջնող ինտոնացիա, որը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով.

Բառերի այդ նույն կապակցությունը արտաբերենք այլ ինտոնացիայով, ասենք,՝ ոչ թե բարձրացող-իջնող, այլ միայն բարձրացող.

Աշոտը ուսման առաջավոր է

Այստեղ թեև կա ստորոգում, բայց նախադասությունն ավարտված չէ, այն մտքի ինքնուրույն միավոր չէ, բարձրա-

ցող ինտոնացիան ցույց է տալիս, որ բառերի այդ կապակցությունը ամփոփ նախադասության վերածվելու համար դեռ պետք է շարունակվի, և բարձրացած ինտոնացիան պետք է իջնի ու հանգի դադարի: Շարունակենք այդ կիսատ նախադասությունը.

Աշոտը ուսման առաջավոր է, որովհետև շատ բառերիդ է:

Աշոտը ուսման առաջավոր է սկսած առաջին դասարանից:

Եվ այսպես, երբ ստորոգմանն ավելանում է նաև նախադասության հատուկ ինտոնացիան, դրանով ավարտվում է նախադասության ձևավորումը, այն դառնում է ավարտված, ամփոփ և ինքնուրույն: Համեմատենք հետևյալ նախադասությունների ինտոնացիան.

Արամը վերադարձավ:

Արամը վերադարձավ, որ զբաղվի այդ հարցով:

Թեև երկու նախադասություններում էլ հայերենի բառական շեշտի օրենքի համաձայն «վերադարձավ» բառի վերջին վանկը շեշտված է, բայց դրա հետ միասին, նախադասության ընդհանուր ինտոնացիան առաջին նախադասության մեջ իջնում է վերադարձավ բառի վերջում ու հանգում դադարի, իսկ երկրորդ նախադասության մեջ նույն բառի (վերադարձավ) վրա տոնը, ընդհակառակը, բարձրանում է: Այս վերջին նախադասության մեջ տոնի իջնելը բնականաբար ընկնում է վերջին բառի վրա: Եթե փորձելու լինենք «հարցով» բառով չվերջացնել նախադասությունը, այլ շարունակել այն, համապատասխանաբար կփոխվի նախադասության այդ ինտոնացիան. իջնելը և դադարը կտեղափոխվեն նոր նախադասության վերջին մասը: Այսպես՝ Արամը վերադարձավ, որ զբաղվի այդ հարցով և անպայման լուծի այն:

Հայերենի նախադասության ինտոնացիան, ցավոք սրտի, չի ուսումնասիրված մինչև օրս: Այդ տեսակետից համեմատաբար բարվոք վիճակում է ռուս քերականագիտությունը, որի ներկայացուցիչները վաղուց ուշադրության առարկա

են դարձրել ինտոնացիան և գնահատել նրա դերը լեզվի մեջ-
ինտոնացիան նախադասության հիմնական ու կարևոր հատ-
կանիչ են համարել ուս առնվաճի լեզվաբաններ Ա. Ա. Շախ-
մատովը, Վ. Վ. Վինոգրադովը և ուրիշներ:

Մեծ է ինտոնացիայի դերը նախադասության ձևավոր-
ման, նախադասության էության դրսևորման գործում: Ինտո-
նացիան այնքան կարևոր նշանակություն ունի նախադասու-
թյան համար, որքան բառական շեշտը՝ բառի համար:
Վերջինս հանդիսանում է բառի ամբողջությունը միասնա-
կան, միաձույլ դարձնող և պահպանող լեզվական կարևոր
միջոց: Նույնպիսի կարևոր դեր ունի ինտոնացիան նախադա-
սության ամբողջականության ձևավորման համար:

Ինտոնացիա ասելով պետք է հասկանալ ամբողջ նախա-
դասության արտաբերման ընթացքում արտասանական ելևէջ-
ների (այդ թվում նաև տրամաբանական շեշտի) ամբողջու-
թյունը, որն իրոք մի ներդաշնակ ամբողջություն է կազմում:

Այսպիսով, հատուկ ինտոնացիան նախադասության
հիմնական հատկանիշներից է, որ կարևոր է նախադասու-
թյան ամբողջականությունը և մտքի ավարտվածությունը
ձևավորելու համար:

Հայտնի է, որ յուրաքանչյուր նախադասություն ունի իր
տրամաբանական շեշտը: Տրամաբանական շեշտը կարելի է
համարել նախադասության ինտոնացիայի ամենաբարձր
տոնը և որպես այդպիսին՝ ինտոնացիայի կենտրոնական
առանցքը, որի շուրջը ծավալվում են մյուս՝ առավել ցածր
ելևէջները: Սովորական շարադասություն ունեցող պատ-
մողական նախադասության տրամաբանական շեշտը դրվում
է ստորոգյալի վրա:

Պատմողական ինտոնացիայով կարդանք հետևյալ նա-
խադասությունները: Գործարանը գերակատարել է արտա-
դրիկան այլաները: Աշակերտները հավաքվել են ժողովի: Առ-
վետական արբանյականավը վերադարձավ երկիր: Սովորա-
կան լսողության համար էլ զգալի է, որ այս նախադասու-
թյուններից յուրաքանչյուրի մեջ ստորոգյալը համեմատա-

քար ավելի է շեշտված, արտասանվում է ավելի բարձր տոնով, քան որևէ այլ անդամ:

Բայց, իհարկե, տրամաբանական շեշտը կարող է փոփոխվել նախադասության մեջ և շրջուն շարադասության դեպքում այն կարող է դրվել տարբեր անդամների վրա, նայած խոսողի նպատակին: Այսպես, աշակերտներն են հավաքվել ժողովի (և ոչ թե ուսուցիչները): Աշակերտները ժողովի՝ են հավաքվել (և ոչ թե դասի): Որոշ դեպքերում նախադասության շարադասությունը կարող է պահպանվել սովորականի պես, բայց տրամաբանական շեշտը կարող է փոխել իր տեղը: Օրինակ, վերոհիշյալ նախադասության մեջ կարող է շփոխվել «ժողովի» բառի տեղը և հենց այդտեղ էլ ստանալ տրամաբանական շեշտ: Այսպես՝ Աշակերտները հավաքվե են ժողովի՝ (և ոչ թե դասի): Այս դեպքում «ժողովի» բառը համեմատաբար պակաս շեշտված է, քան նույն բառը «Աշակերտները ժողովի են հավաքվել» շարադասության մեջ: Այդ պատճառով էլ նման դեպքերում եթե անհրաժեշտ է հատկապես խիստ շեշտել տվյալ բառը, փոխվում է նրա շարադասությունը և դրա հետ կապված նաև ամբողջ նախադասության շարադասությունը:

Հրամայական, հարցական և բացականչական նախադասությունների շեշտը և ընդհանրապես ինտոնացիան իրենց բնույթով ունեն և՛ նմանություններ պատմողական նախադասության նույն հատկանիշի հետ, և՛ տարբերություններ նրանից:

Իրենց տարբերություններով հանդերձ յուրաքանչյուր նախադասության հատուկ է անդամների շեշտերի ներդաշնակ համակարգ, ամբողջ նախադասության ինտոնացիայի ներդաշնակություն:

Անդեմ նախադասությունների ձևավորման գործում գլխավոր դերը պատկանում է ինտոնացիային: Երկկազմ նախադասություններին հատուկ քերականական ձևավորում՝ ստորոգում չունենալով, բայց ունենալով նախադասության հատուկ ինտոնացիա, վերջինս բառերի կապակցությանը կամ բառին տալիս է ամփոփ, ավարտված լինելու հատկանիշ, մի

բան, որ հատուկ է նախադասութեանը; և այդպիսով ձևավորում նախադասութիւնը: Օրինակ՝ «Կանգնեցնել ըստ հասակի, նշանակել՝ ազգանունները» (Անթ., էջ 145): «Վերցնել իրերը» (ն. տ., էջ 146): «Շինարարութեան բուֆետ: Երեկո: Դրսում հորդ անձրև» (ն. տ., էջ 457):

Անդեմ նախադասութիւններն ստորոգում ունեն, թե՛ ոչ: Ամեն մի անդեմ նախադասութեան արտահայտած միտքը, վերաբերութիւնը որոշակիորեն հասկացվում է: Բայց ստորագման արտաքին ձևային կողմը չկա, քերականորեն ձևավորված, որոշակիորեն տարրորոշված ստորոգում նրանում չկա: Այնուամենայնիվ անդեմ նախադասութիւնների մեջ կա այն, ինչին որ ծառայում է ստորոգումը: Եթե կա հետեւները, արդիւնքը, չի կարող չլինել նաև նրա պատճառը:

Համեմատենք հետեւյալ նախադասութիւնները. «Լոն'... ձայներդ կտրե՛ք» (Անթ., էջ 147): «Լոն'» նախադասութիւնը նույն հաջողութեամբ է արտահայտում խոսողի միտքը, թեև քերականորեն արտահայտված ստորոգում չունի, որքան որ ստորոգում ունեցող «ձայներդ կտրեք» նախադասութիւնը, որն, ըստ էութեան, հանդիսանում է նախորդի յուրահատուկ կրկնութիւնը և միայն ոճական՝ միտքը շեշտելու նպատակով է գործածված, առանց որի էլ խոսողի միտքը հասկանալի ձևով արտահայտված է առաջին՝ անդեմ նախադասութեան մեջ:

Անդեմ նախադասութիւններում, ինչպես և ամեն մի նախադասութեան մեջ կա ստորոգում: Հարց կարող է առաջանալ ստորոգման արտահայտութեան, նրա ձևավորման վերաբերյալ միայն: Այս հարցի վերաբերյալ մենք հետեւյալն ենք կարծում: Կամ պետք է ընդունել, որ անդեմ նախադասութիւնները ամբողջական ամփոփ նախադասութեան հատուկ ինտոնացիա ունենալով՝ դրանով իսկ ավելի բառակապակցութեանը կամ բառին օժտում են նախադասութեան հատկանիշներով և ստորոգումն արտահայտվում է քերականական զրո միջոցով, այսինքն՝ առանց լնգվական ձևային միջոցի (հանգույց, վերջավորութիւն և այլն): Եվ կամ պետք է ընդունել, որ ինտոնացիան այդպիսի նախադասութիւննե-

լում ոչ միայն մտքի ավարտվածություն է պայմանավորում, այլև ստորոգում, դառնում է ստորոգման արտահայտության միջոց։ Հարցի լուծման այս երկու հնարավոր ելքերը իրարից շատ հեռու չեն և ունեն այն էական ընդհանրությունը, որ երկու դեպքում էլ խիստ կարևոր դեր է վերագրվում նախադասության ինտոնացիային, որով պայմանավորվում է ոչ միայն նախադասության ավարտվածությունը, այլև ստորոգումը, ըստ որում ստորոգումը դիտվում է որպես ինտոնացիայով պայմանավորված՝ մի դեպքում ուղղակի, մյուս դեպքում անուղղակի կերպով։

Միակազմ և մասնավորապես անդեմ նախադասությունների, որպես ինքնուրույն նախադասությունների, ընկալման հարցում անհրաժեշտ է նշել նաև կոնկրետ խոսքի և խոսելու պայմանների դերը։

Նախադասության էությունը ճիշտ հասկանալու, նախադասությունը որպես շարահյուսության ուսումնասիրության օբյեկտ ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է գտնել համառոտակի համեմատել նախադասությունը և դատողությունը։ Այս երկու կատեգորիաները անցյալում երբեմն նույնացվել են մասնագետների կողմից կամ համեմայն դեպս որոշակիորեն չեն սահմանազատվել միմյանցից։ Նախադասությունն ու դատողությունն ունեն և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ։

Այդ ընդհանրություններն ու տարբերությունները ուղիղ համեմատական են գիտության այն բնագավառների ընդհանրություններին ու տարբերություններին, որոնց ուսումնասիրության առարկան են դրանք։ Գիտության այդ բնագավառներն են քերականությունը և տրամաբանությունը։

Թուրքովին պատահական չէ, որ տրամաբանության կարևորագույն կատեգորիաները ունեն իրենց համապատասխանությունները քերականության և ընդհանրապես լեզվաբանության մեջ։ Այս տեսակետից կարևոր են հատկապես հետևյալ համապատասխանությունները. հասկացություն—բառ, սուբյեկտ—ենթակա, պրեդիկատ—ստորոգյալ, դատողություն—նախադասություն։ Այդ ընդհանրության հիմքն այն է, որ տրա-

մաքանությունն ուսումնասիրում է մարդկային մտածողության օրենքները, իսկ մտածողութիւնը կատարվում, դրսևորվում է լեզվի միջոցով, լեզվական կատեգորիաների միջոցով։ Այս զուգահեռ կատեգորիաների և մասնավորապես նախադասութեան ու դատողութեան յուրահատկութիւնները ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ ի տարբերութիւն տրամաբանութեան, որն ուսումնասիրում է մտածողութեան օրենքները, քերականութիւնն ուսումնասիրում է բառերի քերականական հատկանիշները, բառերի փոփոխութիւնները, բառերի միջոցով կապակցութիւններ կազմելը միտք արտահայտելու նպատակով։

Մասնավորելով մեր խոսքը նախադասութեան ու դատողութեան հարաբերութեան և նախադասութեան յուրահատկութիւնների վերաբերյալ՝ նշենք, որ, նախ, դրանք սերտորեն կապված են միմյանց հետ։ Լեզվից դուրս, առանց լեզվական թաղանթի, դատողութիւն գոյութիւն չունի։ Դատողութիւնն արտահայտվում է հենց նախադասութեան միջոցով, նախադասութեան մեջ։ Նշանակում է նույն օբյեկտը (բառերի այն կապակցութիւնը, որ միտք է արտահայտում) իր տարբեր կողմերով կարող է վերաբերել և՛ քերականութեանը, և՛ տրամաբանութեանը, այլ կերպ՝ բառերի միևնույն կապակցութիւնը, որ քննվում է տրամաբանութեան կողմից որպես դատողութիւն, կարող է քննվել նաև քերականութեան կողմից, որպես նախադասութիւն։ Քերականութեան համար նախադասութեան մեջ կարևոր է մտքի ոչ թե հատկապես ընդհանուր տրամաբանական կողմը, այլ ամենից առաջ կարևոր են մտքի արտահայտման լեզվական կողմը, մտքի ձևավորման լեզվական միջոցները։

Իհարկե, տրամաբանութիւնն էլ քննում է դատողութեան կառուցվածքը։ Սակայն դատողութեան կառուցվածքի քննութիւնը սահմանափակվում է նրանով, որ տրամաբանութիւնը որոշում է նրա ընդամենը երկու անդամները, քանի որ դատողութիւնը, որպես տրամաբանական կատեգորիա, երկու անդամից է կազմված, անկախ այն բանից, թե նրանում քանի բառ կա։ Այդ անդամներն են սուբյեկտը և պրեդիկատը,

յստ որում սրանցից յուրաքանչյուրը կարող է կազմված լինել մեկ բառից կամ մի քանի բառերից: Նշենք նաև, որ տրամաբանությունը չի քննում այդ երկու անդամների կապակցման լեզվական միջոցները: Մինչդեռ նախադասության էությունվածքը քննելիս որոշվում է նյութական իմաստ ունեցող յուրաքանչյուր բառի տեղն ու դերը նախադասության մեջ, այդ բառերի կապակցությունները, վերջիններիս քերականական միջոցները: Բերենք մեկ օրինակ. «Երեք միլիոն աշխատավորներ անհնարին տանջանքներով, իրենց արյունով, մկաններով և ոսկորներով շինեցին տիտանյան Շանգ-Շենգը, հաստախարիսխ հիմքերով և ամեհի վեմերով, խալական Շանգ-Շենգը» (Ավ. Իսահակյան):

Չնայած, որ այս դատողությունը կազմված է շատ բառերից, այնուամենայնիվ տրամաբանությունը նրա մեջ հանաչում է երկու անդամ՝ սուբյեկտ, որն է՝ երեք միլիոն աշխատավորներ, և պրեդիկատ՝ ամենաբին տանջանքներով, իրենց արյունով, մկաններով և ոսկորներով շինեցին տիտանյան Շանգ-Շենգը, հաստախարիսխ հիմքերով և ամեհի վեմերով, խալական Շանգ-Շենգը: Ի՞նչ միջոցներով են կապվում դատողության այդ երկու մասերն իրար հետ՝ դա տրամաբանությանը չի հետաքրքրում:

Մինչդեռ այս նախադասության կառուցվածքը քննելիս նրանում մենք տեսնում ենք 17 անդամ: Քերականությունը քննում է նաև այդ անդամների կապակցման քերականական միջոցները: Կառուցվածքային հիշյալ տարբերությունն ստեղծում է ենթակայի ու ստորոգյալի և սուբյեկտի ու պրեդիկատի միջև նաև ծավալի տարբերություն:

Բացի այս տարբերությունից, ենթական և ստորոգյալը սուբյեկտից և պրեդիկատից տարբերվում են հաճախ նաև իրենց էությունվածք: Դատողության մեջ սուբյեկտը այն առարկայի, երևույթի և այլնի հասկացությունն է, որը դարձնում ենք մեր դատողության օբյեկտը: Իսկ դատողության այդպիսի օբյեկտը, թեև կարող է հաճախ համընկնել ենթակային, այնուամենայնիվ, որպես կանոն, չունի քերականական որոշակի ձև: Այն կարող է արտահայտվել տարբեր խոսքի մա-

սերով, երբեմն էլ թեք հոլովներով, որոշ դեպքերում նույնիսկ բայի դիմադր ձևով: Քննվող կատեգորիաների տարբերության տեսակետից առանձնապես հետաքրքրական է այս վերջին ձևն ունեցող սուբյեկտներով դատողության և նախադասության համեմատությունը:

Դոց. Գ. Բրուտյանը, խոսելով դատողության և նախադասության տարբերության մասին, բերում է հետևյալ օրինակը: «Սրվակը ջարդվեց» նախադասության ենթական բոլոր դեպքերում էլ «սրվակ» բառն է, իսկ ստորոգյալը՝ «ջարդվեց» բառը: Մինչդեռ, նայած տրամաբանական շեշտին, փոխվում է «սրվակը ջարդվեց» դատողության սուբյեկտը և պրեդիկատը: «Սրվակը ջարդվեց» դատողության սուբյեկտը «սրվակ» հասկացությունն է, պրեդիկատը՝ «ջարդվեց» հասկացությունը: «Սրվակը ջարդվեց» դատողության սուբյեկտը «ջարդվեց» հասկացությունն է, պրեդիկատը՝ «սրվակ» հասկացությունը¹:

Տրամաբանական շեշտը, որ կարևոր դեր է կատարում սուբյեկտի և պրեդիկատի որոշման խնդրում, ունի իմացաբանական հիմք, պայմանավորված է նրանով, թե ո՞ր հասկացությունը նախապես կա խոսողի մտածողության մեջ, և ո՞ր հասկացությունն է, որ նորություն է հաղորդում խոսողի մտածողության մեջ նախապես եղած այդ առարկայի մասին և վերագրվում նրա հասկացությանը:

Նախադասության, որպես լեզվական միավորի, էությունը բացահայտող մի այլ արտահայտություն է միևնույն դատողությունը տարբեր լեզուներով և վերջինների յուրահատկությամբ պայմանավորված, տարբեր կառուցմածքի նախադասություններով արտահայտելու փաստը: Մտածողության օրենքները, որոնք տրամաբանության ուսումնասիրության օբյեկտն են, այդ թվում նաև դատողության վերաբերյալ օրենքները, ընդհանուր են, համամարդկային, մինչդեռ յուրաքանչյուր լեզու ունի իր քերականությունը, իր շարահյուսությունը:

1 Գ. Ա. Բրուտյան, Տրամաբանություն, Երևան, 1957, էջ 208:

Նախադասության և դատողության միջև կա մի շատ էական տարբերություն ևս: Դա այն է, որ, ինչպես հայտնի է, քոչոր նախադասությունները չէ, որ դատողություն են: Դատողությունն արտահայտում է հաստատում կամ ժխտում, ավելի կոնկրետ՝ դատողությունը հաստատում և կամ ժխտում է առարկայի՝ որևէ հատկանիշ ունենալը: Սակայն կան շատ նախադասություններ, որոնք ո՛չ այդպիսի հաստատում են արտահայտում, ո՛չ էլ ժխտում, ուրեմն և դատողություններ չեն:

Անմիջականորեն որպես դատողություններ են հանդես գալիս պատմողական նախադասությունները և հարցական ու բացականչական նախադասությունների մի փոքր մասը: Իսկ հրամայական նախադասությունները, հարցական ու բացականչական նախադասությունների մեծ մասը դատողություն չեն: Սա նշանակում է, որ նախադասությունն ավելի մեծ ընդգրկում ունի, քան դատողությունը, տրամաբանության տերմինով ասած, նախադասությունն ավելի լայն հասկացություն է, քան դատողությունը:

Ուրեմն՝ նախադասությունը և դատողությունը իրենց ընդհանրություններով հանդերձ ունեն էական տարբերություններ, դրանք տարբեր կատեգորիաներ են իրենց առանձնահատուկ հատկանիշներով: Գոյություն ունեն նախադասության բազմաթիվ բնորոշումներ, որոնք ըստ պրոֆ. Գր. Ղափանցյանի ավելի քան 20 տարի առաջ կատարած հաշվումների, հասնում են 130-ի¹: Այդ սահմանումները հաճախ իրարից խիստ տարբեր են և նույնիսկ բացառում են իրար, իսկ հաճախ էլ շատ մոտ են և չեն հակադրվում իրար: Նախադասության էության և հիմնական հատկանիշների վերոհիշյալ վեր ուծությունից հետո, կարծում ենք, անհրաժեշտություն չկա կանգ առնելու մերժված, անընդունելի սահմանումների վրա և քննադատել դրանք: Բավականանա՞նք նախադասության նկատմամբ առավել բազմակողմանի մոտեցման հիման վրա տրված երկու սահմանումներ մեջ բերելով:

¹ Պրոֆ. Գր. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, 1, Երևան, 1939, էջ 165:

Ակադեմիկոս Վ. Վինոգրադովը նախադասությունը բնորոշում է նրա կառուցվածքային և այլ կողմերի հաշվառումով: Ճնախադասությունը խոսքի՝ տվյալ լեզվի օրենքներով քերականորեն ձևավորված ամբողջական միավոր է, որը հանդիսանում է մտքի ձևավորման, արտահայտման և հաղորդման գլխավոր միջոցը: Նախադասության մեջ արտահայտվում է ոչ միայն հաղորդում իրականության մասին, այլև տրվում է խոսողի վերաբերմունքը նրա նկատմամբ¹:

Պրոֆ. էդ. Աղայանը նախադասության սահմանման մեջ մտնում է ստորոգման հատկանիշը, որ, իհարկե, կարևոր է: Նա նախադասությունը բնորոշում է հետևյալ կերպ. Ճնախադասությունը քերականական ձևավորումով առարկայի և հատկանիշի ստորոգումն է, որ արտահայտում է ինչպես օբյեկտիվ իրականությունը, այնպես էլ խոսողի վերաբերմունքն այդ իրականության նկատմամբ²:

Այս սահմանումների վերաբերյալ սկզբունքային առարկություն շունենալով հանդերձ, այնուամենայնիվ առաջարկում ենք հետևյալ սահմանումը, որ, մեր կարծիքով, ավելի ճշգրիտ է և ուղղակիորեն է արտահայտում նախադասության բնորոշ հատկանիշները: Նախադասությունը ստորոգումով և ինտոնացիոն ավարտվածությամբ ձևավորված լեզվակառուցվածք է, որով արտահայտվում է միտք իրականության մասին և խոսողի վերաբերմունքը վերջինիս նկատմամբ: Այս սահմանման մեջ, նախ, հաշվի է առնված, որ նախադասությունը մտքի նվազագույն միավոր է: Դա, մեր կարծիքով, նախադասության գիտական սահմանման համար այնքան կարևոր է, որքան որ հնչույթի ու ձևույթի սահմանման մեջ կարևոր է հաշվի առնել և անպայման հաշվի է առնվում դրանց նվազագույն միավոր ինքը, իհարկե, այլ տեսակետներից. մեկը՝ նյութական, մյուսը՝ իմաստային տեսակետից: Բացի դրանից, այստեղ ուղղակիորեն են հաշվի

¹ „Грамматика русского языка“, т. 2, часть 1, изд. АН СССР, Москва, 1954, էջ 650:

² Պրոֆ. է. Բ. Աղայան, *Լեզվաբանության ներածություն*, Երևան, 1952, էջ 383:

առնված նախադասության ձևավորման հիմնական միջոցները՝ թե՛ ստորոգումը և թե՛ ինտոնացիոն ավարտվածությունը, քանի որ հենց դրանցով է նախադասությունը տարբերվում բառերի այնպիսի կապակցությունից, որ թեև ձևավորված է տվյալ լեզվի քերականական օրենքներով, բայց նախադասություն չէ։ Իսկ սահմանման մեջ պետք է նշել հենց այն հատկանիշները, որոնցով տվյալ կատեգորիան հակադրվում է մյուսներին, այդ թվում և ամենամոտ կատեգորիային։

2. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՅՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐԱՐԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԽՈՍՔԻ ՄԵՋ

Վերևում խոսվեց այն մասին, որ նախադասությունը ամփոփ, ավարտված միտք է արտահայտում և այդ պատճառով էլ, որպես կանոն, կարող է գործածվել ինքնուրույն կերպով, տվյալ խոսքից դուրս։ Մտքի ներքին սերտ կապ ունեցող հետևյալ նախադասություններն առանձին-առանձին վերցրած ամբողջական միավորներ են և ամփոփ միտք են արտահայտում։ «Մեծ տիկինը ապաքինվեց հոգեկան ցնցումներից։ Նա աշխույժի եկավ։ Առողջ կազմվածքը, հոգեկան մեծ ուժը նրան վերականգնեցին։ Զոհրակի գալը նրան ուրախացրեւ էր և ոգեշնչել» (ԴՎ, էջ 373)։ Այս նախադասություններից յուրաքանչյուրը կարելի է գործածել խոսքից դուրս, որպես մտքի ինքնուրույն միավոր։

Սակայն խոսքի մեջ նախադասությունների ինքնուրույնությունը բացարձակ չէ, այլ այս կամ այն չափով հարաբերական։ Այլ կերպ լինել չի էլ կարող։ Չէ՛ որ նախադասությունը խոսքի միավոր է, իսկ ամբողջի բաղկացուցիչ մասերը չեն կարող բացարձակ ինքնուրույն լինել։ Խոսքը չի կարող կազմվել միմյանց հետ տրամաբանական կապ չունեցող նախադասությունների գումարից։ Այդ պատճառով էլ խոսքի մեջ նախադասությունը կապված է լինում մյուս և հատկապես կից նախադասությունների հետ, որոնց հետ միասին կազմում է մեկ ամբողջություն։

Տվյալ լեզվի կառուցվածքի ուսումնասիրման համար կարևոր է այդ հարաբերությունների, կապի ուսումնասիրումը, որ մեզանում չի կատարված: Այդպիսի ուսումնասիրությունը մի կողմից կնպաստի նախադասության, որպես մտքի արտահայտման միավորի, ավելի խոր ու լրիվ ճանաչմանը, մյուս կողմից դա մեզ գաղափար կտա խոսքի կառուցվածքի մասին:

Նախադասությունների մտքի կապը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ:

Սովորական է նախադասությունների այնպիսի կապը, երբ նրանցից մեկը կապվում է կից նախադասության հետ, և եթե նախադասությունների քանակը շատ է, վերջինս էլ կապվում է իր կից նախադասության հետ, և այսպես շարունակ: Օրինակ՝ «Հին, վաղ ժամանակներում, պարսկական Շիրազ քաղաքի մեջ, Արտաշիր անունով հարուստ մի իշխան էր կենում:

Շատ հարուստ էր. նա ուներ մեծ հողեր, այգի և տներ, բազմաթիվ ծառա, առատ եկամուտ:

Որդի էլ ուներ: Երեք հատ էին: Երկուսը տղա, երրորդը աղջիկ: Մեկը մյուսից երկու տարով մեծ էր: Աղջիկը ամենափոքրն էր» (ՎՓ, ԾԺ, 4, էջ 516):

Այս հատվածում ամեն մի նախադասություն մտքով սերտորեն կապված է նախորդի հետ, և, առանց նախորդ նախադասության կամ նախորդ նախադասությունների, որոշակի ճշտությամբ չի հասկացվի տվյալ նախադասության միտքը: Այսպես, կազմվում է նախադասությունների մեկ շղթա, որի ամեն մի օղակը անմիջականորեն կապված է նախորդի հետ և նրա անմիջական շարունակությունն է:

Սակայն ոչ միշտ է, որ նախադասությունների կապը այդպես պարզ շղթայի բնույթ է ունենում: Հաճախ է պատահում, որ նախադասությունների այդ շղթան մի պահ ընդհատվում է, մեջտեղ է գալիս մի այնպիսի նախադասություն (կամ նախադասություններ), որ անմիջական կապ չունի նախորդ նախադասությունների հետ: Սակայն ճիշտ կառուցված խոսքերում, ինչպես պարզվում է լսողի կամ ընթերցողի համար, այդպիսի նախադասությունը կամ նախադասություն-

ները մի որևէ տեսակետից լրացնում են խոսքի մեջ դարգացող միտքը, նպաստում նրա հետագա ծավալմանը:

Օրինակ՝ «Նորն աշունքին լոռու սարերով անցկենալիս մի գյուղում մուխը վրա հասավ: Հյուր ընկա Անդրեաս քեռու տանը, որ մի հին ու փորձված հովիվ էր:

Սարերում սովորություն կա, որ տեսան մեկի տունը հյուր եկավ՝ հարեանները կհավաքվեն եկվորի գլխին, կհետաքրքրվեն, հարց ու փորձ կանեն՝ իմանան ինչ կա, ինչ չկա աշխարհքում: Եվ ահա հետզհետե գլուպացիք հավաքվեցին Անդրեաս քեռու օթախը» (Թում., 3, էջ 98):

Այստեղ նախաձեռնողին նախադասությունը չի բխում նախորդից կամ նախորդներից, այն արտահայտում է նոր միտք, որ նախապատրաստում և հասկանալի է դարձնում հաջորդ նախադասության միտքը և այդպիսով նպաստում խոսքի տրամաբանված ու պատճառաբանված՝ զարգացմանը:

Մեկ նախադասությունը կարող է կապվել ոչ միայն կից մեկ նախադասության, այլև հաճախ շատ նախադասությունների հետ միաժամանակ: Բերենք մեկ օրինակ: Ակադ. Ա. Կաթինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» (1956, հատոր 1) աշխատության 214-րդ էջում կարդում ենք.

«Նման հասարակական գործիչը չէր կարող ենթարկվել ոչ մի պարագայում իր հակառակորդների, թեկուզ և շատ ազդեցիկ վաճառականների հրահանգներին կամ թեւադրանքներին»:

Իմանալու համար, թե ով է այդ «նման հասարակական գործիչը», պետք է կարդալ նրան նախորդող ամբողջ մի հատված, որը բաղկացած է մի քանի նախադասություններից: «Շմավոնյանը բավական համառ գործիչ էր: Գիտեր, համեմատյան դեպք, թե ինչ է անհրաժեշտ անել հնդկահայ իրականության մեջ: Գիտուն-կրոնական էր և անկաշառ գործիչ, որ քայլում էր սեփական ուղիներով: Կարող էր ժամանակին համաձայնության գալ մեծահարուստ Շահամիրյանի հետ. որոշ կոմպրոմիսի գնով ձեռք բերել նրա տպարանը, վերջապես նյութական օժանդակություն ստանալ անվանի վաճառ-

ուսկան-նոտարըներից: Բայց նա միանգամայն հակառակ ուղի էր բռնում: Միանգամայն մտածված կերպով որոշում է ստեղծել ինչ-որ նոր հոսանք: Սկզբում կազմակերպում է ապարան ու հրատարակչություն, իսկ հետագայում պարբերական օրգան, բայց դարձյալ չի շեղվում իր հիմնական ու միշտ ինքնուրույն ուղեգծից»:

Այս օրինակը շատ տիպական է նախադասությունների ներքին տրամաբանական. կապն ու պայմանավորվածությունը ցույց տալու համար: Այստեղ խոսքը միայն այն բանին չէ վերաբերում, թե մի շարք նախադասություններով պարզվում է այդ հասարակական գործիչի ով լինելը: Բանն այն է, որ այդ գործիչի բնութագրմանը նվիրված մի քանի նախադասություններն են, որ հասկանալի ու համոզիչ են գարձնում ամբողջ հաջորդ նախադասության միտքը (վերջինս պատճառաբանելու իմաստով), դրանով արտահայտված հեղինակի եզրակացությունը, այն, որ նա ոչ մի պարագայում չէր կարող ենթարկվել հակառակորդների հրահանգներին և այլն:

Խոսքի մեջ նախադասությունների կապը լինում է թե՛ մտքի և թե՛ քերականական տեսակետից: Մտքի տրամաբանական կապը արտահայտվում է շատ բազմազան ձևերով: Կանգ առնենք դրանցից առավել սովորական ու տարածված ձևերի վրա:

Շատ տարածված է նախադասությունների մտքի ժամանակային կապը, որին հաճախ զուգակցվում է նաև պատճառա-հետևանքային կապը կամ հարաբերությունը: Այդ հարաբերությամբ կապված նախադասությունները սովորաբար ոչ թե իրարից կտրված, միմյանց հետ ներքին կապ չունեցող երևույթների հաջորդականություն են ցույց տալիս, այլ ժամանակային հաջորդականություն այնպիսի երևույթների, որոնցից մեկը մյուսի շարունակությունն է, նրա զարգացումը և կամ մեկը ուղղակի կամ անուղղակի կերպով բխում է նախորդից և այլն: Ողպես օրինակ բերենք Գ. Բեսի «Փոստատարը» պատմվածքի առաջին հատվածը, որը բաղկացած է

մի քանի նախադասութիւններից և կարելի է վերցնել պատմութեան զոտն ու դիտել որպէս խոսք:

«Վախճանվեց կայարանամերձ փողբիկ քաղաքից քիչ հեռու գտնվող փողբիկ գյուղի փոստատարը:

Պատանի Իգնատը գյուղի մեծավորներին խնդրեց, որ այդ աշխատանքը հանձնեն իրեն:

Նրա ցանկութիւնն իրականացավ, և նա փոխարինեց կայարանամերձ փողբիկ քաղաքից քիչ հեռու գտնվող փողբիկ գյուղի արդեն վախճանված ծերունի փոստատարին:

Այժմ նա ինքնուրույն մարդ էր, առողջ, հաղթանդամ երիտասարդ, նույնիսկ ավելի գեղեցիկ, քան նրանք, որոնք ծնողների փայփայանք ու քնքշանք են տեսել, տաք սենյակներում են մնացել և միշտ էլ եղել են կուշտ» (Անթ., էջ 338):

Մտքի սերտ կապի մեջ են այս նախադասութիւնները: Այդ կապն արտահայտվում է գործողութեան տրամաբանական զարգացումով. յուրաքանչյուր նախադասութեան արտահայտած միտքը նախորդ նախադասութեան մտքի անմիջական շարունակութիւնն է, նրա հետագա զարգացումը: Դրա հետեւանքով նրանց միջև ստեղծվում է ժամանակային կապ, իսկ վերջին երկու նախադասութիւնների միջև կա նաեւ պատճառական կապ: Այս հատվածի յուրաքանչյուր նախադասութեան միտքը ավելի հասկանալի է գառնում կից նախադասութիւնների հետ կապակցութեան մեջ վերցնելու դեպքում:

Խոսքի մեջ մտնող նախադասութիւնների մտքի կապը կարող է լինել նաեւ այլ բնույթի: Օրինակ, այն հաճախ արտահայտվում է նրանով, որ յուրաքանչյուր նախադասութիւն արտահայտում է երեւոյթի, իրողութեան որեւէ կողմի մասին այս կամ այն միտքը: Եվ այդ նախադասութիւնները, միասին վերցրած, տալիս են տվյալ երեւոյթի ամբողջական բնութագիրը:

Նախադասութիւնների այդպիսի կապակցութիւնը լինում է հատկապէս նկարագրութիւնների ժամանակ: Ահա մեկ սենյակի նկարագրութեան օրինակ. «Դռնից մի երկու քայլ հեռու դրված էին երկու գրապահարան, որոնք լիքն էին շքեղակազմ հին ու նոր գրքերով: Պահարանների դիմաց,

պատի տակ հայելազարդ, սեկեծածկ բազմոցի վրա փռված էր մի նրբահյուս գորգ: Սենյակի վերևում, երկու լուսամուտների մեջտեղ, կաղնյա պատվանդանի վրա դրված էր ռադիո-ընդունիչը: Պատերը զարդարված էին գունավառ գորգերով, որոնց վրա ամրացված ու կախված էին տարբեր մեծության ու գույնի, շրջանակներով ու առանց շրջանակների լուսանկարներ» (ԹՈՀ, էջ 6):

Այստեղ նախադասությունները միմյանցից ներքին կախում՝ պատճառի ու հետևանքի, ժամանակային, նպատակային և այլն, չունեն: Բայց դրանք մտքի կապ ունեն և մեկ ամբողջություն են կազմում: Դրանք միմյանց նկատմամբ հավասարաթեք նախադասություններ են և դրանցով (բոլորը միասին վերցրած) ամբողջանում է սենյակի նկարագրությունը: Ուրեմն այս խոսքի կամ խոսքի այս հատվածի մեջ նախադասությունների միջև մտքի կապ կա այնքանով, որքանով որ այդ բոլոր նախադասությունները մեկ նպատակի են հանգում, ամբողջացնում տվյալ նկարագրությունը:

Շատ տարածված է նկարագրական բնույթի խոսքի մեջ նախադասությունների մտքի այնպիսի կապը, երբ նախադասություններից մեկը (սովորաբար առաջինը, երբեմն և վերջինը) ընդհանուր կամ ընդհանրացնող միտք է արտահայտում, իսկ մյուս նախադասությունները մտքով բխում են նրանից, մասնավորում այն:

Այսպես, «Հայ ժողովրդի պատմություն» ձեռնարկի (առաջին մաս) «Հայկական լեռնաշխարհը» գլխի «Կլիման» վերնագրի տակ շարադրված է հետևյալը. «Հայկական լեռնաշխարհը, շրջապատված լինելով բարձր լեռնաշղթաներով, ծովերից քիչ խոնավություն է ստանում: Հատկապես Միջնաշխարհը ցամաքային կլիմա ունի՝ ձմեռը ցուրտ է, ամառը՝ շոգ ու չոր, բայց առանձին վայրերում կլիման բարեխառն է: Աչքի է ընկնում այն խիստ տարբերությունը, որ գոյություն ունի ցածրադիր դաշտավայրերի և նրանց հարևան բարձր լեռների կլիմայական պայմանների միջև: Անձրևներ գալիս են սովորաբար գարնանը և նպաստում լեռների ու դաշտերի ճոխ բուսականության աճմանը: Արարատյան դաշտը ունի

չոր, ցամաքային կլիմա: Երևանում, որը շուրջ 1000 մետր բարձր է ծովի մակերևույթից, միջին ջերմությունը լինում է հունվարին 6,4 աստ., իսկ հուլիսին 25 աստիճան» (էջ 4—5):

Նախադասությունների այս շարքը հանդիսանում է վերոհիշյալ դասագրքում Հայաստանի կլիմայի ամբողջական նկարագիրը և մի խոսք կարող է համարվել առանձին վերցրնելու դեպքում: Նկարագրական բնույթ ունեն և՛ ամբողջ խոսքը, և՛ յուրաքանչյուր նախադասություն առանձին վերցրած: Այստեղ առաջին նախադասությունն ընդհանուր միտք է արտահայտում, իսկ մյուսները մեկնաբանում են այն: Ավելին, այդ նախադասությունների ցույց տված երևույթները կախման մեջ են առաջին նախադասությամբ ցույց տրված փաստից, իրողությունից, բխում են նրանից: Այդ բոլոր մասնավոր երևույթների պատճառն այն է, որ «հայկական լեռնաշխարհը շրջապատված լինելով բարձր լեռնաշղթաներով, ծովերից քիչ խոնավություն է ստանում»: Քննարկվող խոսքի վերջին նախադասությունը, բացի առաջին նախադասությունից ունեցած տրամաբանական կախումից, ինչպես որ մյուս նախադասություններն էին, միաժամանակ իր նախորդ նախադասության հետ մի այլ տեսակի կապի մեջ է, այն է՝ հանդիսանում է նրա մտքի մասնավորումը. չէ՞ որ Երևանի կլիման այն դաշտավայրի (Արարատյան) կլիմայի մի մասնավոր տեղի դրսևորումն է, որտեղ գտնվում է ինքը՝ Երևանը:

Այդ օրինակից երևում է, որ նույնիսկ ոչ ծավալուն խոսքի մեջ նախադասությունների կապը այնքան էլ պարզ, միօրինակ չի լինում, այլ բարդ, բազմազան: Հաճախ միևնույն նախադասությունը մտքի տարբեր կապերի մեջ կարող է մտնել տարբեր նախադասությունների հետ:

Բերենք մեկ օրինակ ևս:

«Մեր գյուղը լեռան թեք լանջին է տեղավորված և ոչ մի կտոր հարթ տեղ չունի: Տուն շինելիս լանջը բահով-քլունգով կտրտում էինք, հովասարեցնում և տան թիկունքի պատը շարում այդ կտրվածքն ի վեր: Այսպիսով, առաջի կողմից տունը բաց էր, պատը բարձր, իսկ հետևի կողմից, պատ չէր

երեւում և կտուրի պռունկը հավասարեցված էր լանջին: Այնպես որ, եթե անծանոթ մարդը մեր գյուղի վերին լանջից ցած իջներ, չէր հասկանա, որ իր առաջ տուն կա» (ՎԱ, ԼԿ, էջ 43): Մի գյուղի արտաքին նկարագրություն հանդիսացող այս հատվածը բաղկացած է չորս նախադասությունից, որոնցից առաջինը ընդհանուր միտք է արտահայտում մյուսների համեմատ: Նա գյուղի տեսքի, դիրքի ընդհանուր հատկանիշն է նշում, իսկ մյուս նախադասություններով արտահայտվում են ավելի մասնավոր հատկանիշներ: Վերջիններս բխում են առաջին նախադասությամբ ցույց տրված հատկանիշից (գյուղի ընդհանուր դիրքից), պայմանավորված են նրանով: Բացի դրանից, մասնավոր հատկանիշներ ցույց տվող վերջին երեք նախադասություններից յուրաքանչյուրը մտքով սերտորեն կապված է նախորդի հետ, պայմանավորված է նրանով:

Սրանցով չեն սպառվում խոսք կազմող նախադասությունների մտքի կապի ձևերը: Բայց այդ ձևերից կարևորների ու համեմատաբար առաջի տարածվածների քննարկումը ցույց է տալիս, որ իսկապես նախադասությունը ոտքան էլ ամփոփ, ավարտված միտք արտահայտի, այնուամենայնիվ խոսքի մեջ նրա ինքնուրույնությունը հարաբերական է, որքանով որ ամեն մի նախադասություն մտքով սերտորեն կապված է նույն խոսքը կազմող մյուս նախադասությունների հետ:

Խոսքի մեջ նախադասությունների փոխհարաբերությունն այժմ քննենք նրանց քերականական կապի տեսակետից:

Նախապես նշենք, որ խոսքի մեջ մտնող նախադասությունների միջև քերականական կապն այնքան յայտրեն տարածված չէ, ինչպես որ մտքի կապը: Մտքի կապը առկա է բոլոր խոսքերի կազմի մեջ մտնող նախադասությունների միջև: Մինչդեռ ոչ միշտ է, որ մտքի այդ կապն արտահայտվում է քերականական միջոցներով: Խոսք կազմող նախադասությունների քերականական կապը դրսևորվում է հատկապես այն ժամանակ, երբ նախադասությունների մտքի կապը շատ սերտ է: Բայց նույնիսկ այդպիսի դեպքերում կապի քերականական դրսևորումը խիստ պարտադիր չէ:

Այդ տեսակետից քննենք, օրինակ, վերևում բերված հատվածի վերջին երկու նախադասությունների հարաբերությունը: Այդ նախադասություններն են. «...Առաջի կողմից տունը բաց էր, պատը բարձր, իսկ հետևի կողմից պատ չէր երևում և կտուրի պուտնկը հավասարեցված էր լանջին: Այնպես որ, եթե անծանոթ մարդը մեր գլուղի վերին լանջից ցած իջներ, չէր հասկանա, որ իր առջև տուն կա»: Այս երկու նախադասություններից երկրորդը առաջինի հետ կապված է մտքով, ինչպես տեսանք վերևում, և քերականորեն՝ հանձին այնպես որ շաղկապի:

Բայց կարող էր նաև այդ շաղկապը չգործածվել, և, միևնույն է, չէր խախտվի այդ նախադասությունների մտքի կապը: Այսպես. «Առաջի կողմից տունը բաց էր, պատը ցածր, իսկ հետևի կողմից պատ չէր երևում և կտուրի պուտնկը հավասարեցված էր լանջին: Եթե անծանոթ մարդը մեր գլուղի վերին լանջից ցած իջներ, չէր հասկանա, որ իր առջև տուն կա»: Այս փոփոխությունից հետո ևս նախադասությունների կապը կա, պահպանվում է, բայց նկատելի է, որ այդ կապը առաջին տարբերակում ավելի որոշակի է, քան վերափոխված, վերջին օրինակում: Այդ նշանակում է, որ նախադասությունների մտքի կապի քերականական դրսևորումը հաճախ անհրաժեշտ է միտքն ավելի դիպուկ արտահայտելու, խոսքն ավելի ճշգրիտ կառուցելու նպատակով:

Այդ կապերի քերականական դրսևորումը հաճախ կախված է հեղինակի, խոսողի ոճից: Սովորաբար այդ կապը գիտական խոսքի մեջ արտահայտվում է մաքսիմալ հնարավորության սահմաններում, քանի որ գիտական խոսքը առավել ճշգրտություն է պահանջում: Գեղարվեստական գրականության մեջ ևս այս հարցում լինում են տարբերություններ: Որքան գեղարվեստական խոսքը մոտ է ժողովրդախոսակցականին, այնքան ինքնուրույն նախադասությունների քերականական կապի դրսևորման միջոցներ քիչ են գործածվում նրանում: Հայտնի է, որ Հ. Թումանյանի լեզուն ժողովրդայնության տեսակետից չգերազանցված է: Եվ հենց Հ. Թումանյանի մոտ էլ քննարկվող քերականական միջոցները շատ քիչ

կն գործածվում: Օրինակ՝ «Գյուղացի Համբոյի տունը կոխվ էր ընկել: Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի գործի տա, որ մարդ դառնա, աշխատանք անի: Կինը չէր համաձայնում» (Թում., 3, էջ 35): Այս նախադասություններից վերջինը նախորդի հետ հակադրության հարաբերության մեջ է, իսկ առաջին նախադասությունը մյուսների հետ պատճառահետևանքային հարաբերություն ունի: Սակայն այդ հարաբերություններից ոչ մեկն էլ քերականական միջոցներով արտահայտված չէ:

Նախադասությունների քերականական կապը կարող է դրսևորվել տարբեր միջոցներով ու եղանակներով, այն է՝ դերանուններով, նախադասության անդամների բացթողումով կամ զեղչումով, շաղկապներով և այլ բառերով:

Նախ, շաղկապների դերի մասին այդ հարցում: Խոսքի մեջ նախադասությունների հարաբերություններ արտահայտում են ոչ բոլոր շաղկապները: Այդ նպատակով կարող են գործածվել հատկապես համադասական շաղկապները:

Համադասական շաղկապներից այս ֆունկցիայում առանձնապես ակտիվորեն հանդես են գալիս հակադրության հարաբերության իմաստ արտահայտող շաղկապները՝ բայց, սակայն, իսկ, մինչդեռ:

Օրինակ. «Կամրջակը տակավին դողում էր նրա խոշոր, փռեթաթավ սապոգների տակ: Բայց նա անվարան անցավ մյուս ափը և շոֆերին բեռը թափելու տեղ մատնանշեց» (Անթ., էջ 500): «Նա միանգամայն գոհ էր, որ ոչ ոք և ոչինչ չէր խանգարում իր հանգիստը: Իսկ նրա հանգիստը այն էր, որ ամբողջ օրը կամ չափում էր տաք սենյակի մի ծայրից մյուսը, կամ կարդում էր մաղձով լի հոռետես փրիստփայությունների երկերը...: Մինչդեռ այդ ժամանակներում էր, որ Թուրքահայաստանում հանկարծ երևան եկած շարժումները խլրտում էին ձգել հասարակության մեջ» (ՆՐ, 3, էջ 263): «Սարոյանը ակնարկով հասկացրեց Վահանին, որ կարիք չկա առաջ գնա: Սակայն Մարգարիտը, որն ուղղամիտ և համարձակ աղջիկ էր, արհամարհանքով ժպտաց և ուսերը թոթվելով ասաց» (ԹՈՀ, էջ 138):

Այս հարցում կարևոր դեր ունեն նաև միավորիչ շաղկապները:

Օրինակ՝ «Առավոտից մինչև առավոտ և երեկոյից մինչև երեկո այնտեղից լսվում էր անհոգ ծիծաղի զվարթ կարկաչը և անուրջների կապույտ առագաստների ծփանքը՝ արտաբուխ երգերի ոսկե ալիւնների հետ: Եվ մի օր բացվեց դղյակի դուռը, դուրս ելավ մի պատանի՝ սպառազեն մրդաբաշ ձիու վրա» (Իս., էջ 373): «Ձեռքը խփեց սեղանին Շավարշը—Հողը դողաց: Խփեց ու խմեց: Մոռալ, Ու ոչ մի բառ չասեց» (ԵՁ, Ընտ., երկ., 55, 123):

Պետք է նշել նաև շաղկապների, շաղկապական և այլ բառերի միջոցով անպիսի ինքնուրույն նախադասությունների կազմերը, որոնցից մեկը (կամ մի քանիսը) մյուսի (կամ մյուսների) մտքի մասնավորումը կամ ընդհանրացումն է: Ինչպես վերևում ասվեց, այս հարաբերությունը կարող է նաև քերականոտն չդրսևորվել, այլ հասկացվել կոնկրետ խոսքից, բայց այն հաճախ արտահայտվում է հիշյա բառերով:

Երբ խոսքի տրամաբանական զարգացումը զնում է ընդհանուրից դեպի մասնավորը, հարաբերությունն արտահայտվում է հետևյալ բառերով ու բառակապակցություններով. այստես, օրինակ, աւսանս օրինակ և այլն:

Օրինակ՝ «Միենույն բառը այս համայնքում ուղիղ է այս ձևով, մի ուրիշ համայնքում մի այլ ձևով, հակառակը սխալ է: Այսպես՝ Երևանի բարբառում ուղիղ և մաքուր է փութ ձևը, Թբիլիսիի բարբառում՝ փութը» (ԱՃ., ԼՔՆ, էջ 357): «Լեզվի պահպանողականությունը, հաճախ հետամնաց ու սխալ ըմբռնողությունը, կարելի է տեսնել ոչ միայն հասարակ առարկաների, այլև գիտության զանազան ճյուղերում: Այսպես, օրինակ, շարունակում ենք ասել շնչերակ՝ համաձայն այն հին կարծիքի, թե շունչը այդ երակումն է բնակվում» (ԱՃ., ԼՔՆ, էջ 113): «Այդ շփումների հետևանքով հայոց լեզուն յուրացնում է և դեռ այսօր էլ պահպանում է միայն որոշ բառեր: Օրինակ. հունարենից փոխառյալ բառերը, որոնք մեծ մասամբ անցել են գրքային ճանապարհով...» (Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, էջ 101):

Մասնավորից դեպի ընդհանուրի հարաբերությունը արտահայտվում է հետևաբար, այսպիսով, այսպես ուրեմն, այդպես ուրեմն և այլ բառերով ու բառակապակցություններով:

Օրինակ՝ ուսներեն «спасибо» թեև ստուգաբանորեն նշանակում է «աստված քեզ փրկի», բայց այժմյան իմաստով նշանակում է. «շնորհակալություն». այսպես և մյուս օրինակները: Հետևաբար, լեզվի պահպանողականությունը չի կարելի դիտել որպես լեզվի զարգացման բացառում» (ԱՃ., ԼՔն, էջ 114):

«Վերջապես նրա (Հր. Աճառյանի—Ս. Ա.) բարբառագիտական հետազոտությունների արգասիքն էն բազմաթիվ բարբառների մենագրական ուսումնասիրությունները ...Բացառիկ բարեխղճությամբ, մանրամասնությամբ ու բազմալուծմանի տառմաստներով այդ բարբառները, Աճառյանը ոչ միայն գիտական անգնահատելի ավանդ է մտցրել հայ բարբառագիտության մեջ, այլև ստեղծել է բարբառների ուսումնասիրության գիտական եղանակ ու տրադիցիա, որին հետևում են ժամանակակից հայ բարբառագետները: Այսպիսով, Հրաչյա Աճառյանը հիմնադիրն է հայ բարբառագիտության, որպես գիտական ճյուղի, և նրա մեծավաստակ մշակը» (Էդ. Աղաջան):

Քննարկվող ֆունկցիան կատարելիս շաղկապները սովորաբար դրվում են իրար կապվող, հարաբերվող նախադասություններից երկրորդի սկզբում: Դա եւուում է հենց վերոհիշյալ օրինակներից: Սակայն առանձին դեպքերում շաղկապը կամ շաղկապական բառը կարող է գործածվել հաջորդ նախադասության ոչ թե սկզբում, այլ մեջտեղում: Այսպես կարող են գործածվել հատկապես սակայն, ուրեմն, այսպիսով բառերը:

Օրինակ՝ «Ամեն մեկը մի ահագին կաղնի ծառ պոկած՝ զոքքերին այնպես են սրբում պատերազմի դաշտում, ինչպես մենք սրբում ենք մեր կալերը ցախավելով: Ինչ խեք կլինի ուրեմն ձեր կողմից գնալ և այդ դեերի ճանկն ընկնել» (Աղ., ԸՆ, էջ 348): «Սրանք աշխարհաբարի հարազատ անքակ-

տելի տարրն են, ծնողից ծնունդին անցած բնածին հատկանիշը, սրովհետև աշխարհաբարը, իբրև գրաբարի ու բարբառի ծնունդ, այլ բան չէր կարող լինել, քան իր ծնողների մասից ու արյունից... Գրաբարյան փոփոխությունն ասելով, այսպիսով, մենք նկատի ունենք... այն գրաբարյան բառերը, որոնք իրենց ստուգաբանությամբ կամ ձևաբանությամբ կապված են գրաբարի ձևաբանության ու բառակազմության օրենքների հետ և իրենք իսկ ակնարկում են իրենց գրաբարյան լինելը...» (ԳՍ, ԺՀԴ, էջ 124—125):

Քերականությունը (ձևաբանությունը, շարահյուսությունը) բառերի փոփոխության և նախադասությունների մեջ բառերի կապակցության կանոնների ժողովածուն է: Այդ կանոնները, սակայն, քերականությունը տալիս է ընդհանուր արստրահված կերպով» (ԷԲԱ, ԼՆ, էջ 41):

Կապվող նախադասության սկզբում չեն գործածվում նաև, ևս, էլ շաղկապները:

Օրինակ՝ «Նախարարները որոշեցին համատեղ դուրս գալ Պարսկաստանի դեմ, հատուկ ծրագիր մշակեցին, վճռեցին համախմբել իրենց ուժերը և երդվեցին կռվել մինչև վերջը... Ապստամբության հաջողության երաշխիքներից մեկն էլ հայերի, վրացիների և աղվանների համատեղ գործակցությունն էր, որի համար դարավոր բարեկամական կապերն ավելի ամրապնդվեցին: Բանակցություններ սկսվեցին նաև հոների հետ, որոնք նույնպես օգնություն խոստացան» (ՀԺՊ, 1, էջ 132):

Առանձին նախադասություններ կապելիս հիշյալ շաղկապներն այդ կապն արտահայտում են հիմնականում նրանց որոշ անդամների կամ որևէ մասի և մյուս նախադասության համապատասխան մասի միջոցով: Այս օրինակի առաջին նախադասության մեջ արտահայտված՝ նախարարների համատեղ դուրս գալուն երկրորդ նախադասության մեջ ավելանում է հայերի, վրացիների և աղվանների համագործակցությունը, երրորդ նախադասությունում ավելանում է բանակցությունը հոների հետ:

Խոսքի մեջ մտնող նախադասությունների կապը արտահայտվում է նաև այլ շաղկապներով, որոնց բոլորի վրա կանգ առնելու անհրաժեշտություն չկա: Բերված օրինակներն էլ բավական են այդ խնդրում շաղկապների դերը ցույց տալու համար:

Մեծ է դերանունների դերը այս խնդրում: Խոսքը վերաբերում է հատկապես ցուցական, երրորդ դեմքի անձնական, որոշյալ դերանուններին: Ընդհանուր, շտաբերակված իմաստ ունենալով՝ դերանունները խոսքի մեջ իմաստով հաճախ կապվում են այլ բառերի հետ, որոնցով և որոշվում է դերանվան ցույց տված կամ ակնարկված առարկան, հատկանիշը՝ տարբերակված իմաստով: Եվ երբ դերանունն ու դերանունով ցույց տրված առարկայի, հատկանիշի անունները գործածվում են տարբեր նախադասությունների մեջ, բնականաբար այդպիսի նախադասությունների միջև դերանվան միջոցով ստեղծվում է մտքի սերտ կապ:

Օրինակ՝ «Հայաստանի Կոմունիստական պարտիայի դեկավարությանը կատարված աշխատանքի շնորհիվ, կոռուպցիան գյուղում գնալով ծավալվում և աստիճանաբար ամրապնդվում էր: Նրա ձևերն էին կաթնատնտեսական արտելը, այգեգործական, մեղվաբուծական, ծխախոտագործական, բամբակագործական, շերամապահական ընկերությունները և այլն: Դրանք գյուղատնտեսական կոռուպցիայի պարզ ձևվերն էին» (ՀԺՊ, 3, էջ 96):

«Մեծ աշխատանք է կատարվել տեղական նշանակություն ունեցող ոռոգման սիստեմի, ավելի փոքր ջրանցքների և առուների վերականգնման ուղղությամբ: Այդ բոլորի շնորհիվ զգալի չափով ավելացել էր ոռոգելի հողերի տարածությունը» (ն. տ., էջ 9):

«Ամեն ինչ փոխվում էր, բացի Մուկուչից: Տասը տարի էր, ինչ նա պահապան էր կաշվի գործարանում» (Անթ., էջ 16):

Հաճախ նման դեպքերում դերանվան հետ միասին գործածվում է նաև մի այլ խոսքի մասի պատկանող բառ և նա-

խաղասությունների կապն արտահայտվում է դերանվան ու այդ բառի կապակցության միջոցով:

Օրինակ՝ «Կառավարության որոշմամբ 1923 թ. Երևանում հիմնադրվում է ռեսպուբլիկայում առաջին գիտահետազոտական առողջապահական հիմնարկը...: Նույն թվականին Ծաղկաձորում կառուցվելովում է հանգստյան տուն» (ՀԺՊ, 3, էջ 104): «1919 թ. Հայաստանում մնացել էր միայն 166 դպրոց 18.000 աշակերտով: Այդ դպրոցներն գտնվում էին ծայրահեղ քայքայված վիճակում» (ն. տ., էջ 111): «Պատանի կոմունարի կազմակերպությունը) 1922 թվականից վերափոխվեց Պիոներական կազմակերպության: Այդ կազմակերպությունն սկսում է մեծ դեր կատարել պատանեկության մեջ» (ն. տ., էջ 172):

Նախադասությունների միջև եղած կապի այսպիսի դրսևորման մեջ կա մեկ ուրիշ կողմ ևս, որը նույնպես ուշադրության արժանի է: Այն գոյականը, որի վրա դրվում է դերանունը, մեծ մասամբ գործածված է լինում նախորդ նախադասության մեջ: Այդ դեպքում, այդպիսով, երկու նախադասությունների կապը արտահայտվում է ոչ միայն դերանվան միջոցով, այլ և նախորդ նախադասության մեջ գործածված ու հասոցորդի մեջ կրկնված գոյականով:

Նշված տիպի կապը նախադասությունների միջև արտահայտվում է հախ ալ բառերով, ոտնո ալնարկում են նախորդ, երբեմն էլ հաջորդ նախադասության մեջ եղող բառը (իհարկե, դրանով իսկ նրա ցույց տված առարկան), կամ ամբողջ նախադասությամբ արտահայտված երևույթը, իրողությունը: Այդպիսի բառեր են՝ ահա, ահավասիկ, վերջինս, վերոհիշյալ, հետևաբար, և այլն: Թվարկված և նման բառերն իրենց այդ ֆունկցիայով կարող են գործածվել միայնակ կամ այլ բառերի հետ կապակցված:

Օրինակ՝ «441 թ. պարսիկ մարզպանը ետ կանչվեց Հայաստանից, և նրա փոխարեն մարզպան նշանակվեց Վասակ Սյունին: Վերջինս մինչ այդ վարում էր Կովկասյան մարզերի գորահրամանատարի և Վրաստանի մարզպանի պաշտոնը:

(ՀԺՊ, 3, էջ 129): «Պարոն Հովիհի ներկայացուցչի հետ վահանի բանակցությունները վախճանի էին մոտենում, երբ տիկին Հովիհից իր ամուսնու մահը գուժող հեռագիր ստացվեց: Դրան հետևեց Արևմտյան Հայաստանի ողբերգությունը: Ահա թե ինչից էր վախենում քո պոլսեցի հյուրը» (ԱՄՄ, էջ 378):

Տարբեր նախադասությունների միջև կապ են ստեղծում ոչ միայն ցուցական կամ հղումի իմաստ ունեցող բառերը, այլև շատ գոյականներ, թվականներ (հատկապես դասականները), շատ ածականներ: Նշված բառերի օգնությամբ նախադասությունների միջև կապ ստեղծվում է հետևյալ ձևով, հրանց գործածության հետևյալ պարագաներում:

Գոյականներով այդ կապն արտահայտվում է այն դեպքում, երբ մեկ կամ մի քանի նախադասությունների միտքը, դրանց միջոցով ներկայացվածը հաջորդ նախադասության մեջ արտահայտվում է որևէ գոյականով: Նման դեպքում գոյականի հետ կարող է գործածվել որևէ այլ բառ (ածական, դերանուն և այլն):

Օրինակ՝ «Մշակը» ամեն ձևով, երբեմն իբրև բաց թշնամի, երբեմն իբրև կեղծ բարեկամ գրեց և շարունակում է գրել ու հաղորդել գրական ֆոնդի դեմ: Ճգնում է, որ դպրոցական պրական մեծ տոնին գրական ֆոնդը ոչինչ չստանա: Ասում է դա կիսանգարի դպրոցական ֆոնդին, թեև միևնույն ժամանակ դեռ շարունակում է փող հավաքել իրեն, «Մշակի» ֆոնդի համար: Երևի նա մտածում է, թե հայոց գրականությունը մի «Մշակ» չարժի կամ հայոց գրողները «Մշակի» խմբագիրներին ու աշխատակիցների չափ արժեք չունեն հայ ժողովրդի համար:

Իր վատ նպատակին հասնելու համար, գրական ֆոնդին վնասելու համար, նա, «Մշակը» դուրս հանեց և շարունակում է դուրս հանել իր «Շ»-երը» (Թում., 4, էջ 271):

Վերջին նախադասության մեջ նպատակ բառով ամփոփված, արտահայտված է նախորդ հատվածի մի քանի նախադասություններով արտահայտված մտքի էությունը:

Ահկ ալ օրինակ՝ «Մեր գրողներից ոմանք դիմում են ինձ և խնդրում են պաշտպանել իրենց գրական սեփականությունները, իրավունքն ու շահերը դասագրքեր, ժողովածուներ կազմողների, հրատարակչական մարմինների և պարբերական հրատարակությունների դեմ: Խնդիրը լուրջ է և հասունացած, ժամանակն է, որ վճռվի մի ձևով» (Թում., 4, էջ 282):

Ասվեց, որ նախադասությունների կայքը կարող է արտահայտվել նաև թվականներով, հատկապես դասական թվականներով, որոնք նման դեպքում գործածվում են թվարկման նշանակությամբ:

Օրինակ՝ «Դասակարգերի ժարգոնները պետք չէ շփոթել բարբառների հետ: Առաջինները պատկանում են շահագործող դասակարգերի վերնախավերին... Նրանք չունեն որոշ բանակով յուրահատուկ բառեր և արտահայտություններ... Երկրորդները պատկանում են ժողովրդական մասսաներին և տարբերվում իրարից և համաժողովրդական ընդհանուր լեզվից թե՛ բառարանով և թե՛ քերականությամբ» (ԱՃ., ԼՔՆ, էջ 143):

Պատահում է նաև, որ այդ նույն նպատակի համար փոխանակ թվականը գործածվելու գոյականաբար, այն գործածվում է իր սովորական կիրառությամբ (ոչ գոյականաբար), ըստ որում հաճախ ուրիշ բառի, հատկապես գոյականի հետ կապակցված:

Օրինակ՝ «Այսպիսով, հաստատվում է ուրեմն, թե 1) բազմալեզու անձանց մոտ ամեն մի լեզու առանձին տեղ ունի և մյուսների ազդեցության ենթակա չէ, 2) լեզուների խառնուրդ գոյություն չունի, 3) եթե երկու լեզուներից մեկն ու մեկը տեղի տալիս կամ ջնջվում է, դա արդյունք է հասարակական պայմանների: Առաջին երկու եզրակացությունները փաստորեն ցուցադրվեցին Ռոնժա լեզվաբանի որդու օրինակով և նրա ուսումնասիրությամբ: Երկրորդ եզրակացությամբ համար էլ կա մի ուրիշ շատ հասարակ ու շոշափելի օրինակ» (ԱՃ., ԼՔՆ, էջ 421):

Նախադասությունները կարող են կապվել նաև թվարկման կամ նման իմաստ ունեցող այլ բառերով ու բառակապակցություններով:

Օրինակ՝ «Մարդկային լեզվի այս նախնական շրջանի համար շունենք շոշափելի տվյալներ, ուստի պիտի անենք միայն ենթադրություններ»:

Մի կողմից ունենք կենդանիների լեզուն. կատուն մշավում է, շունը հաչում է, գայլը ոռնում է, առյուծը՝ մռնչում, թռչունը՝ ծլվլում, կոպը՝ բառաչում...

Մյուս կողմից ծանոթ ենք մարդկային ցեղերի մեջ ամենաբիշ զարգացած, անգիր, մինչև անգամ քարե դարի շրջանում ապրող ցեղեր (Ավստրալիայի բնիկները)» (ԱՃ., ԷՔՆ, էջ 76):

«Ձնայելով, որ ճոթեղենի երկու խանութի միայն կար գուլական հրապարակում, բայց Կիրակոսենց Գալոյինն անհամեմատ ավելի լավ էր»:

Նախ, որ Սարոյենց Թորոսի խանութի նման «ջհուղի բազար» չէր, այսինքն, ամեն ինչ միմյանց կողքի և իրար վրա լցրած, մի նեղ ու ցածրիկ ծակ...

Բացի դրանից խանութի առջև գտնվող հովանոցաձև պատշգամբ ավելի լայն էր, գետնին ավազ փռած, սյուները հարթ գունավորված, իսկ դռան կողքին Գալոյի տղան խնամքով շինել էր մի երկար նստարան, վրան խոտով ու կտավով օթոց կապած» (ՎՓ, ԵԺ, 4, էջ 234): «Ժամանակակից հայերենը հին հայերենից (գրաբարից) ժառանգել է բառային հիմնական ֆոնդի և քերականական կառուցվածքի հիմքերը...

Դրանք են, նախ, բառային հիմնական ֆոնդից այնպիսի տարրեր, ինչպես, օրինակ, հայր, մայր, քույր, եղբայր...

Այնուհետև՝ քերականական կառուցվածքից, օրինակ, «րոշ ժամանակաձևեր (կարդամ, գրեմ... կարդայի, գրեի), էական կամ օժանդակ բայեր...» (Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, 1955, էջ 5—6):

Երբեմն վերոհիշյալ նպատակով գործածվում է մյուս կողմից բառակապակցությունը, առանց նախապես մի կողմից բառակապակցության գործածության: Օրինակ՝ «Թեհրա-

նի կառավարությունը մտածում է դիմել ուսաց դեսպանատան և խնդրել միջամտություն՝ Թավրիզի խռովությունների հանդարտեցնելու, սակայն ուսական դեսպանությունը կըտրական կերպով պահանջ է դնում նույնը, ինչ որ ժողովուրդը, ջնջել անգլիական ընկերության տված արտոնությունը: Մյուս կողմից անգլիական դեսպանությունը պնդում է իր պայմանագրության վրա՝ տուգանքի սպառնալիքը մեջտեղ բերելով» (ՎՓ, նժ, 4, էջ 40):

Նախադասությունների քերականական կապի ամենատարածված ձևերից մեկը հետևյալն է: Նախադասություններից մեկում կամ մի քանիսում բաց է թողնվում այս կամ այն անդամը, որը գործածված է լինում մեկ այլ, մեծ մասամբ՝ նախորդող նախադասության մեջ և բնականաբար այդպիսի նախադասության (որի անդամը բաց է թողնված) միտքը լրիվ հասկանալու համար անհրաժեշտ է նկատի ունենալ նաև մյուս նախադասությունը, այսինքն վերցնել մյուսի հետ կապակցության մեջ: Այսպես, «Եկեք ստուգենք, ընկերներ: Ո՞վ է ուզում Ստեփան Շահումյանի նկուղներն ստուգենք» (Անթ., էջ 444): Այստեղ առաջին նախադասության ներգործական բայը շունի ուղիղ խնդիր: Այդ պատճառով նախադասության մտքի մեջ զգացվում է բացը՝ ի՞նչը ստուգել: Եվ դա պարզվում է հաջորդ նախադասությունից, որի մեջ գործածված է ուղիղ խնդիրը (նկուղները) նույն խնդրառու բայի (ստուգել) հետ:

Բերենք մեկ օրինակ ևս:

«—Կարդո՞ւմ է՞իր «Ալեքսանդր Մակեդոնացու վարքը»:

—Կարդում էի,—հասկացավ Պատանյակը:

—Մակիսս Սկևռլայի մասի՞ն:

—Կարդացել եմ: Պլուտարքոսը, Կասիոս Դիոնը, ապա հունական Քսենոֆոնը, Հոմերոսը:

—Կրկնո՞ւմ էիր, թե մի անգամ կարգավով, շարտում մի կողմ:

—Կարդում եմ շարունակ, հայր, միամիտ կաց» (ԴԴ, 6, էջ 147):

Կարող է բաց թողնվել հատկացուցիչը: «Ինչպես այստեղ հայտնի է դարձել, դրականորեն է լուծվել Թունիսի պրեզիդենտ Հաբիբա Բուրգիբայի և Մառոկկոյի քազավուր Մոհամեդ Ե-րդի առաջիկա հանդիպման հարցը: Հանդիպումը նշանակված է Ռաբաթում՝ նոյեմբերի 21-ին (ՍՀ, 19. 11. 1957): Այս օրինակի երկրորդ նախադասության մեջ ենթակայի հատկացուցիչը նույն նախադասության մեջ չկա (ո՞ւմ հանդիպումը). այդ իմացվում է առաջին նախադասությունից:

Նախադասությունների կապը կարող է արտահայտվել նաև որոշիչի, ինչպես և այլ անդամների բացթողումների միջոցով: «Այս հատորում տեղավորված են Հովհ. Թումանյանի նամակները՝ սկսած 1885 թ. մինչև 1922 թ.: Հատուրում տեղ են գտել մինչև այժմ ձեռք բերված բոլոր նամակները» (Թում., 5, էջ 5): Այստեղ էլ երկրորդ նախադասության մեջ հատուրում բառը շունի որոշիչ, որը պարզվում է առաջին նախադասությունից:

Հնարավոր է նաև, որ նախադասության որևէ անդամը չի արտահայտված և չի էլ գործածված կից նախադասություններում, այլ հասկացվում, ենթադրվում է խոսքից: Օրինակ՝ «Իրոք, կենդանիները լեզու ունեն, թե ոչ: Մեր պատասխանը բացասական է» (ԻՐԱ, ԼՆ, էջ 34): Վերջին նախադասության մեջ բաց է թողնված «այս հարցին» խնդիրը, որը հասկացվում է նախորդ նախադասության՝ հարցական լինելուց, հարցում արտահայտելուց:

Խոսքի մեջ մտնող նախադասությունների քերականական կապը հաճախ արտահայտվում է նաև ենթակայի ղեղչման միջոցով: Օրինակ՝ «Հաջորդ գարնանը մեր առագիլը դարձավ եկավ մեն մենակ: Բույնը դիտելուց հետո զնաց կանգնեց ճահիճը, կանգնեց կնոջ զարկված տեղի վրա, կանգնեց, կանգնեց և նորից եկավ բույնը» (Իս., էջ 376): «Արշալույսին Ադամ եկավ և դեգերեց աղբյուրի շուրջը: Սպասեց մինչև Լիլիթ ծաղիկներով պճնված, հազար նազանքներով երևաց» (ն. տ., էջ 322): «Պետրոս Միճառյանը (այս էր ուղեկցիս անունը) հայտնի հոգևոր դպրոցի սան էր: Բնավորությամբ բավական անհամբեր և դյուրագրգիռ էր: Ուներ տարօրինակ հայացքներ...

Սիրում էր վիճաբանել, ազատ մտքեր հայտնել, բայց երբեմն տվելի հակառակելու, քան մի ճշմարտություն ասելու համար» (Մուրացան):

Առանձին դեպքերում նախադասությունների կապն այնքան սերտ է լինում, որ նախադասության որոշ անդամներ որոշելիս անհրաժեշտ է լինում հաշվի առնել խոսքը, տվյալ նախադասության հարաբերությունը կից նախադասությունների հետ: Օրինակ՝ «Ժամանակով մի թագավոր է լինում, էնքան ուժեղ, էնքան բարձր ձեն է ունենում, որ հազար վերստի վրա լավում է: Մեկի հետ, հենց էնպես, զրույց անելիս՝ հեռվից կարծում են, թե որոտն է թնդում: Դրա համար էլ անունը դնում են Որոտ թագավոր» (Թում., 3, էջ 251):

Այստեղ դրա համար կապակցությունը ցույց է տալիս թագավորի անունը Որոտ թագավոր գնելու պատճառը, ուստի և պատճառի պարագա է: Բայց դա հատկապես վերջին նախադասությունից չի բխում, այլ նախորդ նախադասություններից, որոնցում խոսվում է թագավորի՝ հազար վերստի վրա լավող և որոտի թնդյունի նմանվող ձայնի մասին:

Հետևյալ օրինակում դրա համար կապակցությունը կատարում է նպատակի պարագայի ֆունկցիա:

«—Դու չասացիր, թե ինչ ասելիք ունես հորս:

—Ես որոշել եմ ձեր բրուտանոցն օգտագործել որպես դաշտային օթեան,—պատասխանեց Գարեգինը...

—Հենց դրա համար ես գիշերվա կեսին այստեղ եկել» (ՍեՀ, էջ 473): Այս օրինակում դրա համար կապակցությունը ցույց է տրվում Գարեգինի՝ բրուտանոց գալու նպատակը: Այդ իմաստը բխում է վերջին և նախավերջին նախադասությունների մտքի կապից:

Երբեմն նախադասության արտահայտած միտքը խոսքից դուրս որոշակիորեն չի կարելի որոշել: Այն որոշակի է դառնում խոսքի մեջ, կից նախադասությունների հետ ունեցած կապի մեջ, կամ խոսելու պայմաններն են որոշակի դարձնում նրա միտքը:

Այսպես՝ «Ի՞նչ ես ուզում ինձնից» նախադասությունը կարող է գործածվել իր ուղղակի մտքով (որպես հարցում՝ մի

քան պահանջելու, ուղեւոր մասին) և կամ հանդիմանական մտքով (վերջ տո՛ւր, մի՛ անհանգստացնի ինձ):

Բերենք մեկ օրինակ գեղարվեստական գրականությունից: «Ո՛վ պիտի շարունակի ճանապարհը» նախադասությունը, առանձին վերցրած, ավելի շուտ կըմբռնվի այն մտքով, թե իսկապես շինարարությունը կիսատ մնացած ճանապարհը ո՛վ պիտի շարունակի ու ավարտի, և կարծես թե դա մի հարց է, որի պատասխանին սպասում է հարցնողը:

Այժմ այս նախադասությունը վերցնենք այն կոնտեքստում, որտեղից մենք պայմանականորեն առանձնացրել ենք:

«—Փախչում ես դժվար աշխատանքից: Սովո՞ր ես հեռու շուռ տաս, մեջ ուռես, ընկեր կարագյան,—աշխատելով տիրապետել իրեն՝ կամաց շարունակեց Գարեգինը:—Իսկ ո՛վ պիտի շարունակի կիսատ ճանապարհը, հարցնում եմ, ո՛վ: Ամոթ չունեցիր: Քո խիղճը պիտի քեզ ստիպի, որ այդ տարիների անբանությանդ մեղքերը քավես՝ ազնիվ աշխատանքով» (ՍԽՀ, էջ 285): Վերոհիշյալ նախադասությունն այս կապակցության մեջ այլ իմաստ է արտահայտում: Այն թեև իր բնույթով հարցական է, բայց հանդիմանական միտք է արտահայտում. այդ նախադասությամբ խոսողը հանդիմանում է կարագյանին ճանապարհաշինարարությանը շմասնակցելու համար և պահանջում, որ մասնակցի:

Մենք քննեցինք խոսքի մեջ նախադասությունների փոխհարաբերությունները և դրանց արտահայտման լեզվական միջոցները: Նախադասությունների այդպիսի կապը հատկապես արտահայտվում է ոչ ծավալուն խոսքի, ծավալուն խոսքի միևնույն հատվածի, պարբերության կից նախադասությունների միջև:

Նշենք, որ քերականական-լեզվական կապ կարող է լինել նաև ծավալուն խոսքի տարբեր պարբերությունների, տարբեր հատվածների և նույնիսկ գլուխների միջև:

Բերենք մի քանի օրինակ:

(Հայոց գրողների ընկերության գրական երեկույթների երկրորդ շրջանը) «բաց ենք անում մի քիչ ուշ, որովհետև Հայոց Բարեգործական Ընկերությունը վերանորոգում է իր

դահլիճը, ուր տեղի են ունենում մեր գրական երեկոները, վերջերս էլ վրա հասան ամենքիդ հայտնի դեպքերը, իրար ետևից կարճ միջոցում մեռան մեր հայտնի գործիչներից երեքը, որոնց հիշատակը հարգել ենք:

Մրանց մահը էնքան ծանր տպավորություն արավ հասարակության վրա, որ մամուլը նույնիսկ հուսահատության խոսքեր ասավ:

Քայց գրականությունը, որ հանդիսանում է ազգային ոգու արտահայտությունը—անծանոթ է հասարակությանը և Գրականության Ընկերության մեջ էլ չեն կարող արտասանվել նույն խոսքերը, թե եղածները գնում են ու նրանց տեղը մնում է բաց» (Թում., 4, էջ 451):

«Վիրավորված էր եղջերուն: Արյան հետքը բռնեցինք ու գնացինք որոնելու:

— Էսքան որ արյուն է տվել, ինչքան ուզում է գնա՝ մերն է,—հայտնեց որսկան Օսեփը:

* * *

Իրիկնապահին, նրան գտանք մի խոր անտառում» (Թում., 3, էջ 79):

Այս վերջին օրինակը հանդիսանում է Հովհ. Թումանյանի «Նղջերուն» պատմվածքի նախավերջին հատվածի վերջին և վերջին հատվածի առաջին տողերը: Նրան դերանունով վերջին հատվածը կապվում է նախորդի հետ:

Բերենք մի այլ օրինակ: Հովհ. Թումանյանի «Քաջ Նազարը» հեքիաթի երկրորդ հատվածի հետ երրորդ հատվածը կապվում է նրանով, որ վերջինիս առաջին նախադասության ենթական զեղչված է: Զեղչված ենթական կարելի է վերականգնել նախորդ հատվածի վերջին նախադասությունների հիման վրա:

«Բախտդ սիրեմ, Քաջ Նազար, գողգողալով գալիս է տեսնում մի թամբած ձի ճամփի մեջ տեղը կանգնած իրեն է սպասում: Իշիցը վեր է գալի, էս թամբած ձիուն նստում ու շարունակում իր ճամփեն:

Շատ է գնում, քիչ է գնում, շատն ու քիչն էլ ինքը կիմանար, գնում է ընկնում մի գյուղ» (Թում., 3, էջ 190)։

Խոսքի մեջ մտնող նախադասությունների փոխադարձ կապի քննությունը ցույց տվեց, որ իրոք նախադասության ինքնուրույնությունը այս կամ այն չափով հարաբերական է։ Մենք ժանոթացանք նախադասությունների փոխադարձ կապի բազմապիսի ձևերի և նրանց ինքնուրույնության տարբերությունների հետ։

Մեր աշխատության այս հատվածը, իհարկե, քննարկված հարցի սպառիչ ուսումնասիրություն չէ։ Նախադասությունների կապի ձևերը կենդանի խոսքի մեջ շատ ավելի բազմազան են։

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԲՆՈՒՅԹԻ

Յուրաքանչյուր նախադասության մեջ, ինչպես տեսանք վերը, առկա է նախադասության բովանդակության հարա-
քերտմը իրականությանը, իսկ դա էլ վերջին հաշվով նախա-
դասությունն արտահայտողի՝ խոսողի, վերաբերմունքն է։
Ուրեմն յուրաքանչյուր նախադասության մեջ կա խոսողի վե-
րաբերմունք իրականության նկատմամբ, և դրանով նա տար-
բերվում է լեզվական այլ միավորներից, ասենք, բառից, բա-
ռակապակցությունից։

Տարբեր նախադասությունների մեջ դրսևորված վերա-
բերմունքների տարբերությունը հանդիսանում է խոսողի
տարբեր նպատակների արտահայտություն։ Եվ իրոք, մտքե-
րի հաղորդակցումը տարբեր նպատակներով է լինում. մի
դեպքում խոսողի նպատակը կարող է լինել՝ հաղորդել որևէ
բան (որևէ իրողություն, երևույթի, առարկայի գոյությունը,
որևէ առարկայի՝ այս կամ այն հատկանիշն ունենալը և
այլն), մի այլ դեպքում նա կարող է հարցնել որևէ բանի մա-
սին, մի երրորդ դեպքում՝ իր հիացական, զարմացական և
այլ վերաբերմունքն արտահայտել այս կամ այն երևույթի,
առարկայի և այլնի մասին, վերջապես չորրորդ դեպքում՝ իր
կամքը թելադրել՝ կատարելու այս կամ այն գործողությունը։
Եվ որովհետև մարդկային հաղորդակցության կամ մտքի
արտահայտման հիմնական, նվազագույն միավորը նախա-
դասությունն է, ուստի և յուրաքանչյուր նախադասություն
սովորաբար արտահայտվում է վերոհիշյալ նպատակներից
որևէ մեկով՝ և ունենում է յուրահատուկ երանգ։

¹ Երբեմն էլ մեկից ավելի, տե՛ս էջ 62—63, 107—111։

Ճիշտ է, նախադասութիւնների տիպերը վերջին հաշ-
վով արդյունք են խոսողի նպատակի, բայց և այնպես մեզ
թվում է, որ նախադասութիւնների տիպերի բաժանումն ըստ
բնույթի ավելի ճիշտ է, քան թե ըստ խոսողի նպատակի՝
եւ ղա հետեւյալ պատճառով: Նախ, նախադասութեան բնույ-
թը երբեմն ուղղակիորեն չի համապատասխանում խոսողի
նպատակին:

Յրինակ՝ «Ի՞նչ եք ուզում ինձանից,—գոչեց նա, ինքն
իրեն մոռանալով — Ինչո՞ւ եք եկել, ո՞վ է ձեզ խնդրել գալու:
Գնացե՛ք... ձեր բոլորի բարեկամութիւնը ինձ ձանձրացրել
է, գնացե՛ք... Դուք իմ ընկերները չեք... Այն անսպասելի
հարձակումը (ընդգծումը մերն է—Ս. Ա.) բոլորին ապշեց-
րեց» (Շիրվ., 4, էջ 166):

Այս մեջբերման մեջ եղած հարցական նախադասութիւն-
ները խոսողը չի գործածում հարցման նպատակով. դրանք
ընդհանուր առմամբ արտահայտում են հանդիմանութիւն,
արգելում՝ կատարելու որեւէ բան:

Մի այլ օրինակ՝

«—Հայր Զիովաննի, սիրո՞ւմ ես դու Գարիբալդիին:

— Օ՛, բարեկամ,— զարմացած հնչեց նրա ձայնը,—
մտադ էլ չսիրե՞ Գարիբալդիին» (Իս., էջ 244):

Այստեղ մենք ունենք երկու հարցական նախադասու-
թիւններ: Առաջին նախադասութեան բնույթը համապատաս-
խանում է խոսողի նպատակին. խոսողի նպատակն է խոսակ-
ցից իմանալ՝ ինչ իրեն հետաքրքրում է տվյալ դեպքում. և
ղա արտահայտվում է հարցական բնույթի նախադասու-
թյամբ: Իսկ մյուս հարցական նախադասութեամբ խոսողը

1 Ժամանակակից ռուսական քերականութեան մեջ որպես այդպիսի դասակարգման հիմունք դիտվում է խոսողի նպատակը: Տե՛ս, օրինակ, „Грамматика русского языка“, II, часть первая (Институт языко-
знания АН СССР), Москва, 1954, էջ 355, „Современный русский
язык. Синтаксис“. Изд. Московского университета, 1957, էջ 95:

Պրոֆ. Գ. Սևակը ելնում է նախադասութիւնների բնույթից: Տե՛ս
նրա «Հայոց լեզու, շարահյուսութիւն», դասագիրք միջնակարգ դպրոցի
7-րդ դասարանի համար, 1956, էջ 14—15:

նպատակ չունի հարց առաջ, որ պատասխան ստանա: Ինչպես հեղինակի խոսքի մեջ եղած որակումից էլ է երևում, այդ նախադասությունը զարմացական նպատակ ունի, մի հատկանիշ, որ սովորաբար ավելի բացականչական նախադասությանն է հատուկ: Այդ նախադասության մեջ կա նաև հաստատման տարր (բոլորն էլ սիրում են Գարիբալդիին): Ուրեմն այստեղ ևս խոսողի նպատակը (զարմանք, հաստատում) չի համապատասխանում նախադասության բնույթին (հարցական): Այս և նման փաստերը ցույց են տալիս, որ իսկապես խոսողի նպատակը միշտ չէ, որ համապատասխանում է նախադասության բնույթին: Իսկ սա էլ, ի միջի այլոց, խոսում է այն եզրակացության օգտին, որ նախադասության տրամաբանական կողմի և վերջինիս ձևավորման լեզվականքերականական միջոցների միջև միշտ չէ, որ գոյություն ունի ուղղագիծ համապատասխանություն:

Այնուհետև. նախադասությունների տիպերը շարահյուսության ուսումնասիրման օբյեկտ պետք է լինեն ամենից առաջ իրենց կառուցվածքային, արտահայտության հատկանիշներով (այդպիսին է հենց նախադասության երանգը):

Նախադասությունների երանգը, ինչպես ասվեց, խոսողի համապատասխան վերաբերմունքի արտահայտությունն է: Այժմ տեսնենք, թե ինչպես է ձևավորվում այն:

Խոսողի վերաբերմունքի դրսևորման հարցում կարևոր դեր են կատարում հիմնականում երկու գործոն, լեզվական երկու միջոց: Դրանցից մեկը ստորոգյալի բնույթն է: Ստորոգյալի բնույթ ասելով նկատի ունենք ստորոգյալի դերում հանդես եկող բայի եղանակը, վերջինիս հատկանիշները և բաղադրյալ ստորոգյալի հանգույցի առանձնահատկությունն այդ նույն տեսակետից:

Նախ՝ պարզ ստորոգյալի բնույթի, հատկանիշների մասին: Պարզ ստորոգյալի բնույթը կարևոր նշանակություն ունի նախադասության բնույթի որոշման հարցում, քանի որ այն արտահայտվում է բայի եղանակային ձևերով, իսկ վերջիններիս մեջ արտահայտվում է խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ:

Այսպես՝ «Կայծակի շացնող լույսով Գարեգինը տեսավ, որ իրենք կանգնել են ճանապարհի վրա կախված մի վիթխաբի ժայռի մոտ:

—Զիդ քշի՛ր այս ժայռի տակ, շո՛ւտ» (ՍԽՀ, էջ 69):

Առաջին նախադասությունը պատմողական է, երկրորդը՝ հրամայական: Եվ նախադասությունների մեջ արտահայտված այդ երանգները համապատասխանում են այն եղանակային ձևերի հիմնական հատկանիշին, որոնք գործածված են որպես ստորոգյալ, այն է՝ առաջին նախադասության մեջ ստորոգյալն արտահայտված է բայի սահմանական եղանակով, երկրորդում՝ հրամայական եղանակով:

Սակայն նախադասության մեջ արտահայտված այն վերաբերմունքը, որով որոշվում է նրա բնույթը, լրիվ կերպով չի համընկնում, չի նույնանում եղանակային ձևի մեջ արտահայտվող վերաբերմունքի հետ: Եվ իսկապես, եթե նրանք նույնանային, դրանց միջև տարբերություն - չլիներ, ապա լեզվի մեջ պետք է լինեին այնքան բնույթի նախադասություններ, որքան որ բայի եղանակ գոյություն ունի տվյալ լեզվում: Եվ այդ դեպքում, բնականաբար, համապատասխանությունը ոչ միայն ընդհանուր քանակական կազմի մեջ պիտի լիներ, այլև համապատասխանաբար դրանցից յուրաքանչյուրի միջև այսինքն՝ բայի յուրաքանչյուր եղանակային ձև պետք է համապատասխաներ նախադասության նույնպիսի մեկ տեսակի, պայմանավորեր նախադասության համապատասխան տեսակը:

Բայի եղանակային ձևերի և նախադասությունների բնույթի միջև կա այդպիսի զգալի, բայց ոչ լրիվ համապատասխանություն: Այսպես, հրամայական եղանակը հիմնականում համապատասխանում է հրամայական բնույթի նախադասությանը, այն իմաստով, որ այս նախադասությունների ստորոգյալը գերազանցապես արտահայտվում է հրամայական եղանակով, և, ընդհակառակը, բայի հրամայական եղանակը հանդես է գալիս հրամայական բնույթի նախադասության մեջ որպես ստորոգյալ:

Ըղծական եղանակը գերազանցապես մտնում է բացա-
կանչական բնույթի նախադասության կազմության մեջ։ Ու-
րեմն այս երկուսի միջև ևս կա զգալի համապատասխանու-
թյուն։ Մինչդեռ սահմանական, պայմանական, հարկադրա-
կան բնույթի նախադասություններ չկան։ Այդ բոլոր եղա-
նակներն էլ մեծ մասամբ մտնում են պատմողական բնույթի
նախադասության կազմության մեջ։ Իսկ մյուս կողմից էլ
հարցական նախադասությունները չեն կազմվում հատկապես
մի որևէ եղանակային ձևով, այլ համարյա բոլոր եղանակա-
յին ձևերով։ Այս տեսակետից յուրահատուկ է հրամայական
եղանակը, որը միայն մի հազվագյուտ դեպքում կարող է
գործածվել հարցական ինտոնացիայով (տե՛ս էջ 79)։

Բայի եղանակային ձևերի և նախադասությունների
բնույթների միջև հիշյալ որոշ անհամապատասխանությու-
նները ցույց են տալիս, որ նախադասության բնույթի ձևավոր-
ման, արտահայտման խնդրում բայի եղանակի կատեգորիա-
յից բացի կա նաև ուրիշ գործոն։ Այդ գործոնը նախադա-
սության ինտոնացիան է, որի դերը առանձնապես խիստ
զգացվում է այն դեպքում, երբ նախադասության բնույթը
պայմանավորված չէ բայի եղանակի կատեգորիայով և չի
համապատասխանում վերջինիս։

Այս երկու գործոնները միասնաբար են հանդես գալիս,
թեև առանձին դեպքերում դրանցից որևէ մեկի դերը կարող
է առանձնապես ընդգծված լինել։ Այդ երկու հատկանիշներով
ամբողջականանում է նախադասության երանգը կամ բնույ-
թը։

Նախադասությունների երանգները բազմազան են, եթե
հաշվի առնենք մանրամասներն ու նրբերանգները։ Բայց, ըստ
երանգային հիմնական հատկանիշների, նախադասություննե-
րը շորս խմբերի կամ տեսակների են բաժանվում՝ պատմո-
վական, հարցական, հրամայական, բացականչական։ Սա-
կայն ոչ միշտ է, որ նախադասությունն ունենում է այս հա-
կանիշներից միայն մեկը։ Հաճախ է պատահում, որ միև-
նույն նախադասության մեջ տեղ են գտնում տարբեր երանգ-

ներ: Այդպիսի նախադասութիւնները մենք անվանում ենք խառը կամ ընդհանրական բնույթի նախադասութիւններ:

Քննենք նախադասութիւնների այս տիպերն առանձին-առանձին:

ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պատմողական այն նախադասութիւնն է, որով հաստատվում կամ ժխտվում է այս կամ այն իրողութիւնը, այս կամ այն եղելութիւնը, հատկանիշը վերագրվում է առարկային:

Պատմողական նախադասութիւնը ամենաայն տարածված, ամենաշատ գործածական նախադասութիւնն է: Դա բնական է, քանի որ խոսելիս սովորաբար ավելի շատ կարիք է լինում հաղորդելու, պատմելու, քան թե հարցնելու, կարգադրելու, բացականչելու: Իհարկե, նախադասութիւնների այս տեսակները խոսքի տարրեր բնագավառներում տարբեր չափով են գործածվում: Օրինակ, գիտական նույնիսկ մեծածավալ աշխատութեան մեջ կարող է չլինել հրամայական-նախադասութեան նույնիսկ մեկ օրինակ: Մինչդեռ գեղարվեստական երկերում և հատկապես տրամախոսութիւնների մեջ հրամայական, ինչպես և հարցական նախադասութիւնները շատ են գործածվում: Այնուամենայնիվ պատմողական նախադասութիւնների գործածութեան ոլորտը լայն է բոլոր մյուս տեսակի նախադասութիւնների համեմատ: Այնուհետև պատմողական նախադասութեան կազմութեանը մասնակցում են բայի սահմանական, հարկադրական, պայմանական, մասամբ նաև ըղձական եղանակները, մինչդեռ, օրինակ, հրամայական նախադասութեան ստորոգյալը գերազանցապես մեկ եղանակով է արտահայտվում՝ հրամայական եղանակով:

Պատմողական նախադասութեան, ինչպես և ամեն մի նախադասութեան, էութեան համար կարևոր նշանակութիւն ունի ինտոնացիան, քանի որ հենց սահմանական, հարկադրական, պայմանական եղանակով արտահայտված ստորոգյալ ունեցող նախադասութիւնները հարցականով արտա-

հայտնվելիս այլևս պատմողական չեն լինի, այլ՝ հարցադա-
ն։ «Բոլոր աշակերտները եկել են» նախադասությունը, որի ստո-
րոգյալն արտահայտված է բայի սահմանական եղանակով,
պատմողական է։ Բայց «բոլոր աշակերտները եկել են» նա-
խադասությունը, որը կազմությամբ չի տարբերվում նախոր-
դից, բայց ունի հարցական ինտոնացիա, հարցական նախա-
դասություն է։ Ուրեմն պատմողական նախադասության
ձևավորման համար խիստ էական նշանակություն ունի նաև
ինտոնացիան, թեև վերջինս, եթե կարելի է ասել, աչքի չի
գաղնում, իրեն զգալ չի տալիս։

Պատմողական նախադասության տրամաբանական շեշ-
տը, ինչպես ասվել է վերևում մի այլ առիթով, սովորաբար
դրվում է ստորոգյալի վրա։ Սա բացարձակ կանոն չէ, բայց
համենայն դեպս վերաբերում է քննարկվող նախադասու-
թյունների մեծ մասին, հատկապես երբ նրանք ունեն սովո-
րական շարահասություն։ Ուշադրությամբ հետևենք հետևյալ
նախադասությունների ինտոնացիային. «Ներս մտավ Անդր-
ժողկոմխորհի նախագահը և սրահում պայթեց որոտալի ծա-
փահարությունը... Ու բեմի, սրահի, դրոշների այս կարմիր
բոցերի մեջ Անդրժողկոմխորհի նախագահը խոսում է հա-
մաշխարհային հրդեհի մասին» (ԴԴ, 2, էջ 22)։ Այս նախա-
դասություններում տրամաբանական շեշտն ընկնում է ներս
մտավ, պայթեց, խոսում է ստորոգյալների վրա։

Բայց, օրինակ, հետևյալ պատմողական նախադասու-
թյուններում, որոնք ունեն շրջուն շարահասություն, տրամա-
բանական շեշտն ընկած է հիվանդանոց, ձորում, շուտ, նոր
պարագաների վրա։ «Հիվանդանոց են տարել... Ձորումն է
պատահել» (ԴԴ, 2, էջ 150)։ «Այդ առավոտ շուտ էի զարթ-
նել։ Արևը նոր էր ծագել» (ՎՓ, ԵԺ, 4, էջ 313)։

Քանի որ նախադասության բոլոր անդամների համեմա-
տությամբ ստորոգյալն է կարևոր դեր կատարում ինչպես
այլ, այնպես էլ պատմողական նախադասության բնույթի
դրսևորման հարցում, այդ պատճառով էլ նախադասությու-
նների բնույթը քննելիս առանձնապես կարևորություն է ստա-
նում ստորոգյալի արտահայտության հարցը։ Ուստի՝ քննենք

պատմողական նախադասության ստորոգյալի արտահայտությունը:

Պատմողական նախադասության պարզ ստորոգյալը կարող է արտահայտվել հետևյալ եղանակային ձևերով:

Սահմանական եղանակով. «Հնագետը մի անգամ էլ պտույտ արեց բերդի շորս կողմը» տեսրում մի բան նշանակեց և ապա արագ քայլերով հասավ ձիերին» (Բակ., էջ 192): «Վտակը ժայռից ներքև է թռչում, Թափ առած ընկնում քարերի գլխին, Ջարկում ավազին, շաշում է, ճշում, ծշում անհանգիստ, փրփուրը բերնին» (Թում., 1, էջ 51):

Պայմանական կամ ենթադրական կոչվող եղանակով. «Նս հենց այս ըոպեիս կհեռանամ այս տնից և կգամ քեզ հետ գյուղը» (Ն.-Դ., 3, էջ 114): «Երբեք չի սպասի» (Բակ., էջ 268): «Մենք կգործենք համաշխարհային մասշտաբով» (ԴԴ, 2, էջ 323):

Հարկադրական եղանակով. «Ձեռները Ձեր պիտի հար երգեմ մոլեռանդ» (ՎՏ, էջ 268): «Մեկը ուրեմն պիտի գար Դվին» (ԴԴ, 6, էջ 242): «Լուսաբացին արտատերը արտը ջրած պիտի տեսնի, պիտի ժպտա և կռնա, մատներով տրորի ֆաց հողը» (Բակ., էջ 98):

Ըղծական եղանակով. «Հավքը բռնեմ թռիչքի մեջ, Տափ եղբորս, որ տանի տուն, Իսկ ես խաղամ ջրերի հետ, Ու չարարվեմ մինչ իրիկուն» (ՀՍ, ՄՏ, էջ 92): «Քանի եղանակը ավ է, շուտ անենք, մի սել տաշտ ու թի շինենք, տանենք կոռյի երկիրը» (ՎԱ, ԼԿ, էջ 25):

Ըղծական եղանակը պարզ նախադասության մեջ (մանավանդ եթե հետը չկան մի շարք եղանակավորող բառեր. խնդան՝ բռն, գուցե, երևի, հագիվ քե, քերես և այլն) գործածվելիս համեմատաբար սակավ դեպքերում է ձևավորում պատմողական նախադասություն: Այդպիսի նախադասությունները, երբ ընկնում են բացականչական ինտոնացիայի տակ, շատ հեշտությամբ փոխում են իրենց բնույթը՝ վերածվելով բացականչականի:

Սակայն որոշ դեպքերում ըղծական եղանակը այնքան հաստատուն կերպով է մասնակցում պատմողական նախա-

դասութիւնների կազմութեանը, որքան, օրինակ, սահմանական եղանակը: Դա, նախ, լինում է այն ժամանակ, երբ ըղձական եղանակը հանդես է գալիս բարդ ստորադասական նախադասութեան երկրորդական նախադասութիւնների կազմում: Հասկանալի է, որ այդպիսի դեպքերում ըղձական եղանակը պատմողական նախադասութեան մի մասի կազմութեան մեջ է դեր կատարում և ոչ թե ամբողջ նախադասութեան մեջ:

Օրինակ՝ «Քիչ է մնում՝ ինձ ներքև շարտեմ ու կտոր-կտոր անեմ իմ ընկերոջ դուշմանին» (ՎԱ, ԼԿ, էջ 30): «Հայրս գնաց անտառապետի մոտ, տվեց իր վերջին գողշները, թույլատրվութիւն վերցրեց, որ ընկած ծառերից տախտակ քաշենք, տանենք Սեանի անտառազուրկ գլուղներում փոխանակենք հացահատիկի հետ» (ն. տ., էջ 33): «Դիտմամբ սարսափելի բաներ եմ ասում, որ վախեցնեմ մորս, հրացանը վերցնեմ» (ն. տ., էջ 33):

Այնուհետև, ըղձական եղանակը հատկապես կարող է գործածվել այնպիսի պարզ նախադասութիւնների, բարդ համադասական նախադասութիւնների, ինչպես և բարդ ստորադասական նախադասութեան գլխավոր նախադասութեան մեջ, որոնք ունեն մի շարք եղանակավորող բառեր, ինչպես՝ թող, գուցե, քերես, երեխ, հազիվ թե և այլն:

Օրինակ՝ «Թող մի քիչ իրեն կարգի բերի, տուն-տեղ դառնա» (ՎԱ, ԼԿ, էջ 27): «Երևի հենց նա լինի» (ն. տ., էջ 30): «Դուք մեր բախտից Քարկապում մի քարի տակ մտած լինի» (ն. տ., էջ 275):

Ըղձական եղանակը¹, սակայն, պատմողական նախադասութեան կազմութեան մեջ այնքան ակտիվ դեր չի կատարում, այնքան լայն կիրառութիւն չունի, որքան սահմանական, պայմանական, հարկադրական եղանակները: Ըղձական եղանակը, ինչպես կտեսնենք իր տեղում, ավելի շատ հանդես է գալիս բացականչական նախադասութիւնների, իսկ

¹ Այստեղ նկատի ունենք ըղձական եղանակի կիրառութիւնը պարզ, ինչպես և բարդ համադասական նախադասութեան մեջ:

համեմատաբար քիչ շահով նաև հարցական նախադասութ-
յունների մեջ:

Պատմողական նախադասության ստորոգյալը հաճախ
լինում է բաղադրյալ:

Օրինակ՝ «Ես տգետ մարդ չեմ» (Ն.-Դ., 3, էջ 200): «Ան-
դուն մշակ է» (Բակ., էջ 158): «Անդոյի աշխարհը ավելի հե-
տաքրքիր է, ավելի խորը» (ն. տ.): «Երեկ ամպ էր, էսօր՝
պարզ արև» (ն. տ., էջ 110): «Առաջին ձիավորը հնագետ էր,
երկրորդը՝ նկարիչ» (ն. տ., էջ 191):

Պատմողական նախադասության արտահայտության վե-
րաբերյալ բերված հիշյալ օրինակները բոլորովին զուրկ
են հարցական, բացականչական երանգից: Այդպես են պատ-
մողական նախադասությունները հիմնականում: Սակայն
ներքե երբեմն կարող են ունենալ հարցման, բացականչման
որոշ թույլ երանգ, որը, սակայն, ամբողջ նախադասության
երանգի համար բնորոշ ու հատկանշական չէ:

Օրինակ՝ «Շքեղ մի դղյակ կար, բարձր, բարձր, արծվի
թևերի վրա» (Իս., Աէ, էջ 35): «Հոյակապ մի դղյակում ապ-
րում էր մի շքնաղ աղջիկ, այնպե՛ս գեղեցիկ, այնպե՛ս գեղե-
ցիկ, ինչպես շուշանագեղ կարապը լճակի ոսկեվառ ալիքնե-
րի վրա» (ն. տ., էջ 37):

Այս նախադասությունների մեջ բացականչական ինտո-
նացիայի տարրը, իհարկե, որոշ դեպքեր խաղում է: Այսպես, վե-
րոհիշյալ նախադասություններից առաջինի մեջ պատմվում
է մի դղյակի գոյության, նրա բարձր դիրքի մասին, և ինտո-
նացիայի բացականչական երանգը միայն ավելի է ընդգծում
դղյակի դիրքի բարձր լինելը, բայց նախադասության երանգի
բնույթի մեջ էական փոփոխություն չի մտցնում: Նախադա-
սությունը թե՛ առանց այդ բացականչման երանգի, թե՛ այդ
երանգն ունենալու դեպքում մի բան պատմելու նպատակով
է գործածվում, ուրեմն և պատմողական է: Նույնը պետք է
սպել նաև հաջորդ նախադասության մասին, որտեղ բացա-
կանչական ինտոնացիայով շեշտվում է աղջկա գեղեցիկ լի-
նելու հատկանիշը, և դա, սակայն, չի փոխում ամբողջ նա-
խադասության բնույթը. այդ նախադասությամբ արտահայտ-

վում է դրձակում չքնաղ աղբիկ ապրելու փաստը և միաժամանակ նրա գեղեցկության չափը, որը համեմատվում է շուշանագեղ կարապի հետ: Մենք կարծում ենք, որ այդպիսի միտք արտահայտող և այդպիսի նպատակով գործածվող նախադասությունը չի կարող համարվել այլ կերպ, քան պատմողական, թեկուզ նա ունենա բացականչական ինտոնացիայի որոշ տարր:

Ո՞րն է պատճառը, որ վերևի և նման օրինակներում, չնայած բացականչական ինտոնացիայի որոշ տարրին, այնուամենայնիվ նախադասությունը իր էությունից մնում է պատմողական: Հիշենք, որ նախադասության բնույթի ձևավորման երկու հիմնական գործոն գոյություն ունի. մեկը բայի եղանակի կատեգորիայի էությունը, եղանակաչին իմաստը, մյուսը՝ ինտոնացիան: Պատահում է, որ այդ երկու գործոնները միաժամանակ հանդես գալով գործում են տարբեր ուղղություններով: Վերևի օրինակներում մի կողմից սահմանական եղանակը և բաղադրյալ ստորոգյալը պայմանավորում են նախադասության պատմողական բնույթը, մյուս կողմից՝ բացականչական ինտոնացիան բացականչական բնույթի ինչ-որ հիմք է ստեղծում: Մակայն, այնուամենայնիվ, բայի եղանակի կատեգորիան տվյալ դեպքում ավելի վճռական դեր է կատարում, քան բացականչական ինտոնացիան, մանավանդ որ վերջինս շատ թույլ է: Եվ իրոք, խոսողը հիշյալ և նման նախադասություններով նպատակ է ունենում հաստատական կերպով արտահայտել այս կամ այն միտքը, օգտամել մի բան:

Բովանդակության, գործածության տեսակետից պատմողական նախադասությունների սահմանները շատ լայն են:

Պատմողական նախադասությունների կիրառությունների մեջ էական տեղ են գրավում, նախ, առարկաների, բնության տեսարանների և այլնի կոնկրետ, փաստացի նկարագրությունները ստատիկ վիճակում:

Այսպիսի պատմողական նախադասությունների ստորոգյալը կարող է լինել, նախ, բաղադրյալ, քանի որ նման դեպքերում դրոժ չունենք շարժման, գործողության հետ:

Օրինակ՝ «Պարտեզը չի էր կեռասենիններով ու թփերով» (ՎՓ, ԵԺ, 4, էջ 388): «Գմբեթը մեր քարայրն էր, մեր քարափոսիկը» (ն. տ., էջ 389): «Ավետիք սեպուհը միայն մտահոգ էր» (ԴԴ, 6, էջ 188): «Մեր Գյունե թաղն արևոտ է, գետի ափին» (Բակ., էջ 141):

Նման դեպքում պատմողական նախադասության ստորոգյալը կարող է լինել նաև պարզ, ըստ որում՝ հաճախ արտահայտված բայի հարակատար և անցյալի հարակատար ժամանակներով: Ինչպես հայտնի է, հարակատար դերբայը ցույց է տալիս կատարված այնպիսի գործողություն, որը թողել է մնայուն հետևանք: Հենց այս վերջին հատկանիշի շնորհիվ էլ հարակատար ժամանակը հաճախ է գործածվում նման դեպքերում:

Օրինակ՝ «Մեր գյուղը տարածված էր Լոռին Ղազախից բաժանող Խալ-խալլու լեռան հարավային փեշերին: Կաղնու և հաճարի անտառներով են պատած այդ լեռան լանջերը: Իսկ անտառից զուրկ բարձունքները զարդարված են կանաչով ու բազմերանգ ծաղիկներով»: (ՎԱ, ԼԿ, էջ 9): «Միայն մտախոհ նստած էին» (ԴԴ, 6, էջ 188): «Սենյակը բավական խնամքով կահավորված էր» (ԴԴ, 6, էջ 239):

Այսպիսի նախադասությունների ստորոգյալը կարող է արտահայտված լինել, բացի հարակատար ժամանակներից, նաև այլ ժամանակներով, որոնք թեև առհասարակ միճակ չեն ցույց տալիս, այլ ցույց են տալիս շարժում, բայց նման դեպքերում նրանց այդ իմաստը ստանում է որոշակի յուրահատկություն: Այսպես՝ «Ճանապարհը ձգվում է գետի եզրով, անցնում կամուրջի հին կամարների վրայով և քարափի լանջով զննում դեպի քաղաքը» (Բակ., էջ 141): Ընդգծված բայերն, իհարկե, պայմանականորեն են շարժում ցույց տալիս այս նախադասության մեջ, դրանց իմաստը մի տեսակի փոխաբերական է, իսկ այդպիսի իմաստով նրանց գործածության հնարավորությունը զգալի չափով պայմանավորված է ոչ միայն բայի իմաստի յուրահատկությամբ, այլև նկարագրվող առարկայի յուրահատկությամբ, գոյային որոշ հատկանիշներով:

Վիճակի, ստատիկ դրության նկարագրության դեպքում ստորոգյալը կարող է արտահայտվել նաև վիճակ, եղելություն ցույց տվող որոշ բայերով, ինչպես՝ լինել, ունենալ և այլն:

Օրինակ՝ «Ահա ծեր որսորդի ասած նշաններից կան այս քարի վրա» (ՎԱ, ԼԿ, էջ 11): «Նրա ավագ եղբայրը հոր բոլոր նշաններն ուներ» (ն. տ., էջ 13): «Մեռած քաղաքում ոչ մի մարդ չկար» (ԾԶ, էջ 228):

Պատմողական նախադասություններով հաճախ արտահայտվում են դինամիկ վիճակի նկարագրություններ՝ առարկաների շարժումը, գործողությունը: Այսպիսի պատմողական նախադասությունների ստորոգյալը սովորաբար արտահայտվում է բայի եղանակային ձևերով:

Օրինակ՝ «Ես այդպիսի քարեր գտա, դարսեցի դուլլի մեջ, ջուր լցրի վրան, բեռիս տակ տնքալով քայլեցի գետակն ի վեր, դեպի այն մուրազ-երկիրը, որին ձգտել են, բայց չեն հասել այս ապագա զավակների մայրերը» (ՎԱ, ԼԿ, էջ 11): «Դուլլից քարերը հանեցի և շարեցի այդ վաննայի մեջ» (ն. տ.):

Հարակատար դերբայով կազմված ժամանակները պատկերվում են այս դեպքում, դա բացատրվում է ստատիկ վիճակի նկարագրություններում նրա ակտիվ դերով: Ենթակայական դերբայը իր յուրահատուկ իմաստի պատճառով այս վերջին տիպի նախադասություններում սովորաբար չի գործածվում:

Պատմողական նախադասությունները կարող են արտահայտել ոչ միայն այդպիսի կոնկրետ նկարագրություններ, այլև ընդհանուր բնույթի դատողություններ՝ իրականության ու մտածողության տարբեր բնագավառների վերաբերյալ:

Օրինակ՝ «Ազատությունը և լուսավորությունը մարդու բարօրության թթվածինն է ու ջրածինը» (Զերնիշևսկի): «Քանավոր արտահայտված մտածությունը բանավոր խոսք է, իսկ գրավոր արտահայտված մտածությունը՝ գրավոր խոսք» (Գ. Սևակ): «Միայն խոնարհված բայով արտահայտված ստորոգյալը կոչվում է պարզ ստորոգյալ» (Գ. Սևակ):

Այսպիսի նախադասութիւնների ստորոգյալը սովորաբար չինում է կա՛մ բազադրյալ, կա՛մ արտահայտված էական բայով, ինչպես և այնպիսի վերացական բայերով, ինչպիսիք են՝ լինել, հանդիսանալ, համարվել, դառնալ, կոչվել և այլն:

Զպետք է կարծել, թե պատմողական նախադասութիւններով զգացմունք, հոգեկան ապրումներ չեն արտահայտվում: Այստեղ պետք է տարբերել երկու բան: Զգացմունքների, ապրումների նկարագրութիւնը, որ կարող է արտահայտվել և հաճախ արտահայտվում է պատմողական նախադասութիւններով, պետք է տարբերել զգացմունքների, ապրումների, վերաբերմունքի և այլնի՝ նախադասութեան ինտոնացիայի միջոցով, բայի եղանակային ձևերի և այլ միջոցներով դրսևւորվելուց: Վերջին դեպքում զգացմունք է դրսևորվում քերականական որոշ միջոցներով, իսկ մյուս դեպքում միտք է արտահայտվում զգացմունքի մասին:

Օրինակ՝ «Անանց կարոտն է իմ սիրտը տանջում» (ՎՏ, էջ 60): «Ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր, գիշերվա պես խորհրդավոր» (ն. տ., էջ 12): «Ցաված սիրտս երգեր հյուսեց, Երգեր անուշ ու տխուր, վիշտս հուզվեց, արցունք հոսեց, Վճիտ, ինչպես ջինջ աղբյուր» (Իս., էջ 5):

Այսպիսի միտք արտահայտող պատմողական նախադասութիւնների ստորոգյալը իմաստով բազմազան է: Դրա պատճառն այն է, որ մարդու ներքինը նման դեպքերում կարող է դիտվել որպես յուրովի աշխարհ, որին և ուղղակիորեն կամ պայմանականորեն կարելի է վերագրել շատ ու շատ տարբեր բնույթի հատկանիշներ, գործողութիւններ իրենց բազմազան ձևերով (հուզվել, ալեկոծվել, փոթորկվել, տվայտել, պոռթկալ, փշրվել, ցնցվել, հորդալ և այլն):

Պատմողական նախադասութեան այս տարբեր արտահայտութիւնները հաճախ այնպիսի տարբերակված վիճակում չեն հանդես գալիս, որ նշվեց վերևում: Պատահում է, որ միևնույն նախադասութեան մեջ տեղ են գտնում տարբեր նպատակ հետապնդող, տարբեր հատկանիշներ ունեցող բազադրիչներ:

Վերջապես պետք է նշել նաև, որ որպես պատմողական բնույթի նախադասություններ կարող են հանդես գալ միակազմ նախադասությունները:

«Երևան: Աստաֆյան փողոց: Նստած է խանութպան Համոն: Աշուն է: Մշուշ, թաց, խոնավ-անձրևոտ իրիկուն» (ԵԶ, էջ 292):

Մի դիտողություն ևս պատմողական նախադասությունների բնույթի և կառուցվածքի վերաբերյալ: Եթե պատմողական նախադասություններով սովորաբար հաստատվում կամ ժխտվում է մի բան, դա չի նշանակում, թե դրանք միշտ ունենում են որոշակիորեն հաստատական բովանդակություն: Դրանց իմաստը կարող է լինել երկբայական, ենթադրական:

Այս հարցում դեր կատարում են ոչ միայն որոշ եղանակային ձևեր, այլև եղանակավորող և նման ուրիշ բառեր, ինչպես՝ երևի, հավանաբար, գրեթե, կարծեմ, կարծես, ասես, հազիվ թե, քստ երևույթին և այլն:

«Սա գրեթե կատարելություն է» (Թում., 4, էջ 397):

«Կարծես թե ես եմ այդ երգը հյուսել,
Կարծես թե ես եմ լալիս այդ երգում,
Կախծես թե քեզ եմ կարոտով երգում» (ՎՏ,
էջ 110):

«Հազիվ թե դյուրին լինի պատասխան տալ այս հարցին» (ԱՀ, Նժ, 27): «...Պիտի կարծել, որ Պատկանյանի տեղեկանքը չի կարող վերաբերել այս ոտանավորներին» (ԱՀ, Նժ, էջ 34): Քվում է, թե Պատկանյանի որոտընդոստ քարոզների մեջ էր մշակվել հատուկ պարզ, առաջավոր ու պատկերավոր, հեզմոդ ու մտրակոդ հրապարակախոսական հետադա նրա (Նալբանդյանի) խորհրդածությունների լեզուն» (Ն. տ., էջ 39):

Վերջին օրինակներում պիտի կարծել, քվում է եղանակավորող արժեք ունեն:

Հարցական կոչվում են այն նախադասությունները, որոնք արտահայտում են հարցում:

Հարցական նախադասությունների ստորոգյալը քերականական տեսակետից որևէ սպեցիֆիկ առանձնահատկություն չունի այն իմաստով, որ արտահայտվում է բայի համարյա բոլոր եղանակներով: Այս նախադասությունների առավել բնորոշ ու ընդհանուր հատկանիշը հարցական ինտոնացիան է, հարցումը:

Օրինակ՝ «Զե՞ք ճանաչում էմմային, չե՞ք ճանաչում հենց իրեն» (Ն.-Դ., 2, էջ 392): «Դո՞ւք եք արդյոք պարոն Մարտինը...» (Իս., էջ 256): «Ի՞նչ հարձակման հնարք կարող էր փրկել նրանց: Ո՞ւմ վրա էին հարձակվում, մի շնչին զորամասի՞, թե՞ բանակի» (ԴԴ, 6, էջ 314):

Սովորաբար պարզ հարցական նախադասությամբ միայն մեկ հարց է տրվում, հետևապես և նախադասության միայն մեկ անդամ է արտահայտվում հարցականով: Այսպես, «Արամը քո ամենամոտիկ ընկե՞րն է» նախադասության մեջ, ուր ստորոգյալն առնված է հարցականի տակ, հնարավոր չէ միաժամանակ մեկ ալլ անդամ ևս արտահայտել հարցումով: Այլ անդամ հարցական ինտոնացիայով արտահայտելու չեպքում, ստորոգյալը և մյուս անդամները հարցում չեն ունենա, հարցումով չեն արտահայտվի: Այսպես, Արամը քո ամենամոտիկ ընկերն է: Արամը քո՞ ամենամոտիկ ընկերն է: Արա՞մն է քո ամենամոտիկ ընկերը:

Մինչդեռ, օրինակ, բացականչական ինտոնացիայով կարող են արտահայտվել միևնույն նախադասության մեջ մեկից ավելի անդամներ:

Այսպես՝ «Ի՞նչ որսի օր էր բացվե՞լ...—» (ՎԱ, ԼԿ, էջ 38): «Պակասությունից ինչքա՞ն վեճեր են առաջ գալիս մեր հարևանների տներո՞ւմ» (Ն. տ., էջ 46): «Ի՞նչ որս է՞...» (Ն. տ., էջ 42): «Ո՞նց բերե՞ց» (Ն. տ., էջ 46):

Մեկից ավելի հարցում կարող է լինել բազմակի անդամներ ունեցող պարզ նախադասություններում: Օրինակ՝ «Մի ծանր հավիտենական հուր կար նրա խանութում՝ պանրի՞

ասես, թթունների՝, տեղաշոյրների՝, կեղտոտ փալասների՝, մի կատարյալ նեխարան» (ԴԴ, 1, էջ 62): «Եվ այս բոլորը ոչքնչի՝ համար, Հեկուբի՝ համար» (Վ. Շեքսպիր, թարգմ.):

Բարդ, այդ թվում և միավորյալ նախադասություններում կարող են լինել հարցում արտահայտող մեկից ավելի բառեր:

Օրինակ՝ «Ի՞նչ ես կարծում, նա լսո՞ւմ է Արմիկին» (ԱՍ, ՈՄ, էջ 76): «Սա ի՞նչ բան է, ինչո՞ւ մինչև հիմա քիմիայի առաջին քառորդի արդյունքները չկան» (ԱՍ, ՈՄ, էջ 105): «Իսկ դու ո՞ւր էիր այս քանի օրը, ինչո՞ւ դպրոց չէիր գալիս» (Ն. տ., էջ 60): «Նա քեզ վիրավորե՞ց, սպառնա՞ց» (Ն. տ., էջ 62): «Ի՞նչ ունիս, խաչատուր, ինչո՞ւ չես խոսում» (Ն. տ., էջ 90):

Բազմակի անդամների նշված հատկանիշի նմանությամբ հարցում կարող են արտահայտել նախադասության մեջ նույն տիպի այնպիսի անդամներ, որոնք ունեն նույն լրացյալը. ասենք՝ նույն ստորոգյալի համադաս լրացումները, թեև որանք լինեն տարբեր լրացումներ:

Օրինակ՝ «...Հոգին մարդուն վկայում է մի բան՝ Հարց ես տալիս քեզ՝ ինչո՞ւ, որտեղի՞ց այդ հավատը...» (ԴԴ, 3, էջ 115): «Եվ արդեն որտեղի՞ց, ինչպե՞ս, որի՞ բերանով հորջորջվեցին այս երկու հոսանքը՝ Վարդանանք, Վասակյանք» (Ն. տ., էջ 332): «Այդ որտե՞ղ, ինչպե՞ս ընտրեց ժողովուրդն իր ղեկավարին» (Ն. տ., էջ 220):

Հարցումը համընկնում է նախադասության տրամաբանական շեշտի հետ. այն դառնում է տրամաբանական շեշտի դրսևորման ձև և հաճախ դրվում է ստորոգյալի վրա:

Օրինակ՝ «Արդյոք այրվե՞ց, ծուխ ու մոխիր դարձա՞վ ոգիների աշտարակի վրա հոխորտացող աստղադիտարանը» (Իս., Ը է, էջ 33): «Հիշո՞ւմ են արդյոք քեզ այնտեղ, Անունդ տալիս՝ են արդյոք» (ՎՏ, էջ 248):

1 Այստեղ և մանավանդ միակազմ նախադասությունների ուսումնասիրության բաժնում քննվող տիպի նախադասությունը անհրաժեշտության դեպքում բերում ենք կից նախադասության կամ նախադասությունների հետ կապակցված վիճակում: Դա օգնում է տվյալ նախադասության միտքը կամ նրա որևէ հատկանիշը ավելի լավ հասկանալուն:

Հարցման տակ կարող է առնվել նախադասության ենթական:

Օրինակ՝ «Արդյոք նորից երազնե՞րն են թափառում, Սիրո անուշ նվազներն են ինձ կանչում» (ՎՏ, էջ 26): «Մա՞հն է արդյոք, թե նինչը քեզ պատել, պայծառ նաիրի» (ն. տ., էջ 285):

Հարցման տակ կարող են առնվել ենթակայի, ստորոգյալի լրացումները:

Օրինակ՝ «Ամե՞ն զարկն է արդյոք հղկում իմ երգերը» (էմ., էջ 39): «Ի՞նչ վարձ էին ստանում նրանք» (Բակ., էջ 316): «Զավո՞դ եմ բաց անում էս վայրենի աշխարհո՞ւմ» (Բակ., էջ 480): «Բնչի՞ մասին եմ ինչո՞ւ են վիճում Ծիծեռնակներն այս մայիսին Որոտանի կիրճում» (ՀՍ, ՄՏ, էջ 87): «Հազրո, դու լա՞վ էիր ապրում քո գյուղում» (Բակ., էջ 110):

Հարցման տակ կարող են առնվել նաև նյութական իմաստ չունեցող, հետևապես և նախադասության անդամ ճանդիսացող մի շարք բառեր: Դրանցից ամենաբնորոշները երկբայական-հարցական եղանակավորող բառերն են, ինչպես՝ միթե, արդյոք, գուցե, չի՞նի, չի՞նի թե և այլն:

Օրինակ՝ «Մի՞թե պիտի ետ մնա» (Բակ., էջ 425): «Զի՞նի՞ թե հիմար բան ուսացի» (Ն.-Դ., 3, էջ 265): «Բայց արդյո՞ք կսթափվի» (ԴԴ, 3, էջ 213): «Զի՞նի՞ դու ես այն քաղաքից եկած մարդը» (ՎՓ, ԵԺ, 4, էջ 251):

Ի վերջո, հարցումով կարող են արտահայտվել մի քանի շաղկապներ, կապեր և նույնիսկ լեզվական այնպիսի միավոր, ինչպիսին վանկն է, հնչյունը, բայց վերջիններս, իհարկե, փոխանունաբար գործածվելիս: Շաղկապներն ու կապերը հարցման տակ առնվելով, դրանով իսկ հարցման տակ է առնվում նրանց արտահայտած հարաբերությունը, իսկ փոխանունաբար գործածված լեզվական նշված ու նման միավորները հարցում կրելով, հարցականի տակ են առնվում նրանց ցույց տված օբյեկտները, միավորները՝ հնչյունը, վանկը և այլն:

Օրինակ՝ «Գարշելիների հե՞տ պիտի քնեմ» (ԴԴ, 3, էջ 246): «Մեր գլխի վրա՞ են փորձում հավատարմությունը»

(ն. տ., էջ 69)։ Սա «ո՞ւ» է, թե՞ «ո»։ «Սենյակ» բառի երկրորդ վանկը դու համարում ես նյա՞կ-ը, թե՞ յակ-ը։

Սակայն նախադասության տարբեր անդամների, տարբեր բնույթի բառերի՝ հարցման ինտոնացիայով գործածվելու միջև մենք հավասարության նշան չենք դնում։ Ինչպես ասվեց, նախադասության անդամներից այս տեսակետից առանձնանում է ստորոգյալը, որը համեմատաբար ավելի շատ հանդես է գալիս որպես հարցում կրող։ Այնուհետև, լեզվի մեջ կան մի շարք բառեր, հատկապես եղանակավորող բառեր և հարցական—հարաբերական դերանուններ, որոնք նաև ակտիվ են այդ տեսակետից։

Այս առումով հետաքրքրական են այնպիսի նախադասությունները, որոնցում հարցումը ինտոնացիոն տեսակետից մեկ բառի վրա է ընկնում, իսկ հարցման բուն էությունը՝ այլ բառի վրա. վերջինս սովորաբար լինում է բացարձակ անորոշ իմաստաճանցող բառ, որն իր այդպիսի հատկանիշի պատճառով հակված է լինում հաճախ որպես հարցական բառ գործածվելու։

Օրինակ՝ «—Իսկ ա՞յս նախարարը ում կողմն է,— հարցրեց նրանցից մեկը Ռշտունյաց նախարարին» (ԴԴ, 3, էջ 374)։

Այս նախադասության մեջ հարցական երանգով է արտասանվում այս բառը, բայց հարցը տրված է նախարարի «ո՞ւմ կողմ» լինելը իմանալու համար, որի պատճառով էլ այդ հարցի պատասխանն է. «—Վարդանի կողմն է,—պատասխանեց Ռշտունյաց նախարարը» (ն. տ.)։ Նման դեպքերում նախադասության մեջ հարցական ձևով գործածված բառը փաստորեն տրամաբանական շեշտի կրողն է, և այդ շեշտը իր տեղով չի համապատասխանում հարցման միջոցով պարզելու ենթակա հատկանիշի անվան հետ։ Այս վերջին բառը շեշտ չի կրում։

Բերենք այդ կարգի այլ օրինակներ։ «—Իսկ այն երիտասա՞րդն ով էր,—հանկարծ հարցրեց Ռուբենը...—էն երիտասարդը ընկերուհուս եղբայրն էր» (ԴԴ, 2, էջ 131—132)։

«Սա՛ ինչ բան է» (ն. տ., էջ 12): «Դո՛ւք ինչ կասեք սրա հա-
մար» (Մուր., 1, էջ 122): «Իսկ քո՛ ինչն է» (ԴԴ, 6, էջ 255):

Հարցումը հարցական-հարաբերական դերանունից կա-
րող է շեղվել և դրվել այլ բառի վրա նաև այն դեպքում, երբ
երկախոսություն ժամանակ հարցական նախադասության
արտահայտած միտքը նորից խոսողի կողմից առնվում է
հարցման տակ՝ այն լավ լսած, հասկացած չլինելու կամ
այլ պատճառով:

Օրինակ՝ «—Բայց մարդ է ու հիվանդացավ հանկարծ,
ի՞նչ կանես,—ասաց նա:—Ինչ կանե՛մ, բարկացավ Ռշտուն-
յաց նախարարը» (ԴԴ, 3, էջ 266): «—Լավ, ի՞նչ կարող են
անել հոները:—Հոնե՛րն ինչ կարող են անել... Հոները շատ
բան կարող են անել» (ն. տ., էջ 335):

«Լուչեցիո. Ո՛ւր էիր կորել: Բիռնդելլո. Ուր էի կորե՛լ»:
(Շեքս., 2, էջ 77): «Տրանիո. Դուք ո՞վ եք, սինյոր, որ հա-
մարձակվում եք ծեծել իմ ծառային: Վինչեցիո. Ով եմ ե՛ս»
(ն. տ., էջ 129):

Միշտ չէ, որ նախադասության մեջ հարցման առկայու-
թյամբ նախադասությունը դառնում է հարցական: Երբեմն
մեկ բառի վրա ընկնող հարցումը էական չի լինում ամբողջ
նախադասության բնույթի համար, և նախադասության
բնույթի կամ երանգի մեջ այն տեղ է գտնում որպես մի մաս-
նավոր մոմենտ:

Օրինակ՝ «Շղթաների ձայնի՞ց, թե՞ ոստիկանների տարո-
րինակ հագուստից, ճանապարհի պոնկին արածող ոչխարնե-
րը խրտնեցին, իսկ դեղնավուն գուլնի փափլիկ շնիկն սկսեց
տագնապով հաչել» (Դեմիրճյան): «Ամրոցից դուրս, հեռա-
վոր մարազի՞ց, թե գոմից ծորեց աքաղաղի կախվող կանչը,
դարպասի մոտ հաչեց մի կիսաքուն գամիո» (ԴԴ, 6, էջ 195):
«Իմ ձենի՞ցը, թե՞ սարսափած տեսքից դա կանգ առավ, զար-
մացած վերև է մտիկ անում ու իրեն-իրեն մրթմրթում» (ՎԱ,
Կ, էջ 460): «Նա մենակ էր և դեմքից կախ էր ընկել և պա-
րուրում էր մի գոլորշու քուլա՞, թե մորուք» (Անթ., էջ 68):

Հարցական նախադասությունների ստորոգյալը իր արտահայտության միջոցներով ու ձևերով բազմազան է: Այն ինչում է պարզ և բաղադրյալ:

Հարցական նախադասությունների պարզ ստորոգյալն արտահայտվում է հետևյալ եղանակներով:

Սահմանական եղանակով.

«Զե՞ս ամաչում... չե՞ս ամաչում... չե՞ս ամաչում... Դու գովե՞լ ես, թե ...ինչո՞ւ էիր դուռը փակել և չէիր ուզում ինձ ներս թողնել. ինչո՞ւ էիր փակել» (Ն.-Դ., 2, էջ 237): «Քարեկամ, քունդ չի՞ տանում» (Ն.-Դ., 2, էջ 253): «Եկա՞վ կախարդուհին, մայրիկ» (ԴԴ, 3, էջ 236): «Մեզանից նեղացե՞լ ես, տեր իմ» (Ն. տ., էջ 247): «Ի՞նչ են անելու, նրանց դատելո՞ւ են, աքսորելո՞ւ են» (Անթ., էջ 27):

Պայմանական կամ ենթադրական կոչվող եղանակով.

«Երկու օրից կհասնե՞նք» (ԴԴ, 3, էջ 254): «Արդյոք մեկ էլ կգա՞ն գյուղ, ինքը ողջ կմնա՞ մինչ այդ» (Բակ., էջ 64):
Ըղծական եղանակով.

«Ո՛ւր փախչեմ, ինչպե՞ս ազատվեմ այս դրությունից» (Ն.-Դ., 2, էջ 320): «Ես ի՞նչ ասեմ» (էմ., էջ 40): «Դուք արքայից արքայի պատգամավորին անարգե՞ք, մարդպանի պաշտոնյային ծեծե՞ք» (ԴԴ, 3, էջ 248):

Հարկադրական եղանակով.

«Պիտի մաքրե՞ս փողոցը» (ԴԴ, 2, էջ 282): «Դու պիտի լռե՞ս» (ԴԴ, 3, էջ 252): «Պիտի գնա՞ս Արտաշատ» (ԴԴ, 3, էջ 43): «Ի՞նչ պիտի ասեր» (Բակ., էջ 479):

Նախադասությունը, տվյալ դեպքում հարցական նախադասությունը ձևավորող տարրեր կոմպոնենտները փոխադարձ կապի մեջ են և ազդում են իրար վրա: Այդ տեսակետից ուշադրության արժանի է հետևյալ իրողությունը: Երբ հարկադրական եղանակով արտահայտված ստորոգյալ ունեցող հարցական նախադասության հարցումն ընկնում է ոչ ստորոգյալի վրա, այդ դեպքում բայ-ստորոգյալի հարկադրական կամ անհրաժեշտական իմաստը, այսինքն բայի եղանակային իմաստը թուլանում է: Այսպես՝ «Բա սրանք որտե՞ղ պիտի հաց ուտեն» (ԴԴ, 3, էջ 182): Այդ երևույթի պատճառն այն

է, որ հարցական նախադասութեան գործածութեան նպատակը տվյալ դեպքում ոչ թե գործողութեան կատարման անհրաժեշտութիւնն արտահայտելն է, այլ հարցումը՝ այդ գործողութեան կատարման տեղի վերաբերյալ:

Հրամայական եղանակով, որպէս կանոն, հարցական նախադասութիւն չի արտահայտվում, և կարծես թե, սպասելի էլ չէ, որ հրամայական եղանակի բայաձևն առնվի հարցման տակ: Սակայն երբեմն հրամայական եղանակի բայաձևն իր վրա կրում է հարցում: Դա լինում է այն դեպքում, երբ խոսողը ցանկանում է որևէ պատճառով (չիմանալու, չհամաձայնվելու, զարմանքի և այլն) հարց տալ խոսակցի, որևէ մեկի կամ իր արտահայտած հրամայական եղանակի բայաձևի գործողութեան մասին:

Օրինակ՝ «Է՛, եղբայր, որ կռիվ գա, բա աշխարհը կվերցնես կտաս, թե առ տա՞ր» (ԴԴ, 3, էջ 282): Նա ասաց՝ զնա՞: Դու նրան ասացիր՝ արի՞:

Հարցական նախադասութիւնների ստորոգյալը կարող է բաղադրյալ լինել:

Օրինակ՝ «Ո՞րն է ճշմարիտը, ո՞րն է սուտը: Ի՞նչն է ճշմարիտը, ի՞նչն է սուտը» (Իս., Աէ, էջ 11): «Անահիտ, հիվա՞նդ ես» (ԴԴ, 3, էջ 272): «Տիկին, ո՞ւր է Ելենան» (Մուր., 1, էջ 114):

Վերջապէս, հարցական բնույթ կարող են ունենալ անգնմանախաղաղութիւնները, ինչպէս և սակաւ դեպքերում անհնթակա նախադասութիւնները:

Օրինակ՝ «Ի՞նչ ասել նրանց, ինչպե՞ս շնորհակալ լինել մեր զոհված ընկերների փոխարեն» (Անթ., էջ 323): «Էլ ի՞նչ երազի պատրանքով խաբվիլ, եվ ի՞նչ խոսքերով զրուցել հիմա» (ՎՏ, էջ 126):

Հարցական նախադասութեան մեջ արտահայտված հարցման էութիւնը, նպատակը միօրինակ չեն: Այդ նախադասութիւններն ունեն բազմապիսի կիրառութիւններ:

Հարցական նախադասութիւնը գործածվում է, նախ, չիմացածի վերաբերյալ հարց արտահայտելու համար, հար-

ցումն արվում է շիմացածն իմանալու նպատակով: Այդպիսի դեպքերում սովորաբար հարցին պատասխան է սպասվում:

Օրինակ՝ «Սա ի՞նչ բան է,—հետաքրքրվեց նա:—Ձիարշավ է,—ասաց Ատոմը:—Տղաներ են» (ԴԴ, 3, էջ 136): «Մի՞թե մենք զորական ենք դառնալու:—Այո՛, զորական: Դա է ձեր ուղին» (ն. տ., էջ 46): «—Արմեն, ինչպե՞ս է տրամադրությունը:—Շատ լավ է, ընկեր Արամյան» (ԹՈԶ, էջ 291):

Հարցական նախադասությունների այս կիրառությունը կարիք է զգում ավելի պարզաբանումների ու մանրամասնումների: Այն, ինչ ենթակա է բացատրման, պարզաբանման, կարող է խոսողին անհայտ լինել բոլորովին և ոչ բոլորովին, այլ՝ մասամբ, և միայն ճշտման անհրաժեշտություն զգացվել: Այս տարբեր բնույթի հարցումների արտահայտման համար կիրառվում են լեզվական տարբեր միջոցներ:

Առաջին դեպքում հարցական նախադասության մեջ խիստ էական դեր են կատարում հարցական-հարաբերական դերանունները, քանի որ վերջիններս ունեն առարկայի, հատկանիշի խիստ անորոշ իմաստ՝ լեզվի մեջ եղած բոլոր մյուս քառերի համեմատությամբ:

Օրինակ՝ «Ի՞նչ է ասում հրովարտակի մասին:—Ոչինչ» (ԴԴ, 3, էջ 92): «Ո՛ւր է, ո՛ւր է,—հարցրեց՝ մյուս ձայնը:—Տե՛ս կուսերեսենց տպն մոտ» (ԴԴ, 3, էջ 116): «Ի՞նչը բերեմ, այ մարդ:— Արաքսը բեր» (ն. տ., էջ 121):

Այս հարցերը տրված են՝ խոսողի համար միանգամայն անհայտ առարկայի, հատկանիշի մասին:

Ծանոթություն.— Խոսքը վերաբերում է այդ և նման հարցական նախադասությունների բուն էությանը. այլ բան են, օրինակ, քննությունների ժամանակ տրվող, այլև միտումնավոր հարցումները, որոնց պատասխանները թեև սովորաբար հայտնի են լինում խոսողին, բայց միևնույն է, հարցումը, որպես այդպիսին չի տարբերվում խոսողին բոլորովին անհայտ առարկայի, հատկանիշի մասին տրվող հարցումից:

Հարցական նախադասությունները գործածվում են, ինչպես ասվեց, նաև այն ժամանակ, երբ խոսողը ենթադրաբար կամ այլ ձևով որոշ տեղեկություն ունի առարկայի, հատկա-

նիշի մասին, բայց անհրաժեշտ է լինում այն իմանալ որոշակիորեն: «Աշոտը վերադարձավ Մոսկվայից» նախադասությունը չի կարող գործածել այդ նախադասությամբ արտահայտված մտքից բոլորովին անտեղյակ մարդը: Մարդ այդ հարցը կարող է տալ այն դեպքում, եթե ենթադրում է, լսել է, հասկածում է, որ Աշոտը պետք է այդ օրերին վերադարձած լինի: Այսպիսի հարցական նախադասությունների պատասխանը կարող է արտահայտվել եղանակավորող որևէ բառով, հատկապես՝ այո, ոչ բառերով:

Օրինակ՝ «—Ուրեմն դուք միայն երեք օր է, Երևանում եք: —Այո՛» (ԱՍ, ՈՄ, էջ 22): «Դու երևի մտադիր ես բժշկական զնալ, հա՛: —Ո՛չ» (ն. տ., էջ 85): «Ուրեմն, դու զնո՞ւմ ես: —Այո, մայրիկ» (ն. տ., էջ 89): «Դուք դասի՞ եք զնում, ընկեր Դովլաթյան: — Այո, տասներորդ դասարանում դաս ունեմ» (ն. տ., էջ 112):

Այսպիսի հարցական նախադասությունների պատասխանը կարող է արտահայտվել նաև հարցական նախադասության ստորոգյալի, կամ այլ անդամի կրկնումով՝ խոսակցի կողմից¹:

Օրինակ՝ «—Գիտե՞ս, որ Ուլյանան ամենալավ սովորողն էր դպրոցում,—շնչաց նվան: —Գիտեմ» (ԱՍ, ՈՄ, էջ 20): «Իշխանուհու հարազատները հաճախ են հյուր լինում քո ամրոցում: —Հաճախ,—թանձր ձայնով պատասխանեց Ռշտունյաց նախարարը» (ԴԴ, 3, էջ 266): «Ուրեմն դուք նկարի՞չ եք,— հարցրեց Արշալույսը անակնկալի եկած: — Նկարիչ եմ քանդակագործ» (Անթ., էջ 224): «—Ժամանե՛լ է մարդպանը: —Ժամանել է, հազարապետ» (ԴԴ, 3, էջ 91):

Երբ նախադասության մեջ հարցման տակ են առնվում բազմակի անդամները, որոնք իրար հետ կապված են բաղադրական հարաբերությամբ (իսկ տա էլ հարցական նախադասության մեջ արտահայտվում է քե շաղկապով), պատասխանը

¹ Այդպիսի դեպքերում բալ-ստորոգյալի քերականական դեմքը, նախած անհրաժեշտության, փոխվում է. տե՛ս օրինակները:

բնականաբար այո, ոչ և նման բառերով չի կարող արտահայտվել, այլ որևէ կոնկրետ ձևով:

Օրինակ՝ «Մարգարայնը հայտնի՝ մասնակցեց, թե՞ զաղտնի... — Հայտնի, տեր իմ, բացեիքաց» (ԴԴ, 3, էջ 293): «Գինի՞ն է լավ, թե՞ նժուզը:— Երկուսն էլ» (ն. տ., էջ 118): «Քարտաշուկայուն է լավ, թե՞ շոֆերությունը:— Քարտաշուկունը լավ է» (ԹՈՀ, էջ 291):

Հարցական նախադասությունների կիրառությունների շարքում որոշակի տեղ են գրավում հոստորական իմաստով կիրառությունները: Դրանք այնպիսի նախադասություններ են, որոնք կազմված են, ինտոնացիայով հարցական են, բայց արտահայտում են հաստատական միտք:

Այսպես՝ «Առանց մարտունակության ինչի՞ է պետք սպառազենքը» (ԴԴ, 3, էջ 343): Այս նախադասությամբ խոսողի նպատակն է արտահայտել այն միտքը, որ առանց մարտունակության սպառազենքը պետքական լինել չի կարող: Թերևս պետք է հասկանալ նաև հետևյալը. սպառազենքի հետ միասին պետք է ապահովել մարտունակությունը:

Այլ օրինակներ՝ «Մենակ մարդն ի՞նչ կարող է անել աշխարհքի սարքի դեմ: Զարկես, զարկվես, օգուտն ինչ» (Իս., Աէ, էջ 87): «Հա՛րկ կա ասել, որ արեւմտահայ համբավված «պոետը» պարզապես բախում էր բաց դռներ» (ԱՀ, ՆԺ, էջ 317):

Հարցական նախադասությունները հաճախ գործածվում են հանդիմանություն կամ որևէ երևույթից դժգոհություն, որևէ գործողության կատարման մերժում արտահայտելու նպատակով:

Օրինակ՝ «Քե՛զ ինչ, ուր եմ գնում, ինչո՞ւ ես հետևում ինձ,— բա՛րկացայտ պատասխանեց՝ Լիլիթ» (Իս., էջ 329): «Զե՛ղ հետ չե՛մ,—սպառնաց Վասակը» (ԴԴ, 2, էջ 56): «Է՛,

¹ Մենք դիտմամբ ընդգծում ենք հեղինակային խոսքի մեջ գործածված որոշ բառեր, որոնք բնութագրում են տվյալ հարցական նախադասության էությունը. նպատակը:

ի՞նչ եք նստել,—հանկարծ զայրացավ Մարկոսը» (ԴԴ, 3, էջ 131):

«Ի՞նչ եք ծիծաղում,— շարացավ Մարիամը» (ՍեՀ, էջ 213): «Ո՞ւր է խաղաղությունը, ո՞ւր է զորությունը, ո՞ւր է արքան,— գոչեց արքան խստագին, ոչ իր, այլ ուրիշի ձայնով, հոգեկան մեծ խռովքի մեջ, մեծ զայրույթով» (ԴԴ, 6, էջ 282): «Զգիտես ո՞ւմ էր հարկավոր այս արդուզարդը, այս անմիտ ցույցը,—մըմըբաց Սյունյաց նախարարի կողքով դուրս ելնող Ուրծնա նախարարը» (ն. տ., էջ 283—284): «Բայց զո՞րքը ու զորավա՞ր ուղարկել, որ կանչի իր մոտ ստորացնելու՞: Ո՞ւր ենք գնում, տյարք, լավ խորհո՞ւմ եք այդ մասին» (ն. տ., էջ 293): «Նծույզդ տամ, տանեք թաղեք մորուտներո՞ւմ,—մեք-մեց Մարկոսը» (ԴԴ, 3, էջ 130):

Այսպիսի նախադասությունները սովորաբար եթե ունեն հաստատական բնույթի կազմություն, ապա մտքով ժխտական են լինում, ժխտում են արտահայտում, և, ընդհակառակը, եթե ձևով ժխտագան են, մտքով լիծում են հաստատական:

Հարցական նախադասությունները երբեմն արտահայտում են խորհուրդ, ցուցում, խնդրանք խոսակցին՝ կատարելու այս կամ այն գործողությունը:

Օրինակ՝ «Նեղություն չէի՞ք կրի օգնել, ինձ:—Կարելի՞ է մի թերթ խնդրել,— ասաց նա և փողը տվեց լրագրավաճառին»: «Լավ չի՞ լինի՞ ձեր տեղը զիջեք այն ընկերոջը»:

Երբեմն հարցական նախադասության մեջ հեռտրականությունն ու հանդիմանությունը տեղ են գտնում միաժամանակ. հարցական նախադասությունն ունենում է և՛ մեկի, և՛ մյուսի տարրը, հատկանիշը:

Օրինակ՝ «Ի՞նչ հարկավորություն ունիմ էլի նահատակ լինելու: Այդ ի՞նչ խելագարություն է, որ ես ուրիշից պարտք անեմ ապրեմ, Հյուսիսափայլի համար տիվ և գիշեր աշխատեմ, բայց Հյուսիսափայլից մի կոպեկ չստանամ, այդ ո՞ր պրքի մեջ գրված է: Եվ ո՞ր մարդը, որ չունեի բնակություն, կերակուր և զգեստ, կարող է գործ կատարել և այն ձրի» (Մ. Նալբանդյան):

Հարցական նախադասութիւնները երբեմն գործածվում են զարմանք արտահայտելու համար՝ որևէ գործողության, երևույթի մասին:

Օրինակ՝ «Ա՛յ մարդ, ճի՛շտ ես ասում» (Անթ., էջ 29): «Ուստիան, — Վա՛յ, էս ո՛նց եղավ: էս դրուստ է՞, թե՛ երազ է: (Առաջ է գալիս և զարմացած նայում Նազարին), էս ի՞նչ բանի ես, ա՛յ մարդ» (Անթ., էջ 76):

Հարցական նախադասութիւնները երբ գործածվում են բարդ նախադասության մեջ, զուգակցվելով հրամայական, ինչպես և պատմողական երանգի նախադասութիւնների հետ, երբեմն արտահայտում են պայման:

Օրինակ՝ «Մարդ պետք է խելացի լինի: Մի փոքր նվաստացնո՞ւմ են, համբերիր, ծաղրո՞ւմ են՝ տար, գլուխդ խոնարհ պահիր՝ կբարձրանաս մի օր» (Դվ., էջ 421): Այս օրինակը կարելի է արտահայտել նաև նախադասության թե՛ հարցական և թե՛ հրամայական տարրը վերածելով պատմողականի: Վազմենք այդպիսի մեկ տարբերակ: «Մարդ պետք է խելացի լինի: Եթե մի փոքր նվաստացնում են, պետք է համբերել, եթե ծաղրում են, պետք է ստանել, գլուխը խոնարհ պահել, և մարդ կբարձրանա մի օր»: Թեկենք մեկ օրինակ էս: «Իշխանութիւն կա՞՝ ձեռքումդ, հարո՞ւստ ես, ուրեմն ամենալավ, ամենապատվելի մարդն ես դու հայերի մեջ...» (Մ: Նալբանդյան): Այս նախադասութեամբ ոչ թե արտահայտվում է խոսակցին ուղղված հարցում և ոչ թե նրան վերագրվում է հատկանիշ, այլ դա մի ընդհանրացնող միտք է (ոչ հատկապես խոսակցին վերաբերող), որ արտահայտել է ժամանակի վերնախավերի նկատմամբ ռիսով լցված ու դառնացած Մ. Նալբանդյանը:

Սակայն միշտ չէ, որ հարցական նախադասութիւնը կամ նախադասության հարցական մասը պայման արտահայտելիս ունենում է այդքան լայն ընդհանրացնող նշանակութիւն:

Օրինակ «—Մաթոս, գիշերահան ազատի պես կռավիլ մի, բա իսկի քո ոչխարիցը մեկն ու մեկը քարափիցը վեր չի բնկնո՞ւմ...»

—Վեր է ընկնո՞ւմ՝ արբու՞մի պես բուրդը պետութեանն ենք տալիս, միսն էլ խորոված ենք անում...» (ՎԱ, ԼԿ, էջ 277):

«Արամ ասածս էլ մարդ հո չի, կրակ է, կրակ: Խոսքը բերանիցը դուրս եկա՞ւ՝ չի թողնի սառչի, կկատարի»¹ (Ն. տ., էջ 272):

Հարցական նախադասութիւնները կարող են արտահայտել խոսողի երկբայական վերաբերմունքը: «Իսկ ինչպե՞ս պարզել: Զգնա՞լ տունն» (ՍԱԼ, էջ 18): Այդպիսի նախադասութիւններին մոտ են երկընտրանք արտահայտող հարցական նախադասութիւնները:

Օրինակ՝ «Արդո՞ք թույլ տալ, որ հայ ժողովուրդը և, առաջին հերթին, նրա միջից ելած երիտասարդութիւնը, զենք դառնա ցարիզմի նպատակների համար, թե՞, ընդհակառակը, թեքել ժողովրդի և երիտասարդութեան համակրանքն ու մարտական կարողութիւնը դեպի ռուս և համաեվրոպական ռեվոլյուցիան, որը կոչված է խորտակելու ոչ միայն ցարիզմի, այլև արևմտյան պետութիւնների արտաքին ագրեսիան և ներքին ռեակցիան: Այսպես էր դնում հարցը հայ ռեւոլյուցիոն դեմոկրատիայի ղեկավարը՝ Մ. Նալբանդյանը» (ԱՀ, ՆԺ, էջ 286):

Գոյութիւն ունի նաև մի տեսակ հարցում, որ տրվում է ոչ թե խոսակցին, այլ հենց իրեն՝ խոսողին և կամ հանդիսանում է բարձրաձայն մտածելու գրուկորում: Դա հարցում է, որին խոսողը բնականաբար պատասխան չի սպասում:

Օրինակ՝ «(Պեպո) — Ո՞վ իս դուն, ի՞նչ իս դուն, ի՞նչ մարթահասարումն իս դուն, ի՞նչ անում ունիս դուն... ի՞նչ հաջաթ, ջիանձվելի վրա ինչո՞ւ իս ալիւ... Դուն խո մարթ չիս, մարթկերանց համա կերակուր է ստեղծի քիզ աստուծ...» (Գ. Սունդուկյան, «Պեպո»): «Ո՞ւր եմ գնում ես, Ո՞ւր պիտի հանգչիմ, Ո՞րը պիտի լինի կալանս վերջին» (Իս., էջ 94):

¹ Այս նախադասութիւնները մոտենում են պատմողական բնույթի նախադասութիւններին:

Այսպիսի նախադասությունների ստորոգյալն արտահայտվում է կամ առաջին դեմքով, և կամ խոսողն իրեն պայմանականորեն դիտում է որպես իր խոսակից, և այս դեպքում ստորոգյալն արտահայտվում է երկրորդ դեմքով:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հրամայական նախադասություններն արտահայտում են խոսողի թելադրանքը խոսակցին՝ կատարելու որևէ գործողություն:

Հրամայական նախադասություններն իմաստային տեսակետից շատ բազմազան են: Նրանցով կարելի է արտահայտել հրաման, կարգադրություն, առաջարկ, ցուցում, հորդոր, նույնիսկ՝ խնդրանք: Ինչպես երևում է այս թվարկումից, չնայած «Հրամայական» հորջորջմանը, քննարկվող նախադասությունների կիրառության սահմանները լայն են, և այդ նախադասությունները հաճախ շատ հեռու են հրաման լինելուց:

Ահա մի քանի օրինակներ՝ «Հրաման տուր, տե՛ր մարգարան» (ԴԴ, 3, էջ 47): «Ուրախ կաց, տիկին, մի՛ տանջիր սիրտդ այդ դառն հիշողություններով» (Բ, 7, էջ 111): «Աղա նազար, դու քո աղայությանդ վայել, հանգիստ նստիր» (Իս., էջ 356): «Իմ կողմից ներողություն խնդրիր» (Բ, 7, էջ 127): «Արամ, հոգուդ մատաղ, էն բանի մասին մտածիր... և հետևիր առողջությանդ» (ՍԱՆ, էջ 90): Ինչպես երևում է այս օրինակներից, այդ նախադասությունների «Հրամայական» հորջորջումը մեծ չափով պայմանական է: Հրամայական նախադասություններն արտահայտում են այնպիսի տարբեր իմաստներ, ինչպիսիք են հրամանը և թախանձանքը, որոնք տրամաբանորեն նույնիսկ ոչ միայն մոտ չեն իրար, այլև կարող են դիտվել որպես հակադիր բաներ:

Իսկ ինչի՞ հիման վրա են այդպիսի տարբերություններ ունեցող նախադասությունները միավորվում մեկ տեսակի մեջ, ո՞րն է ընդհանուրը այդ բոլորի մեջ: Ընդհանուրն այն է, որ չնայած մտքի տարբերություններին, այդ բոլոր դեպքե-

բում էլ խոսողը դիմում է խոսակցին՝ այս կամ այն գործն-
գությունը կատարելու թելադրանքով:

Հրամայական նախադասության կառուցվածքի մեջ
վճռական դերը պատկանում է ստորոգյալին: Հասկանալի է,
որ խոսքը վերաբերում է երկկազմ նախադասություններին:

Հրամայական նախադասության ստորոգյալն արտա-
հայտվում է հետևյալ եղանակային ձևերով.

1. Գերազանցապես բայի հրամայական. եղանակով.

«Որպես փոթորիկ, իջե՛ք ավերիչ Եվ խորտակեցե՛ք աշ-
խարհն այս զազիր, Փռչի դարձրեք այստեղ ամեն ինչ» (ՎՏ,
էջ 326): «Երգի՛ր, սեր երգի՛ր» (ՍԱԼ, էջ 96):

2. Պայմանական կամ ենթադրական կոչվող եղանակի
ապառնի ժամանակի երկրորդ դեմքով.

Օրինակ՝ «էգուց տավարը Սիմոնին պահ կտաս, կգաս
բակատեղ, համ հետդ հաց կբերես, համ մեկ կօգնես» (ՎԱ,
ԼԿ, էջ 33): «Կգաք Սանահին կայարանը... ջուրն ի վեր կհասնեք
սարերը» (Ն. տ., էջ 281): «Բոլորդ կգաք իմ գունդը...» (ԴՎ,
էջ 143): «Կկրակես անընդհատ թշնամու ուշադրությունը
գրավելու համար» (ԱՍՀ, էջ 272):

3. Ըղձական եղանակով.

Օրինակ՝ «էնպես որ էգուց ճաշին հաց հասցնես» (ՎԱ,
ԼԿ, էջ 33): «Ա՛յ տղա, է՛յ, չըլնիմ-չիմանամ որսի գնաս»
(Ն. տ.): «Իշխաննե՛ր, չծախե՛ք մեր հոգիները,—գուցե հա-
մարյա հրամայական ձայնով մռայլ զինվորը:—Չանեք ձեզ
անպատիվ» (ԴՎ, էջ 251): «Չշարժվես,—խստորեն պատվիրեց
նա» (ԱՀՄ, էջ 378):

Ըղձական եղանակի հաստատական ու ժխտական ձևերի
համեմատությունից երևում է, որ հրամայական բնույթի նա-
խադասության կազմության մեջ ըղձականի ժխտական ձևը
ավելի վճռական ու ակտիվ դեր է կատարում, քան թե հաս-
տատական ձևը: Սա հետաքրքրական և ուշադրավ է ժխտա-
կան խոնարհման էությունը, խոնարհման բնույթի հետ կապ-
ված իմաստային հատկանիշը բացահայտելու տեսակետից:

4. Սահմանական եղանակի ներկա ժամանակի երկրորդ
դեմքով.

Օրինակ՝ «Հենց այս բուպերին գնում եմ նրա մոտ և հայտնում ալդ մասին»։ «Այսպե՛ս, ահա, այսպե՛ս, հետո պտըտվում եք, շարքո՛վ, շարքո՛վ... — լավում է բալետմեյստեր Զ. Մուրադյանի ձայնը» («Երևան», 2. 11. 1960)։

5. Տարածված է բայի ըղձական եղանակի հոգնակի առաջին դեմքի գործածությունը հատկապես կոչ արտահայտող հրամայական նախադասություններում։ «Սովետական Միության աշխատավորներ։ Բոլոր ուժերը նվիրենք յոթնամյա պլանի կատարմանն ու գերակատարմանը, կոմունիզմի նյութական բազայի ստեղծմանը» (ՍՀ, 13. 10. 1960)։ «Է՛լ ավելի բարձրացնենք ստեղծագործական ակտիվությունը աշխատանքում» (ն. տ.)։ «Քաղաքի և գյուղի աշխատավորներ. պատմական ամենակարճ ժամանակում հաղթանակի հասնենք կապիտալիզմի հետ խաղաղ մրցության մեջ։ Ամերիկայի Միացյալ Նահանգներին հասնենք և գերազանցենք բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի արտադրությամբ» (ՍՀ, 13. 10. 1960)։

Բայի առաջին դեմքով արտահայտված ստորոգյալով հրամայական նախադասությունները, ի տարբերություն երկրորդ դեմքով արտահայտվածների, այն յուրահատկություն ունեն, որ առաջինների մեջ չկա խոսողի ու խոսակցի՝ առաջին ու երկրորդ դեմքերի հակադրությունը, և խոսողը խոսակցին թելադրած գործողությունը չի համարում որպես միայն ու միայն խոսակցին վերաբերող գործողություն, այլ այն դիտում է որպես նաև իրեն՝ խոսողին վերաբերող։ Այսպիսով՝ հրամայական նախադասության ստորոգյալի՝ բայի առաջին դեմքով գրվելը հաճախ ունի ոճական նշանակություն։

Ինչպես երևում է բերված օրինակներից, սահմանական, հարկադրական, ըղձական եղանակները համեմատաբար պասսիվ դեր են կատարում հրամայական բնույթի նախադասության կազմության մեջ։ Այս կիրառությունները նշված եղանակների համար երկրորդական են։ Պայմանական եղանակը (երկրորդ դեմքը) այս տեսակետից

համեմատաբար ակտիվ է, թեև նրա համար ևս դա հիմնական կիրառություն չէ:

Հրամայական բնույթի նախադասությունների շարքը պետք է դասել նաև այնպիսի միակազմ դիմավոր նախադասություններ, որոնց ստորոգյալն արտահայտված է բայի երկրորդ դեմքով (հիմնականում՝ հրամայական եղանակով): «Մի՛ լինիր ուրադի պես՝ միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ, այլ եղիր սղոցի պես՝ մին դեպի քեզ, մին դեպի մեզ»:

Անդեմ նախադասություններից հաճախ որպես հրամայական են գործածվում այնպիսիները, որոնց գերադաս անդամն արտահայտված է անորոշ դերբայով, ունենում է շեշտ, արտահայտում հրաման, կոչ, կարգադրություն և այլն:

Օրինակ՝ «Թեքվե՛լ դեպի ձախ, դեպի Փոքր Ղարաքիլիսա, այնտեղից՝ Կազաչի պոստ» (ԱՀՍ, էջ 352): «Թևանցե՛լ դերեզմանատան ճանապարհով և հարձակվել ճակատի՛ց ու կողքից» (ն. տ., էջ 360): «Խթանե՛լ, խթանե՛լ...» (ն. տ., էջ 361): «Շեշտակի հարվա՛ծ, տրորե՛լ ձիերի տակ» (ն. տ., էջ 362):

Հրամայական բնույթի կարող են լինել նաև որոշ անվանական նախադասություններ:

Օրինակ՝ «Ո՛չ մի խոսք» (ԹՈՀ, էջ 431): «Ղուռթյո՛ւն» (ԳՄՆ, էջ 491): «Դո՛ւրս,—հրամայեց Գյուտը բարձրագոչ» (ԴԴ, 3, էջ 166): «Սո՛ւս, հեթանոս» (ն. տ., էջ 182): «Առա՛ջ, առա՛ջ,—որդտաց բազմությունը» (ն. տ., էջ 384): «Քայլելով առա՛ջ... մա՛րջ» (ԴԴ, 1, էջ 699):

Հրամայական նախադասության յուրահատկություններից է այն, որ նրա ստորոգյալը մեծ մասամբ իր վրա կրում է շեշտ:

Հրամայական նախադասության բնորոշ ինտոնացիայի ուժգնությունը պայմանավորված է խոսողի վերաբերմունքով, խոսողի նպատակով: Բնականաբար վճռական հրամանի, կարգադրության բովանդակություն ունեցող նախադասության ինտոնացիան զգալի չափով տարբերվում է հորդորանքի բովանդակություն ունեցող նախադասության ինտոնացիայից:

Այսպես, հրամայական շեշտը ընդգծված է հետևյալ օրինակների հրամայական նախադասություններում: «Անձնա-տո՛ւր եղեք,— շարունակում էր գոչել աղան՝ ատրճանակի փողն այս ու այն կողմ դարձնելով» (ԱՀՍ, էջ 204): «Զհա-մարձակվե՛ք հարձակվել անգին մարդկանց վրա,— ասաց նա և սպառնալի նայեց սպային» (ԱՀՍ, էջ 230):

Մինչդեռ, օրինակ, հետևյալ նախադասություններում քննարկվող շեշտը շատ մեղմ է: «Բագրատ, ապա նայիր, նայիր,— ասաց Մուսայելյանը և ձեռքով ցույց տվեց զորա-նոցները» (ԱՀՍ, էջ 230): «Իմացիր, որդի, ցավը մարդուն է տված» (ն. տ., էջ 518): Այդ տեսակետից ավելի բնորոշ է հետևյալ օրինակը: «Ընկերներ, թույլ տվեք ղեկոմի անու-նից,— ակսեց նա հայացքը հոծ բազմությանը սեեռած,— ող-ջունե՛, ձեզ՝ տարած փայլուն հաղթանակի համար» (ն. տ., էջ 619):

Նրբամն շեշտը թույլ է լինում այնքան, որ գրավոր խոսքի մեջ չի նշվում: Դրանից չի փոխվում նախադասության բնույթը դարձյալ վերևում նշված պատճառով:

Օրինակ՝ «Դու քո՛ մասին պատմիր» (ն.-Դ., 3, էջ 48): «Աստվածո՛ սիրես, Մանե, ուշքո՛ հավարիր... Այնպես ա՛րա, որ բան չնկատվի» (ն. տ., էջ 177): «Զնեղանաս, քույրիկ...» (ն. տ., էջ 66):

Հրամայական նախադասության մեջ շեշտադրության տեսակետից հետաքրքրական կարող է լինել Նար-Դոսի «Պայքար» վեպից բերված հետևյալ տրամախոսությունը, որի մեջ գործածված են հրամայական նախադասություններ, սակայն հեղինակը ոչ բոլոր հրամայական նախադասություններում է նշանակել շեշտ: Տրամախոսությունը սառնասիրտ, անվրդով Բաղամյանի և հավասարակշռությունից դուրս եկած, Բաղամյանի նկատմամբ վրդովմունքով լցված Մանեի տրամախոսությունն է: Նար-Դոսը գրավոր խոսքի մեջ շեշտադրությամբ կարողացել է ներկայացնել նրանցից յուրաքանչյուրի խոսելու տոնի բարձրությունը մյուսի համեմատու-թյամբ, և դրանով է՛լ ավելի ամբողջական դարձրել նրանց հոգեվիճակի պատկերը այդ պահին: Բերում ենք տրամախո-

սությունը՝ քննարկվող հարցի համար ոչ կարևոր որոշ նախադասությունների կրճատումներով:

— Լոի՛ր, օ՛ձ,—աղաղակեց նա (Մանեն) անզուսպ կատաղությամբ:

...Հեռացի՛ր, գնա՛, հանգի՛ստ թող ինձ...

— Մանե, բաց արա:

—Հեռացի՛ր,— լսվեց ներսից Մանեի ջղային կատաղի աղաղակը:

— Խելագարվե՛լ ես, ի՞նչ է:

— Այո՛, խելագարվել եմ, հեռացի՛ր:

— Բաց արա, ասում եմ:

— Ձեմ բանալ, հեռացի՛ր:

— Բան եմ ուզում ասել:

— Ձեմ ուզում, հեռացի՛ր:

—Դու հիմարություն մի անիր, բաց արա:

Ա՛խ, չե՛մ ուզում քեզ տեսնել, լսո՞ւմ ես, չե՛մ ուզում, չե՛մ ուզում, չե՛մ ուզում...

— Մանե, բաց արա: Խնդրում եմ» (Ն.-Դ., 3, էջ 111—113):

Այս փաստն իսկ ցույց է տալիս, որ հրամայական նախադասությունների շեշտը գրավոր խոսքի մեջ ոչ միշտ է պետք դնել և դա պայմանավորված է նախադասության երանգային նրբին հատկանիշներով:

Դա վերաբերում է մասնավորապես հրամայական եղանակի բայաձևով արտահայտված ստորոգյալ ունեցող նախադասություններին, քանի որ բայի հրամայական եղանակային իմաստը տվյալ դեպքում պայմանավորում է նախադասության համապատասխան բնույթ: Ուրեմն այս դեպքում որոշող դերը կատարում է եղանակի կատեգորիան:

Իսկ երբ նախադասության ստորոգյալն արտահայտվում է այլ եղանակային ձևերով և կամ նախադասությունը միակազմ է, նախադասության հրամայական բնույթի ձևավորման համար շեշտը համեմատաբար ավելի անհրաժեշտ է դառնում:

Օրինակ՝ «Հետո դարձավ մոտը կանգնած Հակոբին ու Միհրանին և ասաց. կմտնե՞ք քաղաք, իմա՛ց կտաք ներսում եղած մեր մարդկանց» (ԱՀՍ, էջ 459): «Չսարսափե՛ս դու ամեհի երթից այդ» (ԵԶ, էջ 531): «Խուճապի շմտանվե՛լ, — դարձավ նա մարտիկներին: — Կրակ բացելով դո՛ւրս գալ Գեղուտը և այնտեղից ուղիղ դեպի Ղզլշախախ» (ԱՀՍ, էջ 442): «Ամրացնե՛լ սվինները, առա՛ջ, իմ ետեից» (ն. տ., էջ 234):

Նման պարագաներում նախադասության շեշտը ճիշտ չգործածելու դեպքում կարող է փոխվել նախադասության միտքը, հետևապես և բնույթը:

Օրինակ, «Ոչ մի պատասխան» նախադասությունը պատմողական առոգանությամբ կնշանակի «Ոչ մի պատասխան չեղավ (չտրվեց, չտվեց, չսվեց և այլն)»:

Օրինակ՝ «Բախեց դուռը: Ոչ մի պատասխան» (ԴԴ, 2, էջ 292): Մինչդեռ նույն նախադասությունը հրամայական ինտոնացիայով կնշանակի «Ոչ մի պատասխան մի՛ տա, մի՛ տաք»:

Մի այլ օրինակ. «Սուրենը հրամայեց. Կրա՛կ» (ԱՀՍ, էջ 483): Այստեղ «կրակ» հրամայական նախադասություն է և արտահայտում է «կրակիի, կրակ բացիր, (բացե՛ք)» միտքը: Մինչդեռ «կրակ»-ը մի այլ դեպքում կարող է գործածվել նկարագրության նպատակով, որով հաստատվի մի տեղում կրակ լինելը, կրակի գոյությունը, հետևապես և նախադասությունն այս դեպքում կլինի պատմողական:

Հրամայական նախադասության շեշտը, ինչպես տեսանք, սովորաբար դրվում է ստորոգյալի վրա: Եթե հրամայական նախադասության ստորոգյալն արտահայտված է հարադիր բայով, շեշտը դրվում է հարադիր բայի անվանական բաղադրիչի վրա:

Օրինակ՝ «Անձնատո՛ւր եղե՛ք» (ԱՀՍ, էջ 483): «Դո՛ւրս առե՛ք սրան» (Ար., էջ 150): «Նե՛րս եկե՛ք, իշխանիկներ» (ԴՎ, էջ 137):

Անդեմ հրամայական նախադասություններում շեշտը որպես կանոն դրվում է գլխավոր անդամի վրա:

Թրինակ՝ «Ու վերջապես հեռագիր... Դիմավորե՛լ վագոն յոթ» (ՀՄ, ՄՏ, էջ 128):

Եթե հրամայական նախադասության ստորոգյալը արտահայտված է հրամայական եղանակի արգելականով կամ ժխտական խոնարհումով և ունի ժխտական օժանդակ բայ, ապա շեշտը դրվում է արգելական մասնիկի կամ ժխտական օժանդակ բայի վրա:

Թրինակ՝ «Մի՛ լար, նազելի՛ս, մի՛ լար» (Իս., Ա. է, էջ 46): «Մի՛ կանչեք ինձ, հուլյսի նոր խոսքերով ինձ մի՛ դյուլթեք» (ՎՏ, էջ 122): Դու չե՛ս գնա և չե՛ս անի այդ:

Շեշտադրության այս դեպքերը վերաբերում են հրամայական նախադասության սովորական շարադասությանը: Իսկ շրջուն շարադասության դեպքում շեշտը բնականաբար ընկնում է նախադասության այն անդամի վրա, որը տրամաբանորեն առանձնացվում և ուշադրության է առնվում:

Վերցնենք մեկ նախադասություն:

«Հիմա կատարի՛ր այս հանձնարարությունը»:

Այս նախադասությունն ունի սովորական շարադասություն, որի պատճառով շեշտը դրված է ստորոգյալի վրա: Սակայն, նայած խոսքի նպատակին, կարող է այդ նախադասությունը գործածվել շրջուն շարադասությամբ, և համապատասխանաբար կփոխվի տրամաբանական շեշտի տեղը: Այսպես՝ Այս հանձնարարությունը հիմա՛ կատարիր (և ոչ թե հետո): Հիմա ա՛յս հանձնարարությունը կատարիր (և ոչ թե այն), և այլն:

Հրամայական նախադասությունները իմաստային տեսակետից բազմազան են: Իմաստային այդ տարբերությունները հաճախ միանգամայն բացահայտ են նույնիսկ խոսքից դուրս: Սակայն հաճախ էլ նրանց երանգային տարբերությունները որոշակիորեն կարող են հասկացվել միայն խոսքի մեջ՝ կից նախադասությունները հաշվի առնելու դեպքում կամ խոսելու կոնկրետ պայմաններում:

Համեմատենք հետևյալ երկու օրինակներն իրար հետ այդ տեսակետից:

«Ջարդեցե՛ք անդուլ, անգութ, անխնա,
Ջնջեցե՛ք աշխարհն ապական ու հին,
Թող քարը քարի վրա չըմնա,
Ողջը մատնեցե՛ք հրին ու մահին» (ՎՏ, էջ 326):

«Գինի՛ բերեք, է՛յ, գինի՛ բերեք» (Իս., էջ 312):

Առանձին վերցրած, կարող է թվալ, թե առաջին օրինակը հրաման է, այն էլ շատ խիստ հրաման, իսկ երկրորդը սովորական պահանջ է, կամ նույնիսկ խնդրանք: Բայց երբ նկատի ենք առնում, որ առաջին քառատողը Վ. Տերյանինն է, գրված է ունյուցիայի տարիներին և ուղղված է բանվոր դասակարգին, հասկանալի է դառնում, որ այդ ոչ թե հրաման է, այլ կոչ: Իսկ մյուս նախադասությունը, որ սովորական պահանջի կամ խնդրանքի տեղ կարելի է ընդունել, փաստորեն դաժան Ձինգիզ խանի անառակելիորեն և անմիջապես կատարում պահանջող հրամանն է: Այնպես որ նախադասությունների երանգային նրբությունները որոշելիս անհրաժեշտ է ունենալ կոնկրետ մոտեցում:

Պետք է նկատի ունենալ նաև, որ հրամայական նախադասությունների երանգների միջև որոշակի սահմանագիծ դնելը երբեմն դժվար է, նույնիսկ կոնկրետ մոտեցման դեպքում: Այնուամենայնիվ մենք դրանք խմբավորում ենք՝ նկատի սանձալույ յուրաքանչյուր նախադասության մեջ առավել բնորոշ, առավել էական հատկանիշը:

Հրամայական նախադասություններն արտահայտում են.

1. Հրաման, կարգադրություն.

Օրինակ՝ «Տարե՛ք սրանց ամենին գլխատման հրապարակը» (Իս., էջ 310): «Շո՛ւտ հարկային մնացորդ հացը, կրելու պարկերը, զրաստը հանեցե՛ք և չափերը բերե՛ք» (ԴԴ, 3, էջ 28): «...Դարձե՛ք արևմուտ, — հրամայեց կաթողիկոսը» (ն. տ., էջ 160): «Վա՛շտ, կանգնի՛ր» (ԴԴ, 1, էջ 67): «Միսակը հասնելով նահանջող շոկատներին հրաման տվեց. — «՛չ մի քայլ ետ: Դիրքավորվե՛լ» (ԱՀՄ, էջ 337):

2. Պահանջ, դիմում որևէ բան կատարելու վերաբերյալ.

Օրինակ՝ «Աղջի՛, շայ բերեք, հաց բերեք, արաղ բերեք քեռի հեշանի համար» (Թում., 3, էջ 83): «Պղինձը ջուր լցրեք, բերեք. մի փեշ քար էլ բերեք, կրակն ածենք տաքանան» (Ն. տ., էջ 80): «Մի երկու հաստ լեհեք բերեք, մի շորս ու հինգ ուժով տղեք էլ եկեք էստեղ» (Ն. տ.):

3. Հանդիմանություն, որն արտահայտում են և՛ ժխտական կամ արգելական, և՛ հաստատական կառուցվածքի հրամայական նախադասությունները.

Օրինակ՝ «Մի՛ խոսիր այդպես խրատական ոգով, տեր վահեռույաց,—խստորեն հանդիմանեց կաթողիկոսը» (ԴԴ, 3, էջ 163): «Աղջի՛, ձայնդ քեզ պահիր» (ՍԽՀ, էջ 158): «Ա՛յ կնիկ, լեզուդ քեզ քաշիր» (Ն. տ., էջ 150): «Վերջ տուր,—գոչեց մինչև սրտի խորքը վիրավորված Արեիկը» (Ն. տ., էջ 228): «Բերանդ հավաք պահի՛» (Բակ., էջ 527): «Ընկե՛ր Աստվան, ձեզ պահել իմացեք» (ԹՈՀ, էջ 202):

4. Կոչ.

Օրինակ՝ «Կոլտնտեսականնե՛ր ու կոլտնտեսուհինե՛ր, գյուղական մեխանիզատորնե՛ր. ավելի լայնորեն արմատավորեցե՛ք կոմպլեքսային մեքենայացումը հողագործության և անասնապահության մեջ, տիրապետեցե՛ք տեխնիկային և այն ավելի լավ օգտագործեցե՛ք՝ արտադրողականությունը քարձրացնելու և ձեր աշխատանքը թեթևացնելու համար» (ՄՀ, 13. 10. 1960): «Խոպան հողերի աշխատավորնե՛ր. ամրապնդեցե՛ք և բազմապատկեցե՛ք ձեռք բերված հաջողությունները: Հասե՛ք հացահատիկի բարձր և կայուն բերքի: Ամեն կերպ զարգացրե՛ք հանրային անասնաբուժությունը: Ավելի լրիվ և ավելի խնայողաբար օգտագործեցե՛ք տեխնիկան» (ՄՀ, 13. 10. 1960):

«Ե՛լ դեմոկրատիա, ի՞նչ ու խնդուն ազմկիր ամեն կողմ,

Դո՛ւրս թափվիր մութ խուցերից և որոտա որպես հողմ» (ՎՏ, էջ 325): «Արթնացի՛ր, երկրի դարավոր մշակ, Վառվեցե՛ք, ջահեր, փողե՛ր, հնչեցե՛ք, Շողա՛, նոր կյանքի արյունավառ ծեգ, Մածանվի՛ր ազատ, կարմիր դրոշակ» (Ն. տ., էջ 322):

3. Հորդոր, ցանկություն.

Յրինակ՝ «Ծ՛րգ իմ, ձուլվի՛ր խրոխտ այս շարքերին ահա, իմ ճանկությունն էլ քո տողերում տա՛ր... Շեփոր դարձիր նրանց շրթունքների վրա, Եվ նրանց հետ քայլի՛ր դեպի ճամբար» (ՀՄ, ՄՏ, էջ 116): «Լա՛ց վերջին լացըդ, սիրտ իմ՝ մենավոր, վերջին արցունքդ հեկեկա՛, Թափի՛ր. Երազ, երգ ու սեր, օրո՛ր ու օրո՛ր, Սի՛րտ իմ, հանդարտի՛ր» (ՎՏ, էջ 113): «Լա՛վ, հանգստացի՛ր,—հորդորեց Գյուտը» (ԴԴ, 3, էջ 250):

6. Խնդրանք, աղերսանք.

Օրինակ՝ «Օ՛հ, խնայեցե՛ք, մի՛ հիշեցնեք ինձ» (Թում., 1, էջ 43):

«Լիլի՛թ, կյա՛նքս, ինձ ների՛ր: Լիլի՛թ, հոգուս հոգի, այդպես լուռ և տխուր մի՛ նայիր ինձ: Ժպտա՛, խոսի՛ր» (Իս., էջ 321): «Այո՛, այո՛, օրիորդ, ի սեր աստուծո, դուք վճռեցե՛ք» (Մուր., 1, էջ 13): «Լուռ տենչանքով, հավատով փայփայիր ու փարատիր... Փարվի՛ր, փարվիր ինձ ամուր, Մեղստո սիրով սիրիր ինձ» (ՎՏ, էջ 123): «Վեր կաց, նանի, հաց տուր մեզ» (Թում., 1, էջ 111): «Վա՛յ, չկտրես, Աստված սիրես, էս մի՛նն տհա, Տար քեզ ծառա, Միայն թե էդպես Մի ջնջիլ մեզ բնով-տեղով, Ամբողջ ցեղով» (Թում., 1, էջ 303): «Աչքերդ փակի՛ր, ինձ քնքուշ գրկի՛ր, Սուտ կյանքին խառնի՛ր երազանքը սուտ... Կրժքիս դիր դեմքը քո տխրադալուկ, Մոռացի՛ր կյանքի տառապանքը մութ, Սուտ կյանքին խառնիր երազանքը սուտ, Իմ սիրուն մանուկ, իմ քնքուշ մանուկ» (ՎՏ, էջ 61):

7. Խորհուրդ.

Օրինակ՝ «Համբերի՛ր, նավաստա՛րդ, համբերի՛ր... Մեծ մարդ ես, շափի՛ր, ձևի՛ր...» (Անթ., էջ 244): «Դու մի՛ հավատա ժպտուն աչքերին... Դու շուտ մի՛ խաբվիր ծպտուն աչքերից» (Թում., 1, էջ 120): «Մի՛ վախենար, սիրուն քուրիկ... Փախի՛ր, գնա... ինչպես մորիկ» (Թում., 1, էջ 291):

«Վերջը ոտքդ քարին կգա, հորդ խոսքից մի անցնիր, Հոր անեծքը մոր անեծք չէ, հոր անեծքից վախեցիր» (ՀԵ, էջ 167):

8. Առաջարկ, հրավեր.

Օրինակ՝ «Համեցե՛ք, դարիր ախպեր, նստիր, հաց բերեն,

Հաց անուշ արա» (Թում., 3, էջ 63): «Լավ, համեցե՛ք զնանք» (Խ. տ., էջ 83): «Նկե՛ք մեր բրուտանոցը, ընկեր Գարեգին, հայրս շատ ուրախ կլինի» (Սեւ, էջ 117):

Հրամայական նախադասության այս իմաստը մոտ է նրա խնդրանքի իմաստին, քանի որ սրա մեջ ևս խնդրանքի որոշ տարր կա, բայց իշխողը, բնորոշը, իհարկե, առաջարկի, հրավերի իմաստն է:

9. Առաջադրանք.

Այսպես, Մ. Գասպարյանի առաջին դասարանի «Հայոց լեզվի դասագրքի» (1954 թ.) մեջ կարդում ենք այսպիսի առաջադրանքներ: «Դիտի՛ր նկարները և մի պատմվածք կազմիր» (էջ 6): «Արտագրի՛ր, լրացրո՛ւ բաց թողնված մեծատառերը» (էջ 11), «Կազմի՛ր պատմվածք այս նկարներով» (էջ 15): «Արտագրի՛ր: Ընդգծի՛ր ամեն մի տողի առաջին բառի սկզբի տառը» (էջ 16): Հետաքրքրական է, և մենք բոլորովին պատահական չենք համարում, որ եթե ստորին դասարանի աշակերտների համար առաջադրանք արտահայտող հրամայական նախադասության ստորոգյալն արտահայտվում է հրամայական եղանակի եզակի երկրորդ դեմքով, որով ավելի անմիջականորեն է տեղ հասնում միտքը, ապա բարձր դասարանի դասագրքերում այդ կարգի առաջադրանքներն արտահայտվում են անդեմ բայական նախադասություններով: Ահա պրոֆ. Ա. Ղարիբյանի 5-րդ և 6-րդ դասարանների «Հայոց լեզվի դասագրքից» (1954 թ.) մի քանի օրինակներ.

«Կազմել նախադասություն և բացառական հոլովով գործածել հետևյալ բառերը» (էջ 123): «Գտնել բացառական հոլովով գործածված գոյականները և որոշել նախադասության ինչ անդամ են» (էջ 122): «Արտագրել ածականները գոյականների հետ, բացատրել ածականների նշանակությունը» (էջ 155): «Գտնել անձնական դերանունները, ցույց տալ նրանց դեմքը և թիվը, կազմել մյուս հոլովները» (էջ 178):

Այս նույն նպատակով գործածվող նախադասությունները կարող են կազմվել նաև հրամայական եղանակի հոգնակի թվով: Ինչպես՝ «Կազմեցեք նախադասություններ՝ գործածելով բոլոր ցուցական դերանունները» (էջ 179):

Բացականչական նախադասություններն արտահայտում են հիացմունք, զարմանք, կոչ, ցանկություն, բարեմաղթություն և այլն: Բացականչական նախադասությունների բնորոշ հատկանիշը յուրահատուկ բացականչական ինտոնացիան է, որ հաճախ զուգակցվում է քերականական մի շարք հատկանիշներով: Դա երևում է բացականչական նախադասությունների ճնշող մեծամասնության մեջ հենց առաջին հայացքից:

Օրինակ՝ «Ի՛նչ հասակ, ի՛նչ քնքշություն, ի՛նչ ճաշակ, ի՛նչ գրացիա» (Ն.-Դ., 3, էջ 62): «Օ՛, ո՛ւմ եմ տեսնում, քույրիկ ջան, ո՛ւմ եմ տեսնում» (Ն. տ., էջ 69): «Տե՛ր աստված, որքա՛ն գեղեցիկ է, որքա՛ն սիրում եմ» (Ն. տ., էջ 104):

Բացականչական նախադասությունը, ինչպես ամեն մի նախադասություն, բնականաբար միտք է արտահայտում, բայց այդ միտքը չի արտահայտվում որպես, այլպես ասած, օբյեկտիվորեն արված դատողություն, այլ ընդգծված կերպով կրում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի կնիքը:

Կան մի շարք կառուցվածքային հատկանիշներ, որոնք զուգակցվելով համապատասխան ինտոնացիայի հետ, ձևավորում են բացականչական նախադասություն:

Այսպես, բացականչական նախադասության ստորոգյալը մեծ մասամբ արտահայտվում է ըղձական եղանակով, այլ կերպ՝ ըղձական եղանակի ամենատարածված կիրառությունը (պարզ նախադասության մեջ) բացականչական նախադասության ստորոգյալի ֆունկցիան է: Դա բացատրվում է ըղձական եղանակի եղանակային իմաստով:

Օրինակ՝ «Ախ՛, թե այստեղ լինեիր, ինձ օգնեիր» (Անթ., էջ 21): «Թաղե՛մ սրանց թագավոր գլուխը» (Դ. Դեմիրճյան, Վարդանանք), «Լա՛վ, սիրելիս, չերկարացնե՛նք» (ԹՈՂ, էջ 427): «Իմ արցունքներն արևն առնեիր, Հաններ երկինք, դարձնեիր ամպ, Քամին նրան տանե՛ր, տանե՛ր Հեռո՛ւ երկիր տխրությամբ» (ԳՄՐ, էջ 86):

Հարցական-հարաբերական դերանունները բացականչական նախադասություններում հաճախ են գործածվում բացականչական ինտոնացիայով:

Օրինակ՝ «Ի՞նչ լավ էր, որ տեսա» (էմ., էջ 40): «Քանի՞ քանի՞ անգամ սպասել ես դողով, որ այս դուռը բանան» (ն. տ., էջ 40): «Ինչպե՞ս դու համարձակվում ես... Ինչպե՞ս դու համարձակվում ես, — աղաղակեց Հեղինեն ցավագին» (Ն.-Դ., 3, էջ 38): «Ո՞վ իմանա, քանի՞ ուժեր է նետել նա ցած, քանի՞ անգամ շաղել տանիքների վրա և այս փողոցներում» (ՄՏԲ, էջ 270):

Բացականչական նախադասությունների ձևավորման մեջ կարևոր դեր են կատարում ձայնարկությունները:

Օրինակ՝ «Եվ վերջալույսին մի օր, օ՛ր, մի օր Մանիշակադույն սարերի լանջին Բացվեինք իրար խոսքերով չնչին, բայց ուխտը լինեք անխարդախ ու խոր» (ՎՏ, էջ 201): Այստեղ բայի ըղձական եղանակը ևս որոշ դեր կատարում է նախադասության բացականչական երանգի ձևավորման հարցում:

Բացականչական նախադասությունների կազմության քննարկումից երևում է, որ հաճախ պատմողական նախադասությունն արտահայտվելով բացականչական ինտոնացիայով՝ վերածվում է բացականչականի: Այս դեպքում բացականչական նախադասությունը, որպես այդպիսին, ձևավորվում է ինտոնացիայի միջոցով միայն: Այսպես, «Ծառ լա՛վ է, շատ լա՛վ...» (ԹՈՀ, էջ 148) նախադասությունն առանց բացականչական ինտոնացիայի կլինի պատմողական: Հիշեցնենք, որ, ինչպես ասվեց վերևում, պատմողական նախադասության որևէ անդամը բացականչումով արտահայտելիս նա անպայման չի վերածվում բացականչականի:

Սակայն կան բացականչական նախադասություններ, որոնց բացականչական ինտոնացիան հնարավոր չէ վերածել պատմողականի, քանի որ նրանց կազմության մեջ որոշ բաղադրիչներ, որոշ հատկանիշներ այդ անել թույլ չեն տալիս: Հենց սրանք էլ բուն բացականչական նախադասություններն են: Դրանք, ամենից առաջ, այն նախադասություններն են,

որոնց կառուցվածքի մեջ կարևոր դեր են կատարում հարցական-հարաբերական դերանունները (ոչ հարաբերականի ֆունկցիայով):

Օրինակ՝ «Ի՞նչ լավ էր էն աղջիկը, ի՞նչ լավն էին նրա ժպտուն, զվարթ աչքերը, ի՞նչ լավն էր էն ապահով տաք սենյակը» (Թում., 3, էջ 90): «—Ինչե՛ր քաշեցինք մենք ճանապարհին,—շարունակեց մորաքույրը, Եվայի մորը՝ տիկին Մարիամին դիմելով» (ԱՍ, ՈՄ, էջ 34): «Ինչքա՛ն եմ սիրում նրան» (ն. տ., էջ 39): «Օ՛, ինչպե՛ս քաղցր է երկինք վերանալ, Վիշտ, հոգս մոռանալ, Լուսնի փայլի մեջ լողալ, սա՛վառնել, Աստղերը զրկել» (Հ. Հակոբյան): «Ինչպիսի՞ հերոս ընկերներ մեռան, Մեռա՛ն՝ չկորան» (Հ. Հակոբյան): «Այս ինչպե՛ս, ինչպե՛ս... Այս ին՛չ փոթորիկ, մրրիկ հեռատես նրկրաշարժ ահեղ, Անողոք հեղեղ Քանդեց, ավերեց՝ կարգերն անցյալի եվ հավասարեց հողի ու ջրի» (Հ. Հակոբյան): «Այս ի՛նչ կրակի մեջ է ընկել Մովսեսը» (Անթ., էջ 21): «Որքա՛ն կոլեկտիվ հոգսեր կան թաքնված նրա սրտում, քանի՛ կոլխոզ, գործարան ու ժողով պիտի գնա հարվածային այս օրերին» (Անթ., էջ 23):

Այս և նման նախադասությունները ինտոնացիայի՝ փոփոխումով հնարավոր չէ վերածել պատմողականի, բայց երբեմն հնարավոր է լինում վերածել հարցականի, իհարկե, փոխելով նաև խոսքի նպատակը:

Բացականչական նախադասությունների ձևավորման մեջ դեր ունեն նաև որոշ եղանակավորող բառեր:

Օրինակ՝ «Երանի՛ և քեզ, որ եզերքին Կանաչ խնդու՛թյուն, սեր պիտի երգես... Թե երգդ էլ նման լինի մեր երգին՝ Երանի՛ և քեզ, երանի՛ և քեզ» (Անթ., էջ 337):

«Թող կայծեր ցայտեն քո սմբակներից, Թող շանթեր տեղան մեզ վրա վերից» (Անթ., էջ 332):

Հաճախ է պատահում, որ վերևում թվարկված տարբեր հատկանիշները հանդես են գալիս միասնաբար:

Օրինակ՝ «Հը՛, ինչպե՛ս կարելի է» (ԴՎ, էջ 57): «Ա՛խ, ինչքա՛ն վիշտ, ինչքա՛ն տանջանք, ինչքա՛ն անհույս գան-

գառ կար այդ քաղցր ու դաժան հնչյունների մեջ» (Իս., Ա է, էջ 63): «Ա՛խ, երանի չէ՞ր բյուր և բյուր անգամ, Որ կույր ու անգետ լինեի կրկին» (ՎՏ, էջ 120): «Է՛, Ի՛նչ շարչարանք քաշեց գլուղը, քանի՞ մարդու ծեծեցին» (Բակ., էջ 81): «Ա՛խ, Ի՛նչ լավ էր էնտեղ» (Թում., 3, էջ 235):

Բացականչական նախադասությունների շարքում կարելիոր տեղ են գրավում անդեմ նախադասությունները, հատկապես բայական կազմություն ունեցող, համեմատաբար քիչ չափով նաև անվանականները:

«Ա՛հ, այս ցուրտ երկրի անհայտում անհուն
Ընկնել և՛ կարշել, և՛ ննջել հավետ,
Ոչնչանալ ու մոռացվել քեզ հետ,
Ավերված՝ երազ—հայրենական տուն...» (ՎՏ, էջ 124):

Հիշենք, որ բայական այսպիսի կառուցվածք ունեցող անդեմ նախադասությունները ակտիվ դեր են կատարում հրամայական նախադասության կազմության մեջ: Բայց եթե հրամայական նախադասությունը ինչպես առհասարակ, այնպես էլ նման դեպքերում արտահայտում է թելադրանք խոսակցին՝ կատարելու բայով արտահայտված գործողությունը, ապա այստեղ անորոշ դերբայով արտահայտված գործողություն կատարելը հենց իր՝ խոսողի, ցանկությունն է և իրեն է վերաբերում:

Բերենք այլ օրինակներ:

«Սիրել ու կրկին սիրել խնդագին,
Փայփայել քնքուշ, լինել հարազատ,
Հեռանա՛լ, դառնա՛լ կրկին ու կրկին,
Անհուն աշխարհում բացսիրտ և ազատ» (ՎՏ,

էջ 109):

«Ռայաթին գռել են, գռիել են, թալանել են, հոգին հանել են, միսը շնեբին տվել: Զուլո՛ւմ, զուլո՛ւմ, զուլո՛ւմ» (Իս., Ա է, էջ 65):

Բացականչական նախադասության ինտոնացիայի համար բնորոշը բացականչումն է, որը կարող է լինել նախա-

դասութեան տարբեր անդամների վրա: Մեծ մասամբ բացականչական ինտոնացիան ընկնում է այն բառերի վրա, որոնք առավել բնորոշ են բացականչական նախադասութեան համար: Այդպիսի բառեր են, ինչպես տխսանք վերևում, ձայնարկությունները, եղանակավորող բառերը, բայի ըղծական եղանակը, հարցական-հարաբերական դերանունները (տե՛ս վերևի օրինակները): Բայց, իհարկե, դա բացարձակ կանոն չէ և երբեմն շեղումներ լինում են նախադասութեան տրամաբանական շեշտի տեղափոխութեան պատճառով:

Բացականչական նախադասությունները երբեմն արտահայտվում են ոչ թե սովորական բացականչությամբ, որ գրութեան մեջ արտահայտվում է երկարացման նշանով, այլ շեշտով:

Օրինակ՝ «Վա՛հ, ի՛նչքան նման է» (Թում., 3, էջ 229):

«Մեր դաշտերում համայնական Թո՛ղ հնչի երգը լիաթոք, Փո՛ղ հնչի թող իմ հաղթական, իմ նոր երկրում արևաշող» (ԳՍԲ, էջ 67): «Բարե՛ւ, ընկերնե՛ր» (ԵԶ, էջ 402): «Փա՛ռք և երկրպագություն նրա լուսեղեն անվան» (ՎՏ, էջ 462):

Թեև բացականչական նախադասությունների մեջ բացականչական ինտոնացիան ընկնում է մեկ, երկու, համեմայն դեպս սահմանափակ թվով բառերի վրա, բայց այն իր էությամբ վերաբերում է ամբողջ նախադասությանը:

Պետք է նկատի ունենալ, որ ամեն մի նախադասության մեջ բառի բացականչական առոգանություն ունենալը դեռևս հիմք չէ այդ նախադասությունը բացականչական համարելու:

Օրինակ՝ «Գեղը փնչացնում է, վերևից սկսում է ծիկրատել, թաքուն նայել դեպի ներքև, միզը ձգո՞ւմ է, ձգո՞ւմ է, էնքան ձգում է, որ էլ չի կարողանում իրան պահի, թրք՛մփ, ընկնում է ուղիղ կոթի մեջը՝ խեղդվում» (Թում., 3, էջ 325): «Շա՛տ-շատ տարի առաջ ճապոնական ծովի ափին մի ջահել ձկնորս է լինում, անունը Ուրաշիմա» (ն. տ., էջ 235): «Ունեիր գանգո՛ւր, գանգո՛ւր մազեր, Փայտե փոքրիկ նժույգ ունեիր. Սիրում էր նա խաղալ, վազել, Մինչև մթին տուն գար քնեիր» (Անթ., էջ 332): «Նստեց տղան՝ ճամփի քարին, Նայե՛ց, նա-

չե՛ց նա շարունակ, Չէր երևում ճանապարհին Ո՛չ ձիավոր
ո՛չ արեգակ» (Անթ., էջ 333):

Այս նախադասություններում էլ բացականչական ինտո-
նացիայի տակ են մեկական անդամ, և այդ առոգանության
դերն էլ այդքանով սահմանափակվում է ու չի տարածվում
նախադասության մյուս անդամների, ամբողջ նախադասու-
թյան վրա: Ուստի դրանք մնում են որպես պատմողական
նախադասություններ:

Բացականչական նախադասություններն իրենց իմաստ-
ներով ու կիրառություններով բազմազան են: Դրանք արտա-
հայտում են.

1. Առարկայի, երևույթի, սրանց հատկանիշների նկատ-
մամբ խոսողի դրական վերաբերմունքը, առավելապես
հիացմունքը:

Օրինակ՝ «Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վրա Անցնում օրերն,
անո՛ւշ, անո՛ւշ, Անրջային, թեթևասահ, Ամպ ու հովերն
անո՛ւշ, անո՛ւշ... Ա՛խ, ի՛նչ հեշտ են սարի վրա Սահում
ժամերն անո՛ւշ, անո՛ւշ, Շվին փշեց հովիվն ահա—Աղջիկն ու
սերն անո՛ւշ, անո՛ւշ» (Թում., 1, էջ 136): «Ա՛խ, որքա՛ն
փարթամ կյանքը ծաղկում է Մատաղ կրծքի տակ» (Թում.,
1, էջ 92): «Այս ի՛նչ քաջ տղա է, այս ի՛նչ լավ ցրիչ» (ԵՁ,
էջ 397): «Օ՛հ, ի՛նչ գեղեցիկ էր նա» (Իս., Ա է, էջ 18): «Այդ օ-
ձաձև ապարանջանները որքա՛ն գեղեցիկ են, որքա՛ն խոր-
հուրդ կա դրանց մեջ» (Բ, 7, էջ 47):

2. Ցանկություն, իղձ, տենչանք.

Օրինակ՝ «Ա՛խ, ես երանի Կայծակ լինեի, Որոտ-ճայ-
թյունով Մռայլ ամպերից Ժայթքեի ըմբոստ, Զարկեի ուժգին,
Պատեի խավար Կամարը երկնի» (Թում., 1, էջ 60):

«Օ՛, երկինք մոխրակուտակ, օ՛ անձրև երկնի արցունք.

Օ՛, զեփյուռ, մաքուր համբույր, օ՛, երկինք մոխրակու-
տակ,

Ա՛խ, ծագեր արփին հանկարծ, վառվռոն որպես ար-
բունք,

Ոչ մոխիր լինեի երկնում, ոչ տեղար անձրև արցունք»

(Գ. Սարյան):

«Երանի՜ թե Ռուբենն այստեղ չլիներ» (ՍԽՀ, էջ 212),

«Ա՛խ, երանի լիներ բեմի շորեր հագին, ու մահանար ինչպես բեմում էր մահանում» (ԳՍԹ, էջ 26):

«Աշխարհը սրտիս մե՛ջ առնեմ ես
Ու սրտանց մորմոքե՛մ, հիանա՛մ,
Թե ապրեմ, թող սրտո՛վ ապրեմ ես,
Մահանամ, թող սրտի՛ց մահանամ...»

(Ս. Կապուտիկյան):

Սրանց մոտ են մեկի կամ մի բանի նկատմամբ խոսողի երանական վերաբերմունքն արտահայտող նախադասությունները:

Օրինակ՝ «Երանի՜ նրան, որ արդար ձեռքով Փորել է այս խոր ջրանցքն ու առուն... Երանի՜ նրանց, որ սրտով զվարթ Դեռ նոր պիտի գան, նոր հուններ փորեն» (Անթ., էջ 337): «Երնե՛կ ծախն Ճյուղքի միջին Մլվլում է, թրթռում» (Թում., 1, էջ 282):

Այսպիսի նախադասությունները որոշ չափով հարում են նաև առաջին կետի տակ նշված նախադասություններին:

3. Հաճելի հիշողություններ, վերապրումներ.

Օրինակ՝ «Քանի անգամ է արտացոլվել Այս հայելու մեջ պատկերը քո, Քանի անգամ ես դու վրդովել եմ սպասել ինձ մինչև երեկո» (ՀՍ, ՄՏ, էջ 126): «Օ՛, որպիսի՜ չքնաղ դրախտային օրեր» (ԵԶ, էջ 457): «Եվ ինչքա՛ն ծիծաղեցին էն գիշեր ամենքն էլ, ինչքա՛ն ծիծաղեց Զանոն... Ի՛նչ ուրախ էր, ինչ ուրախ գիշեր» (Թում., 3, էջ 91):

4. Ողջույն, բարեմաղթություն, որոնք մեծ մասամբ արտահայտվում են միակազմ նախադասություններով.

Օրինակ՝ «Ողջո՛ւյն քեզ, անհայտ, անծանոթ ընկեր, հաղաղություն քեզ, հեռավոր եղբայր,—Ողջո՛ւյն ձեզ, վաղվա չծնված կյանքեր» (ԵԶ, էջ 7): «Ողջո՛ւյն Արխաղաշ Այուն:—Հաղթանա՛կ գործին Իլլիշի» (ն. տ., էջ 364): «Ապրե՛ս, նալ,—ասին նրանք» (Դ. Դեմիրճյան): «Բարև՛, Ստեփան» (ԵԶ, էջ 402): «Փա՛ռք քեզ, փա՛ռք քեզ, Մեր զինկոմ

Արթ» (ն. տ., էջ 421): «Գնա՛ս բարով, ա՛յ ուխտավոր» (Թում., 1, էջ 108): «Արագի՛ւ, բարո՛ւվ եկար, Հա՛յ արագիւ, բարով եկար» (Թում., 1, էջ 230):

5. Ցավակցական վերաբերմունք, անցանկալի երևույթների նկատմամբ ասիստանքի և նման զգացումների.

Օրինակ՝ «Ինչքա՛ն, ինչքա՛ն թշվառներ մեռել են անողորմ ծեծի տակ» (Իս., Ա. է, էջ 67): «Ափսո՛ս տղամարդ, կնկա փորձանքը ընկավ» (ն. տ., էջ 55): «Ավա՛ղ և բյուր ավաղ կյանքին» (ն. տ., էջ 9): «Խեղճ կին... Ի՛նչ կսկիծի հանդիպեց» (ն. տ., էջ 98): «Որքա՛ն անփորձ, որքա՛ն հիմար եմ եղել առաջ» (Ն.-Դ., 3, էջ 35): «Ալե՛ք, մի նոր վնաս կտա... Ի՛նչ արինք, ի՛նչ արինք, Ալեք... Ամո՛թ, խայտառակությո՛ւն» (Անթ., էջ 245):

Այս ենթատեսակի շարքը կարելի է դասել հետևյալ և նման նախադասությունները, թեև որոշ տարբերություն կա դրանց միջև:

Օրինակ՝ «Եվ ո՛ւմ գիտի՝ դեռես անմեղ Քանի հոգի կտանջի, Եվ ո՛ւմ գիտի ինչ մութ, ահեղ Անապատում կհանգի» (Թում., 1, էջ 135): «Փողոցները երկա՛ր Ու ձանձրալի, աշնան անձրևների նման, Փողոցները, որ կան, Փողոցների ներկան, Փողոցները դաժա՛ն, անհրապույր, շարկամ,—Որքա՛ն, որքա՛ն, որքա՛ն ահավոր են հիմա» (ԵԶ, էջ 38):

6. Կանչ, գոչ, հրավեր՝ որևէ գործողություն կատարելու, օգնության և այլն.

Օրինակ՝ «Է՛յ կանաչ ախպեր, է՛յ ճանաչ ախպեր, Արի՛, քեզ հետ բեր Արևի շողեր» (Թում., 1, էջ 234): «Մալահեցին... հա՛յ, օգնություն... Ու թաղից թաղ, ու տնից տուն, Ձե՛ն է տալիս մեկը մյուսին. Հա՛յ, օգնություն... սպանեցի՛ն» (ն. տ., էջ 330): «Գնա՛նք, դարկե՛նք, Զարդե՛նք, կրակե՛նք... Հա՛յ, հա՛յ, առա՛ջ, դե ձեզ տեսնե՛մ» (ն. տ., էջ 331): «Հա՛յ, օգնեցե՛ք, Մեռած հո չեք» (ն. տ.):

7. Նրեույթների, առարկաների, անձանց նկատմամբ խոսողի բացասական վերաբերմունք, չարամաղթություն, անեծք և այլն.

Օրինակ՝ «Ա՛յ ամոթ քեզ, Չղջիկ ու ճայ, Ի՛նչ եք լսում. վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, Անուններդ վաճառական, Ու էս տեսակ խայտառակ բա՛ն... վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, Չղջիկ ու ճայ» (Թում., 1, էջ 269): «Ա՛յ քու տունը քանդվի, ա ճայ, Ա՛յ դու դառնաս գրողի փայ» (Ն. տ., էջ 270): «Տունդ քանդվի, ա՛յ խանութպան, Անխիղճ, լիրբ, շար, Ֆլան-ֆստան» (Ն. տ., էջ 330): «Ամա՛ն, հողեմ գլուխը Շահի, Աստված Շահից հեռու պահի» (Թում., 1, էջ 344): «Անե՛ծք Շահին, իրեն գահին» (Ն. տ., էջ 346): «Թաղե՛մ սրանց թագավորի գլուխը» (ԴԴ, 3, էջ 34): «Անե՛ծք հարամանիին» (ԴԴ, 3, էջ 196):

8. Հուսահատության, տրտմության, դժգոհության զգացում.

Օրինակ՝ «Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ, Ամենին մոռանալ, Չըսիրել, չսորհել, չափսոսալ, Հեռանալ» (ՎՏ, էջ 65): «Է՛հ, անցա՛վ, գնա՛ց և՛ ցնորք, և՛ սեր, Եվ ույժ, և եռանդ—կորավ՝ ինչ որ կար» (Թում., 1, էջ 127): «Նայում եմ, նայո՛ւմ, դեռ չի լուսանում, Ա՛խ, այս գիշերներն ինչքա՛ն են երկար» (Թում., 1, էջ 127):

9. Հեզմանք, արհամարհանք, հանդիմանություն.

Օրինակ՝ «Ի՛նչ մեծ հաճույք է շղթաների այս առնական շառաշը» (Իս., Աէ, էջ 52): «Պատմողն էլ ո՛վ էր—մի խավարամիտ» (Ն.-Դ., 3, էջ 49):

«Զգիտեմ,—կամաց արտասանեց Մանեն:—Զգիտե՛ս...ինչպե՛ս չգիտես,—բացականչեց Հեղինեն» (Ն.-Դ., 3, էջ 27): «Եվ դու ինտելիգե՛նտ մարդ ես անվանում քեզ, և դու հողվածներ ես գրում բռնությունների, անարդարությունների դեմ, և դու պաշտպա՛ն էս ցույց տալիս քեզ ճնշվածներին, հալածվածներին և քեզ արմատական հայացքների տեր հրապարակախո՛ս էն անվանում, քե՛զ, քե՛զ...» (Ն.-Դ., 3, էջ 37—38):

ԽԱՌԸ ԿԱՄ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պատմողական, հարցական, հրամայական, բացականչական նախադասությունները խստորեն սահմանադադարված չեն միմյանցից: Ինչպես վերևում տեսանք, երբեմն որևէ

բնույթի նախադասութեան մեջ տեղ է գտնում մի այլ բնույթի նախադասութեան հատկանիշի որոշ տարր, բայց որովհետև վերջինս լինում է համեմատաբար երկրորդական, այդ պատճառով էլ նախադասութեան բնույթը որոշելիս հիմք ենք ընդունում առավել բնորոշ հատկանիշը:

Սակայն լինում են նախադասութիւններ, որոնց մեջ տարբեր երանգներն այնպես են համատեղում, որ հնարավոր չի լինում այդ նախադասութիւնները դասել վերոհիշյալ տեսակներից հատկապես որևէ մեկի շարքը:

Այսպես, «Օգնի՛ր, որդյակ իմ: Օգնեցե՛ք, սինյոր Բապտիստա» (Շեքս., 2, էջ 127): Օրինակի առաջին նախադասութիւնը հրամայական է, իսկ երկրորդը, թեև ծառայում է նույն նպատակին, ինչ որ նախորդը և թեև նրա ստորոգայծն արտահայտված է նույնպես հրամայական եղանակի բայաձևով (որ կառուցվածքային կարևոր հատկանիշ է հրամայական նախադասութիւնների համար), ունի նաև ընդգծված բացականշական ինտոնացիա, որը նրան տալիս է նաև բացականշական զգալի երանգ: Եվ որովհետև թե հրամայական, թե բացականշական հատկանիշները տվյալ նախադասութեան համար կարևոր են, ուստի այդ նախադասութիւնը պետք է համարել խառը բնույթի նախադասութիւն:

Բերենք խառը բնույթի նախադասութիւնների այլ օրինակներ. «Օգնեցե՛ք, հե՛յ» (Թում., 3, էջ 104): «Է՛յ, սինյոր, սինյոր. մի ետև նայեք» (Շեքս., 2, էջ 81): «Թգնեցե՛ք, օգնեցե՛ք» (Շեքս., 2, էջ 127): «Ջա՛ն, հայրենի անտառներ, դուք եք կանչում ինձ ձեր քով» (Թում., 3, էջ 208): «Հավատացե՛ք, ընկերներ, հավատացե՛ք» (ԹՈՂ, էջ 56): «Ջարդի՛ր քեզ մաշող բանտի փականքը, խեղդի՛ր քո դահճին Դարդանելում» (Էմ., էջ 54):

Նախադասութիւնների բնույթի մասին խոսելիս առհասարակ նկատի է առնվում պարզ նախադասութիւնը: Անհետաքրքրական չէ բարդ նախադասութիւնները ևս քննել այդ նույն տեսակետից, չէ՞ որ թեև դրանք կազմված են մեկից ավելի նախադասութիւններից, այնուամենայնիվ բարդ նախադասութիւնը մեկ միավոր է, հետևապես և նրա բնույթը

պետք է քննել նաև ամբողջությամբ վերցրած: Այս տեսակետից բարդ նախադասությունները կարող են լինել միատարր, այսինքն ամբողջությամբ լինել պատմողական, հարցական, հրամայական կամ բացականչական, ինչպես և կարող են լինել խառն բնույթի, այսինքն նրանց մեջ կարող են տեղ գտնել նախադասության տարբեր բնույթի հատկանիշներ:

Միատարր լինելու տեսակետից որոշ տարբերություն կա բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների միջև: Բարդ համադասական նախադասությունները կարող են լինել ամբողջությամբ պատմողական, բացականչական, հարցական, հրամայական:

Օրինակ՝ «Անպայման հավատը երկու աչքով կուրություն է, և շատ անգամ նրա հետևանքները վատ են լինում» (Ն.-Դ., 3, էջ 86): «Քանի՜-քանի՜ տեսակ փոփոխության է հանդիպել նրա բախտը, որպիսի՜ անհաջողություններ են շրջապատել նրան, և սակայն որպիսի՜ համբերությամբ ու տոկունությամբ է նա հաղթել ամեն դժվարություն» (Մուր., 3, էջ 67): «Սոֆիա, մի՞թե ես քեզ նույնն եմ տեսնում... մի՞թե գլխացավդ արդեն անցել է» (Ն.-Դ., 3, էջ 103):

«Գոտեպնդվեցե՛ք ատելությամբ վառ,
Գոտեպնդվեցե՛ք անձնազոհ կամքով,
Գոտեպնդվեցե՛ք ահեղ վրեժով,
Շառաչե՛ք ուժգին, կաղնինե՛ր հզոր,
Խոլ վրնջացե՛ք, նժույգնե՛ր խիզախ,
Մրրկի նման զարկեցե՛ք շեփոր...
Վանեցե՛ք հեռու թշնամուն վայրագ,
Մեր խրճիթներից, մեր հնձաններից,
Մեր արտ ու կալից վանեցե՛ք հեռու»

(Ավ. Իսահակյան):

Բարդ համադասական նախադասությունները լինում են նաև խառն բնույթի:

Օրինակ՝

«Էս սարը իմն է,
էս ծառը իմն է,
Ծառում փշակ կա,
Փշակում մի բուն,
էս ո՞վ է եկել
Տիրացել թաքուն» (Թում., 2, էջ 309):

«Ատում է արքան, պալատ է հասնում, պատուում է քողը
թագուհու դեմքի, պատուում է, տեսնում... բայց ի՞նչ է տես-
նում, ո՞վ է իր վահին եղել թագուհին» (Թում., 1, էջ 306):
«Հարկավ, դրանցից մինը պիտի հաղթանակեր, բայց դեռ
մինչև այդ՝ որչա՞փ հուզմունք, որչա՞փ ալեկոծություն պիտի
խռովեին նրա հոգվո ծովը» (Մուր., 3, էջ 224):

Բարդ ստորադասական նախադասությունները բնույթի
տեսակետից ունեն որոշ յուրահատկություններ:

Այս նախադասությունների գլխավոր նախադասությունը
կարող է լինել ցանկացած բնույթի՝ պատմողական, հար-
ցական, բացականչական, հրամայական:

Օրինակ՝ «Հանդես կազմելով զորքին յուր սահմանի վրա,
թագավորը կամեցավ հավաստիանալ, թե արդյոք ալդ հեծե-
լազորը յուր արտաքին կազմությանը և ահարկու տեսքին
համեմատ ունի՞ նաև ռազմական հմտություն և կարո՞ղ է ու-
տիացոց ու սևորդաց զորությունն ընկճել» (Մուր., 3, էջ
174): «Բայց դրանց կարելի՞ է համեմատել այն վշտերի հետ,
դրոնց տանում էր թագավորը» (ն. տ., էջ 76): «Օ՛, ինչպե՞ս
ցանկանում էի, որ բոլոր իշխանազն կանանց մեջ ամենից
բարձր հանդիսանայի ես, որ ամենքի աչքերն ինձ վրա նտ-
յեին» (ն. տ., էջ 59):

«Երբեք վատություն մի՛ անի, որդի՛ս,

Լավություն արա, որ չփոշմանես» (ՀՇ, ՔՆ, էջ 45):

Սակայն ամեն մի բնույթի գլխավոր նախադասությամբ
հետ ցանկացած բնույթի երկրորդական նախադասություն չի
կարող գործածվել: Այս տեսակետից ազատ է պատմողական

բնույթի նախադասութեան կիրառութիւնը, որը որպէս երկ-
րորդական կարող է ազատ գործածվել թե՛ պատմողական,
թե՛ հարցական, թե՛ բացականչական, թե՛ հրամայական
բնույթի գլխավոր նախադասութիւնների հետ:

Օրինակ՝ «Նա այլևս չէր կասկածում, որ Զազունյանը
կամ բռնորոշին չպետք է գար թատրոն, կամ թե եկել էր և,
տեսնելով, որ զինվորականն այնտեղ է, հեռացել էր անմի-
ջապէս» (Ն.-Դ., 3, էջ 275):

«Ի՞նչ հրաշքի սիրտ կա սրտում մայրական,
Որ ինչքան էլ փշրտում է որդին խենթ,
Չանցած մի պահ, չանցած վշտի մի վայրկյան՝
Կպչում է միշտ ու քեֆ անում որդու հետ»

(ՀԾ, ՔՀ, էջ 136):

Այլև տե՛ս վերևի օրինակները:

Հարցական գլխավոր նախադասութեան հետ հարցական
բնույթի երկրորդական նախադասութիւն սովորաբար չի գոր-
ծածվում: Հարցական գլխավոր նախադասութեան հետ սովո-
րաբար չի գործածվում նաև հրամայական նախադասութիւն:
Դա բռնորոշին էլ պատահական չէ, այլ բացատրվում է այդ
նախադասութիւնների հիմնական նշանակութիւններով:

Բարդ ստորադասական նախադասութեան հարցական
բնույթի գլխավոր նախադասութեան հետ շատ հազվադեպ է
գործածվում հրամայական երկրորդական նախադասութիւն:
Այդպիսի երկրորդական հրամայական նախադասութիւնն էլ
լինում է խիստ սակավաքան:

Օրինակ՝ «Կարելի՞ է արդյոք արևին ասել—լույս մի՛
տար, որովհետև ես խավար եմ ուզում—կամ հրամայել ալեկոծ
ծովին, որ նա խաղաղվի» (Ն.-Դ., 3, էջ 112):

Այսպիսի դեպքերում հրամայական նախադասութեան
սակավ գործածութեան պատճառն այն է, որ բուն հրամայա-
կան նախադասութիւնների միտքը նման բարդ նախադասու-
թեան մեջ ժամանակակից գրական հայերենի հիմնական օրի-
նաչափութեան հիման վրա ուրիշի ուղղակի խոսքից վերած-

վում է անուղղակի խոսքի և արտահայտվում է պատմողա-
բար՝ պատմողական նախադասությամբ: Հենց այդպես է վե-
րահիշյալ օրինակի վերջին նախադասությունը՝ որ նա խա-
ղաղվի, փոխանակ՝ դու խաղաղվիր: Վերահիշյալ երևույթը
ավելի սովորական է ժողովրդա-խոսակցական լեզվի համար:

Բարդ խառը նախադասությունների յուրահատկությունը
պարզ խառը նախադասությունների համեմատությամբ այն է,
որ եթե վերջիններիս մեջ տարբեր բնույթի հատկանիշները
հանդես են գալիս միաժամանակ, միաձուլված, ապա բարդի
մեջ դրանք հանդես են գալիս զուգահեռ, կողք-կողքի: Հնա-
րավոր է նաև, որ բարդ խառը նախադասության բաղկացուցիչ
երեւէ նախադասություն չինի նույնպես խառը նախադասու-
թյուն:

ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հայ քերականության մեջ վաղուց ճանաչված են անդեմ և անենթակա նախադասությունները, որպես նախադասության հատուկ տեսակներ: Դրանք տեղ են գտել ժամանակակից հայերենի քերականության դպրոցական դասագրքերում և դպրոցի ծրագրային պահանջների սահմաններից դուրս ուսումնասիրված չեն¹:

Անենթակա և անդեմ նախադասություններն ունեն կառուցվածքային, իմաստային, կիրառական յուրահատկություններ, որոնցով տարբերվում են իրարից: Այդ նախադասություններն իրարից ունեցած տարբերություններով հանդերձ, ունեն նաև էական ընդհանրություն, որով հակադրվում են երկկազմ նախադասությանը: Անենթակա և անդեմ նախադասությունների այդ ընդհանուր հատկանիշն այն է, որ նրանք չունեն երկկազմ նախադասությանը հատուկ, այսպես ասած, երկբևեռ կառուցվածք. հատկանիշը և վերջինս կրող առարկան նրանցում տարբերակված ձևով չեն արտահայտվում ենթակայի և ստորոգյալի միջոցով, որոնք, որպես այդպիսին, չկան անենթակա և անդեմ նախադասություններում²:

Այս նախադասություններում կրող, գործող առարկան և նրան վերագրվող հատկանիշը հաճախ արտահայտվում են միասնաբար, մեկ բառի մեջ: Այսպես. «Մթնեց» նախադասությունը արտահայտված է մեկ բառով, որը միայնակ արտա-

¹ Մեր սույն աշխատությունը շարվում էր, երբ ծանոթացանք ընկ. Ռ. Մկրտչյանի «Անենթակա նախադասություններ և նրանց շարահյուսական կիրառությունը» հոդվածին (Հայկական հեռակա մանկ. ինստ.-ի գիտ. աշխ. ժողովածու, № 6):

² Ստորոգյալի հարցում այստեղ պետք է անել որոշ վերապահություն:

հայտում է և՛ կրող առարկայի, և՛ վերագրվող հատկանիշի քաղաքիպրը, և այդ իմաստը մոտավորապես կարելի է արտահայտել «Մուլն ընկավ» կապակցությամբ¹:

Անհնթակա նախադասության այդ հատկանիշը, որոշ յուրահատկությամբ հանդերձ, հատուկ է նաև անդեմ նախադասությանը:

Այսպես, «—Լոն՛լ,— հրամայեց Ալեքսանդր ավազը» (Անթ., էջ 88):

«Պոլեսյա... խոլ անկյուն... Բնության գիրկ... պարզ բարձր... նախնադարյան բնավորություններ» (Կուպրին, էջ 14):

Այս և նման նախադասությունները, կազմված լինելով միայն մեկ մասից, ամփոփ միտք են արտահայտում:

Այսպիսով, թե՛ անհնթակա և թե՛ անդեմ նախադասությունների համար բնորոշ գիծ է մեկ մասից կազմված լինելը, ուստի և դրանք պետք է դիտել որպես մեկ տեսակի նախադասություն՝ միակազմ նախադասություն, ինչպես որ դիտվում է, օրինակ, ռուս, և ոչ միայն ռուս, քերականագիտության մեջ:

Միակազմ նախադասությունները բաժանվում են երկու ենթատեսակների՝ անդեմ միակազմ նախադասություններ և դիմաւոր միակազմ կամ անհնթակա նախադասություններ:

Միակազմ նախադասությունները չունեն երկկազմին հատուկ քերականական հիմնական հատկանիշներից մեկը՝ քերականորեն որոշակի կերպով ձևավորված ստորոգում, որը, սակայն, ինչպես նշել ենք վերը, չի նշանակում, թե առհասարակ գուրկ են ստորոգումից:

«Ձգտե՛լ և հասնե՛լ արտադրության առաջավորներին» նախադասությունը կոնտեքստից դուրս վերցրած էլ ավարտված միտք է արտահայտում: Քերականորեն ձևավորված ստորոգման բացակայությամբ հանդերձ, նրանում կա հարա-

¹ Այս կապակցությունը թեև իր կազմության ձևային կողմով ենթադասի և ստորոգյալի կապակցություն է, բայց և այնպես իր արդի ըմբռնմամբ լինելով մի հարադիր բայ, առանձին վերցրած դարձյալ անհնթակա նախադասություն է:

բերութիւն իրականութեան նկատմամբ, ինչպես որ կա, ասենք, «Մենք պետք է ձգտենք և հասնենք արտադրութեան առաջավորներին» կամ՝ «Դուք պետք է ձգտեք և հասնեք արտադրութեան առաջավորներին» երկկազմ նախադասութիւններում։ Միակազմ նախադասութիւններն ունեն երկկազմ նախադասութեան մշուկ կարելոր հատկանիշը՝ նախադասութեան հատուկ խտոնացիան կամ խտոնացիոն ավարտվածութիւնը, որի շնորհիվ բառերի տվյալ կապակցութիւնը արտահայտվում և ընկալվում է որպես ավարտված, ամբողջական նախադասութիւն։

Միակազմ նախադասութեան և հատկապես անդեմ նախադասութեան համար կարելոր նշանակութիւն ունեն խոսքը, խոսելու պայմանները, որոնցում գործածվում է տվյալ նախադասութիւնը։ Առաջին գլխում տեսանք, որ նախադասութեան ինքնուրույնութիւնը բացարձակ չէ, այլ որոշ չափով հարաբերական, և դա ասվեց երկկազմ նախադասութեան վերաբերմամբ։ Միակազմ և հատկապես անդեմ նախադասութիւններին դա վերաբերում է մի փոքր ավելի չափով։

Վերևում «Ձգտե՛լ և հասնե՛լ արտադրութեան առաջավորներին» նախադասութիւնը համեմատվեց երկկազմ նախադասութիւնների հետ և ասվեց, որ նա ևս մտքի միավոր է, ավարտված միտք է արտահայտում։ Սակայն ձգտելու և արտադրութեան առաջավորներին հասնելու այդ խնդրի վերաբերութիւնը որոշակիորեն կարող է հասկացվել խոսքից, խոսելու պայմաններից։ Այդ նախադասութիւնը կարող է մի դեպքում վերաբերել հենց իրեն՝ խոսողին, այդ նախադասութիւնը նաև կարող է մեկը գործածել դիմելով ուրիշներին՝ արտադրութեան մեջ ետ մնացողներին, իբրև պահանջ, կոչ՝ ուղղված նրանց, և, վերջապես, մի այլ պարագայում այն կարող է վերաբերել թե՛ խոսողին, թե՛ միաժամանակ խոսակիցներին։ Եվ դա կարող է պարզվել խոսքից, խոսելու պայմաններից։

Այս հանգամանքը, որ հատուկ է առավելապես անդեմ նախադասութիւններին, տարբեր չափով վերաբերում է նաև երկկազմ նախադասութիւններին։ Վերցնենք հենց վերևի

երկկազմ նախադասություններից առաջինը: «Մենք պետք է ձգտենք և հասնենք արտադրության առաջավորներին»: Ու՛մ է վերաբերում այդ. ո՞վ է այդ մեճ-ը: Խոսքից դուրս դա չի կարելի որոշել: Մեճ-ը կարող է նշանակել ես և նա (համեմատ. Ես ու Արամը քեզ հետ դալ շենք կարող: Մենք գնում ենք գրադարան), ես և դու, ես, դու և նա (նրանք) (Ես ու դու վատ ենք աշխատում. մենք պետք է ձգտենք և հասնենք արտադրության առաջավորներին): Վերջապես մեճ-ը մի այլ պարագայում կարող է նշանակել միայն դուք կամ միայն ես և այլն¹:

Այնուհետև, վերևի անդեմ նախադասության կառուցվածքը փոխելով կարելի է վերածել դիմավոր նախադասության. «Անհրաժեշտ է ձգտել և հասնել արտադրության առաջավորներին»: Մեզ հետաքրքրող հարցի տեսակետից այստեղ վիճակը մնում է նույնը, ինչ որ վերևի անդեմ նախադասության դեպքում էր: Կարծում ենք, որ տվելի փաստեր բերելու կարիք չկա: Բերված փաստերն էլ բավական են ցույց տալու համար, որ միակազմ նախադասությունների մտքի ուղղակի ըմբռնման համար խոսքի, խոսելու պայմանները հաշվի առնելու անհրաժեշտության հանգամանքը չի կարող կասկածի տակ առնել դրանց՝ մտքի միավոր լինելու, ավարտված միտք արտահայտելու փաստը, քանի որ նախադասությունների ինքնուրույնությունը հարաբերական է ընդհանրապես, և այդ անհրաժեշտությունը հաճախ վերաբերում է նաև երկկազմ նախադասություններին:

Նշենք նաև, որ ոչ բոլոր միակազմ նախադասություններն են, որոնց ճիշտ ու որոշակի ըմբռնման համար խոսքը կարեւոր դեր է կատարում: Հաճախ միակազմ նախադասության միտքը միանգամայն որոշակի ու ճշգրիտ կերպով հասկացվում է խոսքից դուրս:

Մտքի ինքնուրույն միավոր լինելու և այդ հիման վրա ինքնուրույն գործածվելու տեսակետից զգալի տարբերություն

¹ Տե՛ս, Ս. Աբրահամյան. Արդի հայերենի գերանունները, 1956, էջ 194—195, 279—280:

կա անդամ և դիմաժոր միակազմ նախադասությունների միջև: Դիմաժոր նախադասություններն ավելի ինքնուրույն են, քան անդամ նախադասությունները: Այսպես, «Մթնեց» նախադասության միտքը միանգամայն հասկանալի է թե՛ խոսքի մեջ և թե՛ նույնիսկ խոսքից դուրս: Մինչդեռ անդամ նախադասություններն այդպես չեն. վերջիններս պակաս ինքնուրույն են:

Վերցնենք այսպիսի օրինակներ. պատմել, պատերազմ, մեռակ, անընկեր:

Այս բառերը բայի, գոյականի կամ ածականի ուղիղ ձևվեր են և խոսքից դուրս արտասանվելով գծվար կարող են ըմբռնվել որպես նախադասություններ: Այս բառերի և «մթնեց» բայաձևի միջև այդ տարբերության պատճառն այն է, որ վերջինս բայի դիմաժոր ձև է և ունի ինքնուրույն գործածության լրիվ հնարավորություն: Ուրեմն ինքնուրույն գործածության այդ տարբերությունը բխում է նրանց կառուցվածքային ու իմաստային տարբերությունից:

Վերևում բերված բառերը նախադասություն կարող են ձևավորել ավելի շուտ խոսքի մեջ, այլ նախադասությունների հետ ունեցած կապակցության մեջ, կամ խոսելու որոշ պայմաններում: Այսպես, «Պատմե՛լ... բայց որի՞ մասին: Պարզապես անընդգրկելի է այս թաղամասի պատկերը» («Ներվան», 6.9. 1960): «Մեռակ, անընկեր: Հսկա բուռի պես ավազե մատներն աչքերիս հառած՝ ունում էր քամին» (ԵԶ, էջ 232): «Աղետ եղավ: Պատերազմ: Ու ժողովուրդը անտեր Զավակներին իր հեռու Թշնամու գեմ ուղարկեց» (ԵԶ, էջ 263):

Ինքնուրույնության տեսակետից տարբերություն կա բայական և անվանական միակազմ նախադասությունների միջև: Բայական նախադասություններն ավելի ինքնուրույն են, քան անվանականները: Այսպես, վերևում բերված օրինակներից պատմել բայը ավելի հեշտ կարող է գործածվել որպես նախադասություն, քան թե պատերազմ, մեռակ, անընկեր բառերը: Դա գալիս է այն խոսքի մասի յուրահատկությունից, որով արտահայտված է միակազմ նախադասությունը:

Բայական նախագասությունն ինքնուրույնության մեջ դեր է կատարում բայի իմաստը՝ գործողության, միճակի իմաստը, որի հարաբերությունն իրականությանը ավելի հեշտ է նշել և ընկալել, քան թե որևէ առարկայի, հատկանիշի անվան հարաբերությունը: Այնպես որ անհնթակա միակազմ նախադասությունները այդ տեսակետից ինքնուրույն են և կարող են ձրջել երկկազմ նախադասությունների հետ: Ամեն մի խոսքից դուրս էլ հասկացվում է «Մթնեց», «Անձրեում է» նախադասությունների որոշակի միտքը:

Միակազմ նախադասությունները մեծ մասամբ առանձին ինքնուրույն նախադասություններ են: Օրինակ՝ «Պատրաստ գտնվել պատերազմի, բայց չպատերազմել» (ԴԴ, 6, էջ 193): Այս նախադասությունն ամբողջությամբ վերցրած մի միակազմ նախադասություն է: Բայց քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ նախադասության մի մասն է միակազմ, իսկ մյուս մասը երկկազմ է: Այսպես՝ «ձիտե՛ն՝ նրան, ներողություն՝ խնդրել, բացատրել՝, որ մոլորվեց, կուրացավ» (Շիրվ., 3, էջ 291): «Պատմե՛լ այս թագամասի մյուս դիտական, ուսումնական օջախների՝ Շինարարական, Կոոպերատիվ տեխնիկումների, Բժշկական ուսումնարանի, Գիտությունների ակադեմիայի մի շարք գիտահետազոտական ինստիտուտների մասին, պատմե՛լ այն մասին, որ գիտական կադրերի դարձնոցի աշխատանքներին խոնջ անմիջական կամ անուղղակի աջակցությունն են քերում նրա հարևանները՝ Հայաստանի Պետական հրատարակչությունը, Հայպետուսմանկհրատը, Այ. Մյասնիկյանի անվան տեպուրիկական գրադարանը...» (Երևան, 6. 9. 1960):

Թերված միակազմ նախադասությունները կատարում են գլխավոր նախադասության դեր: Համեմատաբար սակավ դեպքերում միակազմ նախադասությունը հանդես է գալիս նաև որպես երկրորդական:

Օրինակ՝ «Շնորհքն էլ հենց սրա մեջն է, որ էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես, ջարդես հազար» (Թում., 3, էջ 191):

Պատահում է նաև, որ միակազմ նախադասությունը մտնում է այնպիսի համադասական նախադասության կազմի մեջ, որի մյուս նախադասությունը կամ նախադասությունները երկկազմ են: Օրինակ՝ «Ձիուն պայտում են, իսկ գորտը ոտն է պարզում» (առած):

Մենք մեր ուսումնասիրության մեջ նկատի ենք առել թե՛ առանձին գործածվող և թե՛ բարդ նախադասության կազմի մեջ մտնող միակազմ նախադասությունները:

Ուշագրավ ու կարևոր հարց է միակազմ նախադասությունների կառուցվածքի, ըստ անդամների վերլուծման հարցը: Այս տեսակետից նրանք ունեն որոշ յուրահատկություններ, ի տարբերություն երկկազմ նախադասությունների: Հիշենք, որ երկկազմ նախադասությունը ունենում է գլխավոր անդամներ՝ ենթակա և ստորոգյալ (եթե զեղչում չկա), և դրանցից յուրաքանչյուրն էլ կարող է ունենալ իր լրացումները, հանձինս նախադասության երկրորդական անդամների:

Միակազմ նախադասության մեջ այսպիսի որոշակի բաժանում հնարավոր չէ, քանի որ նրանում, ինչպես ասվեց վերը, ամենից առաջ տարրորոշված ձևով չկան նախադասության գլխավոր անդամները: Այնուամենայնիվ միակազմ նախադասությունները կարելի է բաժանել անդամների:

Միակազմ նախադասությունն ունենում է մեկ գլխավոր կամ գերադաս անդամ և, եթե նախադասությունն ընդարձակ է, վերջինս ունենում է իր լրացումը կամ լրացումները: Կառուցվածքի, անդամների տեսակետից տարբեր տիպի միակազմ նախադասություններ ունեն տարբեր յուրահատկություններ:

Այդ յուրահատկությունների մեջ որոշիչ դեր է կատարում այն հանգամանքը, թե գլխավոր անդամն ինչ խուսքի մասով է արտահայտված:

Այսպես, «Ժամանակին կատարիլ ստանձնած պարտավորությունները» նախադասության մեջ գլխավոր անդամն է կատարել, որը, իհարկե, ո՛չ ենթակա է, ո՛չ ստորոգյալ, բայց իր քերականական դիրքով, հարաբերությամբ գերադաս դրո՞ւմ է մյուսների համեմատությամբ, որոնք լրացնում են նրան:

ծվ քանի որ գլխավոր կամ գերադաս անդամը բայով է արտահայտված, այդ պատճառով էլ նա ունի ստորոգյալին հատուկ լրացումներ՝ պարագա, խնդիր: Ժամանակին բառը ժամանակի պարագա է, պարտավորությունները՝ ուղիղ խնդիր, ստանձնած բառը՝ որոշիչ է պարտավորությունները բառի համար:

Մի առ օրինակ. «Որտե՞ղ գտնել մի այդպիսի սիրտ» (Շիրվ., 3, էջ 293): Այս նախադասության գլխավոր անդամն է գտնել-ը, որտեղ բառը տեղի պարագա է, սիրտը՝ ուղիղ խնդիր, մի և այդպիսի բառերը՝ որոշիչներ:

Մանոթանանք անվանական նախադասության կառուցվածքին:

«Գյուղի հրապարակը և նավասարդի տան պատշգամբի մի մասը» (Անթ., էջ 246): Այս նախադասության մեջ գլխավոր անդամներն են հրապարակը և մասը (կարելի է նաև գլխավոր անդամ համարել մի մասը՝ կապակցությունը միասին վերցրած): Գյուղի բառը հատկացուցիչ է հրապարակը բառի համար: Հատկացուցիչներ են նաև նավասարդի, տան, պատշգամբի բառերը: Մասը բառը առանձին գլխավոր անդամ համարելու դեպքում մի-ն կլինի որոշիչ նրա համար:

Ասվեց, որ անվանական նախադասության գլխավոր անդամին հատուկ են ենթակայի լրացումները: Դա այդպես է որպես կանոն և հասկանալի է, թե ինչու: Սակայն պատահում են անվանական նախադասություններ, որոնցում գոյականով արտահայտված գլխավոր անդամն ունենում է նաև ստորոգյալին հատուկ լրացում և հատկապես տեղի պարագա, որը ցույց է տալիս գլխավոր անդամի ցույց տված առարկայի գտնված տեղը:

Օրինակ՝ «Խորհում՝ ընդհանուր ֆոնի վրա, գյուղի տեսարան, հողե կտուրներով մի հարկանի տներ, խոտի, աթարի դեզեր և այլն» (Անթ., էջ 26): «Ուտենու տեղը Նազիկի արձանը՝ ծածկված սավանով» (ն. տ., էջ 246): «Աջ մասում Անուշի խրճիթի մի մասը: Հեռվում աստիճանաբար բարձրացող գյուղի խրճիթներ: Հորիզոնը ծածկված է մշուշապատ լեռներով: Երեկ է» (Անթ., էջ 263): «Պատուհանի և դռների մեջ իջնում

են մետաքսյա նուրբ վարագույրներ: Կենտրոնում շրջանաձև սեղան, վրան գունագեղ սփռոց, շուրջը ծածկոցավոր աթոռներ: Անկյունում գրասեղան, վրան հեռախոս, կողքին դիվան և բազկաթոռներ, պատվանդանների վրա գեղաքանդակ արձաններ և բուսական նմուշներ» (Անթ., էջ 476):

Միակազմ նախադասությունների կառուցվածքային առանձին հատկանիշները պայմանավորված են նրանց (այդ նախադասությունների) ընդհանուր բնույթով և գերագույն անդամի խոսքի մասային պատկանելությամբ:

Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքում երկկազմ նախադասությունների համեմատությամբ փոքր տեղ են գրավում, բայց և այնպես նրանք ունեն իրենց որոշակի, ուրույն տեղը: Ի՞նչ անհրաժեշտությամբ են նրանք կազմվում, գործածվում, և առհասարակ որքանով է նրանց գոյությունն անհրաժեշտ լեզվի մեջ և մասնավորապես ժամանակակից հայերենում: Այս հարցի պատասխանը միակազմ նախադասությունների տարբեր տեսակների համար միատեսակ լինել չի կարող: Տարբեր միակազմ նախադասություններ գոյություն ունեն և գործածվում են տարբեր անհրաժեշտություններով, տարբեր նպատակներով, ուստի վերոհիշյալ հարցի պատասխանը կփորձենք տալ այդ նախադասությունների տարբեր ենթատեսակների քննության ընթացքում:

Այժմ՝ անցնենք նրանց քննությանը:

ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ (ԱՆԵՆԹԱԿԱ)
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ քերականագիտության մեջ ընդունված է անհնթակա համարել այն նախադասությունը, որը չունի ենթակա և չի կարելի այն վերականգնել: «Այն նախադասությունները, որոնց ենթական չի արտահայտված և չի կարող վերականգնվել, կոչվում են անհնթակա նախադասություններ»¹: Այդպիսի

¹ Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, դասագիրք, միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի համար, 1956, էջ 30:

նախադասութիւնը ենթակայի վերականգնման անհնարինությամբ հակադրւում է զեղչված ենթակայով նախադասությանը, որի մեջ թեև ենթական արտահայտված չէ, բայց որոշակիորեն հասկացվում է և ազատ կերպով կարելի է վերականգնել: Այսպես՝

«—Իսկ ո՞րն է քո երեխան,—հարց է տալիս Լևոնը Գոհարին:

Գոհարը ժպտալով մահճակալի վրայից ետ է գցում շղարշը: Բացվում է ահագին մի խնձոր՝ վրան փոքրիկ մի քիթ... Երեխան բռնում է Լևոնի մատը և ձգում դեպի բերանը...

— Շատ ուժեղ է, շատ գեղեցիկ: Բայց Ասատուրին նման չի:

— Մորն է փաշել,—շիկնում է Գոհարը:

— Աչիդ լույս,—շարունակում է կատակել Լևոնը,—Մարգարդ առաջ փաշեցի՞նք. ընդունեցի՞նք պարտիայի մեջ:

— Իսկ ի՞նձ երբ կընդունե՞ք,— հանկարծ լրջանում է Գոհարը» (Անթ., էջ 185):

Ն. Զարյանի «Հացափան»-ից բերված այս հատվածում ընդգծված նախադասութիւններն իրենց կազմում չունեն արտահայտված ենթակա: Սակայն դրանք պարզ հասկացվում են և հեշտությամբ կարելի է վերականգնել: Առաջին երեք նախադասութիւնների ենթական է երեխան, հաջորդ նախադասության ենթական է մենք, վերջինի ենթական է դուք, որոնք բոլորն էլ զեղչված են ենթակայի զեղչման կանոններին համապատասխան:

Անենթակա նախադասության համար ենթակա չունենալուց բացի մի այլ կառուցվածքային էական հատկանիշ է դեմք ունենալը: Օրինակ՝

«Առսանում էր, որ Խորիշան քնեց» (ԴԴ, 3, էջ 313):

«Մբնեց: Ծերունին լուռ շարշարանքով Մի քանի կոճղեր գրեց կրակին» (Թում., 2, էջ 36): «Մուրն էր, երբ Մարգոն չուզո՞ւ հկալ գործարանի ակումբից» (Անթ., էջ 100): «Զիս առջևից անցիր, շան հոտից» (ԱՂ, ՀԱ, էջ 56): Անձրեւում է:

Այսպես, «Անձրևում է» նախադասության ենթակա հիմա-
դավոր չէ վերականգնել. դա մեկ երևույթի՝ անձրև գալու
երևույթի, ինքնակա արտահայտությունն է բայի երբորդ
դեմքով:

Ստացվում է, որ մեկ բառը կամ բառաձևը հանգես է
գալիս որպես մեկ նախադասություն: Իհարկե, այդ բառը կա-
րող է ունենալ իր լրացումները (Առավոտից մինչև հիմա անձ-
րևում է), այնուամենայնիվ բուն նախադասությունը ձևավո-
րողը անձրևում է բառն է:

Միակազմ դիմավոր նախադասությունները ժամանա-
կակից հայերենում հիմնականում բայական են, այսինքն
նրանք կամ նրանց գլխավոր անդամը արտահայտված են
խոնարհված բայով: Սակայն գոյություն ունեն նաև անվա-
նական դիմավոր նախադասություններ, որոնք կազմվում են
որևէ անունով, հատկապես գոյականով և օժանդակ բայով:

Գոյականով կազմված այդպիսի նախադասությունները
մեծ մասամբ ժամանակ են ցույց տալիս և կազմվում են ժա-
մանակի անուններով:

Օրինակ՝ «Ամառ է, քննությունները վերջացել են» (Մուր.,
5, էջ 12): «Մութ էր դրսում» (Բ, 7, էջ 24): «Երիկնադեմ էր:
Հյուրատան դռանը կանգնեց մի երիտասարդ հեծյալ» (ԴԴ,
3, էջ 299): «Գիշեր էր, ցուրտ ու խավար» (Անթ., էջ 24):
«Մանր, անհանգիստ օրեր էին» (Անթ., էջ 109): «Հեծի վերջին
օրերն էին» (ՍԽԶ, էջ 201): «Արդեն կես-գիշեր էր» (ՍԽԶ,
էջ 211): «Մի արևոտ տափ աշուն էր» (ՎԱ, 14, էջ 32): «Իեկ-
տեմբերի ցուրտ ու միգամած մի երկուշաբթի էր» (ՎՓ, ՍՊ, էջ
56): «Ժամանակն է, ժամանակն է ներկայացումն սկսելու»
(Սիրաս, 1, էջ 188): «Կարկտահարության երկրորդ օրվա
առավոտն էր» (Ավանգ., 25. 10. 1950):

Թեև այս նախադասությունները համարում ենք անվա-
նական, այնուամենայնիվ, ինչպես ասվեց, նրանցում կա բա-
յական բաղադրիչ, հանձին օժանդակ բայի: Այլ կերպ լինել
չէր կարող, քանի որ այդ նախադասությունները դիմավոր
նախադասություններ են: Եթե օժանդակ բայն էլ չլիներ,
պարզ է, որ դրանք դիմավոր չէին լինի և այդպես չէին կոչվի:

Դիմավոր միակազմ նախադասությունները ըստ կազմության լինում են պարզ և բարդ: Ըստ որում պարզ նախադասությունները լինում են համառոտ և ընդարձակ: Համառոտ կոչվում է այն միակազմ նախադասությունը, որը կազմված է միայն գերադաս անդամից, ինչպես «Մթնեց», «Լուսացավ», «Անձրևում է»: Երբ գլխավոր անդամը ունենում է լրացում կամ լրացումներ, այդպիսի նախադասությունը պարզ ընդարձակ նախադասություն է: «Կարծես թե այսօր շուտ մթնեց»: «Երեկ անընդհատ անձրևում էր»:

Բարդ միակազմ նախադասությունները քիչ են: Օրինակ՝ «Ասում են՝ հացը պետք է էժանացնեն» (Անթ., էջ 18):

Համեմատաբար տարածված են միավորյալ նախադասությունները:

Օրինակ՝ Իմաստունի հետ քար քաշիր, հիմարի հետ փլավ մի ուտի (առած): Առաջ կեր, վերջը գոհացիր (առած): Աշխօր ունեա, լավ օր ունեա (առած):

Հաճախ դիմավոր միակազմ նախադասությունը երկկազմ նախադասության հետ միասին հանդես է գալիս միևնույն նախադասության մեջ, ձևավորում մեկ բարդ նախադասություն:

Այսպես, բարդ համադասական նախադասությունը կարող է կազմված լինել միակազմ և երկկազմ նախադասություններից: Օրինակ՝ «Աշուն է արդեն, և ձյունը նորից ծածկել է լանջերը սեգ Արարատի» (Իս., էջ 155):

Վերոհիշյալը վերաբերում է նաև բարդ ստորադասական նախադասությանը, որի գլխավոր նախադասությունը կարող է լինել միակազմ, իսկ երկրորդականը՝ երկկազմ կամ հակառակը:

Օրինակ՝ «Մթնեց, երբ նրանք մոտեցան ամրոցին» (ԴԴ. էջ 175):

«Երեկո էր արդեն, երբ նա, հոգնած, գիրքը դրեց մի կողմ» (ԵԶ, էջ 431):

«Մուխն էր, երբ Սիմոնը տուն եկավ» (Բակ., էջ 200):

«Ես կարծեցի, թե արդեն լուսացել է»:

Միակազմ դիմավոր նախադասությունները սովորաբար ճանաչվում են հեշտությամբ: Սակայն երբեմն նրանք խոսքից դուրս կարող են շփոթվել երկկազմ նախադասությունների հետ, միևնույն նախադասությունը տարբեր կապակցություններում կարող է գործածվել որպես և՛ միակազմ, և՛ երկկազմ նախադասություն: Իհարկե, նման դեպքերում յուրաքանչյուր նախադասությունը պետք է դիտել որպես տարբեր նախադասություն և ոչ թե միևնույն նախադասության տարբեր կիրառություն:

Այսպես՝ «էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես ջարդես հազար» նախադասությունը Հ. Թումանյանը հետևյալ հատվածում գործածում է որպես միակազմ նախադասություն:

«— Հապա ինչպե՞ս է, որ մի կարգին թուր չունի, էս ժանգոտ երկաթի կտորն է մեջքին կապել:

— Շնորքն էլ հենց դրա մեջ է, որ էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես, ջարդես հազար, թե չէ լավ թրով ի՞նչ կա որ, սովորական քաջերն էլ են ցարդում» (Թում., 3, էջ 191):

Սակայն այլ կապակցության մեջ այն կարող է հանդես գալ որպես երկկազմ նախադասություն: Ասենք, «կցնաւս և էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես, ջարդես հազար», կամ «Ծրնի ուզում ես, որ էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես, ջարդես հազար» և այլն:

Վերջին նախադասություններում գործողությունը մասնավորվում է երկրորդ դեմքի վրա, և հասկացվում է, որ ենթական զու-ն է, որը պարզապես զեղչված է:

Այսպիսի շփոթությունների, ավելի ճիշտ՝ զուգադիպությունների հնարավորությունները շատ չեն, բայց այնուամենայնիվ անհրաժեշտ է նկատի ունենալ դրանք:

Դիմավոր միակազմ նախադասություններն ունեն բազմաթիվ կիրառություններ: Սակայն ըստ հիմնական նշանակության, մասամբ և ըստ կառուցվածքի դիմավոր միակազմ նախադասությունները կարելի է բաժանել երեք՝ հիմնական

խմբի: Նախ քննենք առաջին խմբի դիմավոր միակազմ նախադասությունները:

Մի շարք դիմավոր միակազմ նախադասություններ գործածվում են բնության որոշ երևույթներ ցույց տալու համար: Պրտնք արտահայտվում են մի քանի բայերի միայն երրորդ գծմբով, ինչպես՝ մթնեց, լուսացավ, անձրևում է և այլն:

Փրինակ՝ «Առաջավ: Դադարեց Արտակի գիշերամարտը» (ԴՎ, էջ 171): «Առաջում է, — հանկարծ շշնջաց Արտակը» (ն. տ.): «Մթնեց: Անտառի խորքում մի թռչուն սկսեց տխուր կանչել» (ՎԱ, ԼԿ, էջ 30): «Առաջում է. լեռան ետևից ելնում է արևը» (Բակ., էջ 141):

Ինչպես անենթակա նախադասության մյուս ենթատեսակների, նույնպես և այս նախադասությունների էություն տեսակետից հետաքրքրական ու կարևոր է նրանց ենթակա շունենալու պատճառի ու անհրաժեշտության հարցը:

Լեզվաբանության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե այսպիսի նախադասությունները հնից են գալիս և արտացոլում են մարդու նախնական մտածողության տարրերը այն իմաստով, որ մարդ դիտելով բնության այդ երևույթները և չիմանալով ով կամ ինչն է գործողություն կատարողը, այդպիսի նախադասությունները կազմել է անենթակա ձևով, որոնք և այժմ մնում են որպես այդպիսին:

Փրինակ, Ն. Մառը գտնում էր, որ այդպիսի անենթակա նախադասությունների և միադիմի բայերի գործողության կատարողը չիմանալու պատճառով հնում մարդը այն վերագրել է, այսպես կոչված, «տոտեմին», որ իր արտահայտությունը այժմ էլ, ըստ Ն. Մառի, պահպանում է այնպիսի լեզվական ձևի մեջ, ինչպիսին է es regnet, հանձին es-ի:

1 Օ. Ծպերսենը մի առիթով հակառակ կարծիքն է հայտնում, որ մեզ ավելի հավանական է թվում: Նա գտնում է, որ es regnet, it rains, il pleut «անձրևում է», it snows «ձյուն է դալիս» կազմություններում es-ը, it-ը, il-ը համապատասխան բայաձևերին միացել են ուշ շրջանում՝ պարզապես ենթակայով նախադասությունների նմանակությամբ, իբրև ձևական ենթականեր (Философия грамматики, 1958, էջ 24):

Մեր աշխատության նպատակից դուրս է քննել անենթակա նախադասությունների ծագումը: Այնուամենայնիվ համառոտակի անդրադառնանք այդ հարցին:

Առհասարակ հնարավոր է, որ մարդու նախնական մտածողությունն իր հետքը թողած լինի քերականական այս կամ այն կատեգորիայի վրա, և այդ հետքը պահպանվի մինչև այժմ: Նշենք, որ այդ ավելի հնարավոր է ձևարանական կատեգորիաների վերաբերմամբ, որոնք շատ պահպանողական են, և քիչ հնարավոր է նախադասության կառուցվածքի վերաբերմամբ, որ համեմատաբար հեշտ փոփոխվող է:

Արդ, հարց է ծագում, եթե խոր անցյալում բնության այդ երևույթների պատճառը չիմանալու հետևանքով ստեղծվել են այդպիսի անենթակա նախադասություններ, ապա այժմ՝ դիտության զարգացման ներկա պայմաններում, երբ հասկանալի են այդ բոլոր երևույթները, դրանց պատճառները, լեզվական ուրիշ ի՞նչ ձև կարելի է օգտագործել այդ նույն մտքերն արտահայտելու համար: Իհարկե, խոսքն այն մասին չէ, թե եղած ձևի փոխարեն մեկ նոր ձև ստեղծենք և գործածենք. այս հարցը մենք առաջադրում ենք իբրև սոսկ տեսական հարց՝ պարզելու համար արդյոք կա՞ և կա՞ր որևէ անհրաժեշտություն և ավելի լավ հնարավորություն այդ մտքերն արտահայտելու համար:

Հայտնի է, որ ենթական գործող կամ եղող առարկան է ցույց տալիս: Լուսանալու, մթնելու և նման գործողությունները կամ երևույթներն այնպիսի բնույթ ունեն իրականության մեջ, որ անցյալում չէր կարող լինել և այժմ էլ չկա որևէ անհրաժեշտություն դրանք որևէ առարկայի վերագրելու համար: Այդ երևույթների բնույթն այնպիսին է, որ մարդ պարզապես կարիք է զգացել և այժմ էլ կարիք է զգում դրանք արտահայտելու իբրև ինքնակա երևույթներ և այդպես էլ արտահայտվում են: Հենց դա է պատճառը, որ բնության այդպիսի երևույթները անենթակա նախադասություններով են արտահայտվում ոչ միայն հայերենում, այլև շատ լեզուներում:

Իհարկե, վերոհիշյալ երևույթները կարող են արտահայտվել նաև հարադիր բայերով (մութն ընկավ, լույսը բացվեց

և այլն), սակայն այս ձևերը ստեղծվել են ոչ թե այդ երևույթները հատկապես ենթակայով նախադասությամբ արտահայտելու նպատակով, այլ իբրև արտահայտություն՝ հայերենում եղած այն ընդհանուր երևույթի, որ շատ բայերին զուգահեռ օգտագործվում են նաև համապատասխան իմաստն արտահայտող հարադիր բայեր, ըստ որում չի կարելի ասել, թե բոլոր դեպքերում հարադիրը ավելի ուշ է կազմվել, քան թե համապատասխան իմաստն արտահայտող բայը: Ավելացնենք նաև, որ մուքն ընկավ տիպի հարադիրները, թեև ձևով ենթակայի և ստորոգյալի կապակցություններ են, բայց ըստ էության այժմ դրանք, լինելով մեկ հարադիր բայ, ինչպես նշել ենք էջ 113-ում, առանձին գործածվելիս անենթակա նախադասության արժեք ունեն: Չի կարելի հարցնել՝ ի՞նչը ընկավ և պատասխանել՝ մութը, մութը ի՞նչ արեց՝ ընկավ: Հարադիր բայերը կայուն կապակցություններ են և վերլուծման ենթակա են միայն ստուգաբանական առումով և ոչ թե նրանց այժմյան շարահյուսական տեսակետից. այս վերջին առումով նրանք մեկ միավոր են հանդիսանում:

Կան վերևում քննված անենթակա նախադասությունների հարող այլ անենթակա նախադասություններ ևս, ինչպես՝ «Կեսուր էր: Մերուժանի ընդարձակ, երկնագույն վրանում արդեն հավաքված էին հյուրերը» (Բ, 7, էջ 470): «Ուշ երեկո էր» (ՍԽՀ, էջ 31): «Առավոտ էր: Հայ նախարարները նստած էին Սրվանձույա իշխանի վրանում» (ԴԴ, 3, էջ 435): «Օգոստոսի կեսին սարեքում արդեն աշուն է» (Լեո, էջ 92): «Ամառ է: Մեր ամբողջ գյուղը գտնվում է կալերում» (Լեո, էջ 223): «Սաստիկ մութ էր: Չէր երևում ոչ մի աստղ» (Անթ., էջ 429): «Յեխ է հիմա, առանց կոշիկ նա ու՞ր գնա» (Ս. Կապուտիկյան):

Այսպիսի նախադասությունները ևս միակազմ են և կապ չունեն մարդու հնագույն շրջանի շղարգացած մտածողության հետ:

Իսկ ինչո՞ւ են սրանք միակազմ:

«Երեկո է» նախադասությունը համեմատենք «Տերեք կանաչ է» նախադասության հետ: Վերջին նախադասության մեջ մենք ունենք երկու հասկացություններ՝ տերև և կանաչ, որոն-

ցից երկրորդը, իբրև հատկանիշ, է հանգույցի միջոցով վերադարձվում է առաջինին: «Երեկո է» նախադասության մեջ չկան այդպիսի երկու հասկացություններ: Այս դեպքում «երեկոն», իբրև ժամանակային հատկանիշ, վերադարձվում է խոսելու պահին, որը, սակայն, չի արտահայտվում այլ բառով, որովհետև այդ հատկանիշը միաժամանակ հենց այդ խոսելու պահի ժամանակային անվանումն է: Ուրեմն այսպիսի նախադասություններում արտահայտվում է ժամանակի տվյալ պահը կամ տվյալ հատվածը իր որևէ հատկանիշով, ուստի և չկան իրար հակադրվող և իրար հետ կապվող այն երկու բեռները, որոնք հատուկ են երկկազմ նախադասությանը: Թե՛ կրող առարկայի և թե՛ հատկանիշի գաղափարը խտացված է, միաձուլված է մեկ բայաձևի մեջ: Եվ դրա հետևանքով ստացվում է միակազմ նախադասություն:

Միակազմ դիմալոր նախադասությունների այս խմբին են պատկանում նաև այն նախադասությունները, որոնց գլխավոր անդամն արտահայտվում է չեզոք սեռի բայից կազմված կրավորականով:

Չորինակ՝ Այստեղ չի նստվում: Նրա հետ չի խոսվում (շատ վրդովված է): Մեր հեռախոսով չի խոսվում (փշաքած է): Այս գետում չի լողացվում (չուրը շատ սառն է): Այդ խնդրի մասին շատ է խոսվել:

Ինչո՞ւ չեզոք բայերի կրավորականներով անենթակա նախադասություն են կազմվում, և ինչո՞ւ այդպիսի կազմությունները շատ տարածված չեն: Կրավորական բայերը որպես կանոն կազմվում են ներգործականից և նախադասության ներգործական կառուցվածքը կրավորականի վերածվելով, ներգործական կառուցվածքի ենթական վերանում է, բայց նախադասությունը այլ ենթակա է ձեռք բերում, հանձին ներգործական բայի ուղիղ խնդրի: Այսպես՝ Ես լսում եմ նրա ձայնը: Լսվում է նրա ձայնը: Առաջին նախադասության ես ենթական վերացավ, բայց դրա փոխարեն ձայնը ուղիղ խոսողի երկրորդ նախադասության մեջ դարձավ ենթակա:

Վերցնենք չեզոք սեռի բայի օրինակ. Մենք միշտ այստեղ ենք նստում: Բայց՝ «Այժմ այստեղ չի նստվում»: Մենք ենթական վերացավ, բայց դրա փոխարեն այլ ենթակա հանդես չի գալիս բայի սեռի (չեզոք) պատճառով: Այսպիսով ստացվում է դիմավոր նախադասություն, որը ենթակա չունենալու և այն վերականգնելու անհնարինությունն պատճառով հանդիսանում է անենթակա կամ դիմավոր միակազմ նախադասություն:

Ինչ վերաբերում է այդպիսի նախադասությունների սակավ գործածությանը, ապա դա այն պատճառով է, որ չեզոք սեռի քիչ բայեր կարող են գործածվել կրավորակերպ:

Սակավ դեպքերում այս նպատակով գործածվում են ներգործական սեռից կազմված կրավորականներ:

Օրինակ՝ «Այս գրիչով չի գրվում: Այդ մասին արդեն ասվել է մի քանի անգամ»:

Դիմավոր միակազմ նախադասությունների այս խմբի հատկանիշները հանգում են հետևյալին:

1. Այդ նախադասությունները արտահայտվում են բայի ձրորոգ դեմքով, հատկապես միադիմի բայերով: Անվանական գլխավոր բաղադրիչ ռեհցող նախադասությունների հանգույցը ևս արտահայտվում է երրորդ դեմքով և ունի հզակի թիվ:

2. Այս նախադասությունները, դեմք ունենալով հանդերձ, գործողություն կատարողի, հատկանիշը կրող առարկայի գաղափար չեն արտահայտում: Այդ պատճառով էլ դրանց արտահայտած գործողությունը, վիճակը և այլն լեզվակառուցման արտահայտվում են որպես ինքնակա գործողություն, վիճակ և այլն:

3. Կիրառական կողմի տեսակետից այս նախադասությունները հիմնականում բնորոշվում են նրանով, որ գերազանցապես վերաբերում են բնության երևույթներին: Մարդու

1 Այստեղ ամբողջ նախադասության լիակատար շրջում հնարավոր չէ, որովհետև նստել բայը չեզոք է, և նախադասությունը ներգործական կառուցվածք չունի:

գործողությունն արտահայտելը այս նախադասությունների համար բնորոշ է, թեև շատ հազվադեպ պատահում են այդպիսի նախադասություններ, որոնցում, իհարկե, չի ակնարկվում գործողություն կատարող անձը:

Երկրորդ խմբի նախադասությունները կարելի է անվանել անորոշ դիմավոր նախադասություններ:

Այս նախադասությունները հիմնականում արտահայտվում են բայի երրորդ դեմքի հոգնակի թվով և ունեն գործողի կամ եղողի անորոշ իմաստ: Անորոշությունը ոչ միայն այն իմաստով է, որ չի արտահայտվում, թե հատկապես ո՞վ կամ ովքե՛ր են գործողություն կատարողները, այլև այն իմաստով, որ հաճախ հայտնի չէ՝ գործողություն կատարողը մեկն է, թե մի քանիսը: Այսպես, «Նրան կանչեցին Կենտկոմից» նախադասության մեջ ոչ միայն հայտնի չէ, թե ով է կանչել, այլև հայտնի չէ, թե քանի հոգի են կանչել նրան: Ըստ որում հաճախ է պատահում, որ գործողություն կատարողը մեկ անձ է, բայց որովհետև հայտնի չէ, թե ով է, կամ կարևորություն չի տրվում, թե ով է, բայց գործածվում է հոգնակի թվով, որ նման պարագաներում անորոշությունն արտահայտելու համար լավագույն փրականական միջոցն է:

Օրինակ՝ «Զանգը տվին: Քեզ հեռախոսով կանչում են» (երբ մեկն է կանչում): Եթե ասվի «Քեզ հեռախոսով կանչում է», ապա այս նախադասությունը կհասկացվի իբրև զեղչված ենթակայով նախադասություն և կստեղծվի այն սպալմորությունը, որ հայտնի է, թե ով է կանչողը:

Անորոշ դիմավոր նախադասություններն արտահայտվում են բայի հետևյալ խոնարհված ձևերով.

1. Սահմանական եղանակի անցյալ կատարյալի հոգնակի երրորդ դեմքով.

Օրինակ՝ «Յարիս տարան, ջանիս տարան,
Հոնգուր-հոնգուր կուլամ ես» (Իս., էջ 15):

«Սիրեցի, յարս տարան,

Յարս տվին ու տարան

— էս ինչ զուլում աշխարհ է,

Սիրտս պոկեցին տարան» (Իս., էջ 30):

«Ինչո՞ւ բերեցին այս թերթն այսօր ինձ,

Ինչո՞ւ հուզեցին հոգին իմ խաղաղ,

Ինչո՞ւ ուզեցին, որ վիշտ ու թախիծ

Այս ասեղ ժամին սրտիս հետ խաղան» (Անթ., էջ 413):

2. Սահմանական եղանակի ներկա ժամանակի հոգնակի

երրորդ դեմքով.

«Ասում են, թե դու այնպես,

Մոռացել ես ինձ այնպես,

Որ երբ.անունս են տալիս,

Հազիվ միտդ եմ գալիս» (Իս., էջ 126):

3. Սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի

երկրորդ դեմքով.

«Միտք ես անում, միտք, մեր էս աշխարհի բանը, նախում
ես, տրափվում, թե ախար էս բանը ոնց է լինում: Չեմ իմա-
նում, բախտ է, էլի» (Անթ., էջ 86):

Անորոշության իմաստով հատկապես գործածվում է ա-
սում են բայը:

«Ասում են, թե կար ժամանակ, շատ առաջ նրկրի . վրա
գառ ու ոչխար չկային» (Իս., էջ 183): «Այ մարդ, քեզ հայե-
րեն ասում են՝ չկա, չկա, քեռի հեշան» (Թում., 3, էջ 85):

«Ասում են, իբրև, խարույկի վրա Ջահել ըմբոստի մի սիրտ
են այրել. Ասում են, իբրև, մոխիրը նրա խարույկից հանել
ու մորն են տարել, Մայրը լացել է այն մոխրի վրա, ու երբ
արցունքն է ընկել այն մոխրին՝ Կենդանացել է զավակը նրա»
(ՀՇ, ԲՀ, էջ 135):

4. Սահմանական եղանակի վաղակատար ժամանակի
հոգնակի երրորդ դեմքով.

«Հիմի Մուկուչին բանվոր են ընդունել» (Անթ., էջ 22):
«Ընկեր Ջամալյան, այդ ո՞ւր,—հարցրեց նա:—Կենտկոմ են
կանչել, շտապում եմ» (Ք. Թափա. ցյան, «Ոսկե հովիտ»):

Վերջապես կան դիմավոր միակազմ նախադասություն-
ներ, որոնք թեև արտահայտվում են բայի այս կամ այն դեմ-
քով, բայց չեն վերաբերում միայն տվյալ դեմքին, այլ վերա-

բերում են բոլորին, ունեն ընդհանրական իմաստ, ուստի այդ-
պիսիները կարելի է համարել դիմավոր ընդհանրական միա-
կազմ նախադասություններ:

Այս նախադասություններով արտահայտված գործողու-
թյունները ընդհանրապես կատարվում են և կամ խորհուրդ է
տրվում կատարել այնպես, ինչպես որ ասվում է տվյալ նա-
խադասության մեջ: Այս խմբի նախադասությունները մեծ
մասամբ առածներ են կամ իրենց նշանակությամբ մոտենում
են դրանց: Համեմատաբար սակավաթիվ նախադասություն-
ներ առածի բնույթ չունեն, այլ ընդհանրական բնույթի խոր-
հուրդներ են:

Այսպիսի նախադասությունները հաճախ արտահայտվում
են պայմանական կամ ենթադրական կոչվող եղանակի հոգ-
նակի երրորդ դեմքով:

Օրինակ՝ «Ձուկը պոչից չեն բռնի, գլխից կբռնեն» (ՎԱ,
Կ, էջ 13):

«Մարդուն ընկերով կճանաչեն» (ԱՂ, ՀԱ, էջ 8): «Արյու-
նը արյունով չեն լվանա» (ԱՂ, ՀԱ, էջ 11): «Շիտակ խոսքը
հանաքով կասեն» (ԱՂ, ՀԱ, էջ 57): «—Ես... մնում եմ...
հյուր եմ...—Այդքան ժամանակ հյո՞ւր կլինեն» (Շիրվ., 3,
էջ 307): «Պտղատու ծառին շատ քար կկցեն» (Թում., 3, էջ 18):
«Հին դարմանը քամուն չեն տա» (առած): «Մի ձեռքով երկու
ձմերուկ չեն բռնի» (առած):

Այս նախադասությունների միջև կան իմաստային տար-
բերություններ: Նախ, էական տարբերություն կա պատմո-
ղական և հարցական բնույթի նախադասությունների միջև:
Եթե պատմողական բնույթի նախադասությունը այս կամ այն
բանի, երևույթի հաստատումն է արտահայտում, ապա հար-
ցական նախադասությունը ժխտական իմաստով է գործած-
վում: Այսպես՝ «Ձուկը պոչից չեն բռնի, գլխից կբռնեն» նա-
խադասությամբ հաստատվում է այն միտքը, որ ձուկը պոչից
չեն բռնում, այլ բռնում են գլխից, և միաժամանակ, որ ձու-
կը պետք է բռնել ոչ թե պոչից, այլ գլխից: «Այդքան ժամա-
նակ հյո՞ւր կլինեն» նախադասությունը, որը հարցական
բնույթի է, հարցում չի արտահայտում, այլ նշանակում է:

«այդքան ժամանակ հյուր չպետք է լինել», «Այդքան ժամանակ չի կարելի հյուրընկալության մեջ լինել»:

Տարբերություն կա նաև պատմողական բնույթի նախադասությունների միջև: Ի տարբերություն վերևի օրինակների առաջին նախադասության, որը գործողության և հաստատումն է արտահայտում, և՛ անհրաժեշտությունը, «Պտղատու ծառին շատ քար կգցեն» նախադասությունը արտահայտված երևույթի միայն հաստատման իմաստով է գործածվում: Այս նախադասության մեջ չկա անհրաժեշտության իմաստը:

Վերոհիշյալ իմաստով միակազմ նախադասությունները կազմվում են նաև սահմանական եղանակի ներկա ժամանակի հոգնակի երրորդ դեմքով:

Օրինակ՝ «Մարդուն ընկերով են ճանաչում» (առած): «Գայլին սատկացնում են ոչ թե նրա համար, որ նա ունի գորշ ազի, այլ նրա համար, որ կերել է մափ» (առած):

Միակազմ դիմավոր նախադասության գլխավոր անդամը հաճախ արտահայտվում է հրամայական եղանակի եզակի բովով: Այսպիսի նախադասությունները սովորաբար արտահայտում են խորհուրդ՝ ընդհանրական նշանակությամբ, այսինքն՝ ուղղված բոլորին և ոչ միայն հատկապես երկրորդ դեմքին:

«Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավառա կնոջ երդումին» (Իս., էջ 190): «Առաջ կեր, վերջը զոհացիր» (առած): «Շան հետ ընկերացիր, փետը ձեռքիցդ մի գցի» (առած): «Տասը չափիր, մեկ կտրիր» (առած): «Բարեկամի հետ կեր ու խում արա, առ ու տուր մի անի» (առած): «Ամառվա անձրևին, ձմեռվա արևին մի հավատա» (առած):

Վերջապես սակավաթիվ դեպքերում ընդհանրական դիմավոր միակազմ նախադասության գլխավոր անդամը արտահայտվում է ըղձական եղանակի եզակի երկրորդ դեմքով:

«Որտեղ որ զնաս, էն երկրի գդակը ծածկիր» (ԱՂ, ՀԱ, էջ 15):

Ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների կազմության մեջ որոշ դեր ունի նաև սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակը: Օրինակ՝ «Հարուստի

հագին շոր տեսան, ասին շնորհավոր, աղքատի հագին տեսան, հարցրին՝ որտեղից է» (առած):

Պատահում է նաև, որ բայի խոնարհման տարբեր ձևերը գործածվում են միևնույն միակազմ դիմավոր նախադասությունների:

Դա վերաբերում է հատկապես բարդ նախադասություններին:

Օրինակ՝ «Նրա հայացքից, հետո խոսակցության տոնից այնպիսի մի բան ես զգում, որ կարծես թե խտրում եմ կրոններիդ տակ. համ ախորժելի է, համ անախորժ, համ ծիծաղում ես, համ զայրանում, բայց ընդհանրապես գժի պես ուրախ ես զգում քեզ» (Ն.-Դ., 3, էջ 28):

«Բնչքան որ գիտուն լինես, չիմացածդ մի անգետից հարցրու» (ԱՂ, ՀԱ, էջ 55): «Վարր նստի՛ր, վերևը քեզ տեղ կտան» (Ն. տ.): «Շատ գիտես, քիչ խոսի՛ր» (Ն. տ.): «Շատ տեսնում ես, քիչ ասա՛» (Ն. տ.): «Մտնելուց առաջ միտք առա, թե ինչպես դուրս գաս» (Ն. տ.):

ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Անդեմ նախադասությունը դիմավոր միակազմ նախադասությունից տարբերվում է նրանով, որ չունի քերականական դեմք, հետևապես և նրա կազմությանը չեն մասնակցում բայի դիմավոր ձևերը, այդ թվում նաև օժանդակ բայերը:

Անդեմ նախադասության դեմք չունենալու առանձնահատկությունը բնականաբար որոշ դժվարություն ստեղծում է նրա, որպես մտքի միավորի, ըմբռնման և գործածության հարցում: Եվ այդ բացը, ինչպես մասամբ ասվել է սույն աշխատության առաջին գլխում, լրացվում է այլ հատկանիշներով, այլ գործոններով: Դրանք հիմնականում երկուսն են՝ ինտոնացիան (այսինքն ինտոնացիոն ավարտվածությունը) և կոնտեքստը, որոնք այս նախադասության համար առանձնապես կարևոր նշանակություն են ստանում:

Անդեմ նախադասություններն իրենց կազմությամբ միատեսակ չեն: Նայած թե անդեմ նախադասության գլխավոր

անդամը ինչ խոսքի մասով է արտահայտվում, ըստ այդմ նա կոչվում է բայական կամ անվանական: Երբ այդպիսի նախադասության գլխավոր անդամն արտահայտվում է բայով, նախադասությունը կոչվում է բայական, իսկ եթե գլխավոր անդամն արտահայտվում է անունով (գերազանցապես գոյականով), կոչվում է անվանական:

Այսպես, բայական նախադասություններ են՝

«Հանգստացնե՛լ գյուղը» (Անթ., էջ 65): «Կոմունիստական պարտիայի գործի պայքարին միշտ լինե՛լ պատրաստ» (ՍԶ, 19.4. 1957):

Այսպիսի նախադասությունների գերազաս անդամը սովորաբար արտահայտվում է անորոշ դերբայով:

Անվանական նախադասությունների օրինակներ.

«Հոկտեմբերյան ֆաղափ: Ապրիլյան ջինջ առավոտ: Երկնքի լազուրում, կայարանի վրա թևատարած ճախրում են գարնան հետ իրենց բույնը վերադարձած արագիլները» (Երեւան, 12. 4. 1958):

Անդեմ նախադասության գլխավոր անդամի այդպիսի տարբերությունն իրենով պայմանավորում է նաև լրացումների բնույթի տարբերություններ, քանի որ բայը այլ լրացումներ է պահանջում, գոյականը՝ այլ: Դա որոշակիորեն երևում է հենց վերևի օրինակներում: Բայական նախադասության մեջ գլխավոր անդամի լրացումներն են խնդիրներն ու պարագաները, իսկ անվանական նախադասության լրացումները որոշիչ են: Սա նշանակում է, որ անդեմ նախադասությունների գերազաս անդամի՝ բայով, թե անունով արտահայտված լինելը մասնավոր հատկանիշ չէ, այլ՝ ընդհանուր կառուցվածքային հատկանիշ:

Այդ կառուցվածքային հատկանիշն էլ պայմանավորում է երկու տեսակի նախադասությունների ընդհանուր իմաստային հատկանիշներ:

Բայական միակազմ նախադասությամբ արտահայտվում է գործողության կատարված լինելը, կատարելու անհրաժեշտությունը, հարցում, հրաման կատարելու մասին և այլն, իսկ անվանական նախադասությամբ արտահայտվում է առար-

կայի, երբեմն էլ հատկանիշի գոյությունը, առկայությունը տվյալ պայմաններում, տեղում:

Հմմտ. 1. «Ու՛ր գնալ, ինչպե՛ս գնալ: Այստեղ Գայանեն կանգ է առել, չգիտե» (ԼՄԱ, էջ 129): «Ուրեմն բռնակա՛լ դառնալ: Փակե՛լ Մելանիային տանը, գոռա՛լ, հայհոյե՛լ, ծեծե՛լ» (Շիրվ., 3, էջ 384):

2. «Անհատնում կրակ: Արնաքամ վերքեր կարենք» (ԾԶ, էջ 316):

Իհարկե, լինում են դեպքեր, երբ անվանական նախադասության զերազգաս անդամը, որ արտահայտված է գոյականով, բայանուն է և ունի գործողության իմաստ (տե՛ս էջ 142):

Անդեմ նախադասությունները կառուցվածքի տեսակետից չունեն այն բազմազանությունները, որ հատուկ են դիմավոր միակազմ նախադասություններին: Անդեմ նախադասությունները սովորաբար լինում են պարզ, ըստ որում պարզ համառոտ և պարզ ընդարձակ:

Պարզ անդեմ նախադասությունները կազմված են լինում միայն մեկ անդամից, որը և գլխավոր անդամ է:

Օրինակ՝ «Բաժանվե՛լ» (Շիրվ., 3, էջ 227): «—Լո՛ւն՛լ» (Անթ., էջ 88): «Ժրակլի՛ն կրկնեց այն բոլորը, ինչ մտածել էր ասելու—Հաստատե՛լ,—կանչեց Միկոլա Բուրգենկոն» (ՀՔ, ՄՏԶ, էջ 567): «Երևան: Աստաֆյան փողոց: Նստած է խանութպան Համոն: Աշուն է: Անձրե: Մշուշ: Թաց, խոնավ-անձրևոտ իրիկուն» (Ծ. Զարենց): «Կարմիր Բանակ: Հորդել են հեղեղները սև: Անսահման դաշտերի վրա շաշում են քոթները լուսն: Կայարան: Զարբեր: Զարբեր: Զինվորներ կարմիր: Գիշեր» (Ծ. Զարենց):

Պարզ ընդարձակ անդեմ նախադասությունները բաղկացած են լինում մեկ գլխավոր անդամից և լրացումից կամ լրացումներից:

Օրինակ՝ «Ու՛ր գնալ» (Շիրվ., 3, էջ 228): «Բայց ինչո՞ւ հուզվե՛լ» (Ն. տ., էջ 168): «Բոլոր տեսակի զենքերը հանձնե՛լ» (Անթ., էջ 211): «Ամբոցի ամբողջ սարավորումը ներկա վիճակով նույնությամբ հանձնել մեր ներկայացուցիչն» (Ն. տ.): «Մայիսյան առավոտ: Առաջին Բելոռուսական և Առաջին Ուկ-

ըախնական ռազմաճակատի զորքերը արդեն մտել էին Բեռլին» (Անթ., էջ 208):

Բարդ ստորադասական անդամ նախադասություններ չեն լինում, քանի որ ստորադասական նախադասության կառուցվածքի մեջ կարևոր դեր են կատարում այնպիսի քերականական կատեգորիաներ, ինչպիսիք են դեմքը և թիվը, որոնք, սակայն, բացակայում են անդամ նախադասության մեջ:

Մեկից ավելի գլխավոր անդամ ունեցող անդամ նախադասությունները կարելի է համարել բարդ համադասական անդամ նախադասություններ:

Օրինակ՝ «Հայոց ժամը»: Սպիտակ կամարներ և նկարներ՝ ռակեզոծ շրջանակների մեջ: Նուշիկի մայրը լալիս է» (Բակ., էջ 152): «Մի բոլակ հետո եղավ երկրորդ հրամանը. — Ցրվե՛լ, պառկե՛լ...» (Հ. Քոչար, «Մեծ տան զավակները»):

Երբեմն անդամ նախադասությունը մտնում է բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ, որպես գլխավոր նախադասություն, ունենալով երկկազմ երկրորդական նախադասություններ:

Օրինակ՝ «Գավառական մի ֆաղաֆ. յայն և ուղիղ փաղաղներ, կանաչ խոտ մայթերի վրա, տների առաջ բոստաններ և բարձր, ստվերախիտ ծառեր, որոնց շվաքի տակ իրիկվա հովին նստում են հարևանի կանայք, զրուցում, մինչև նախիրը հանդից՝ դա, կիթ անեն, թեյ գցեն ու թեյից հետո խաղան նարդի, հետո՝ խոր քուն, մինչև լուսաթաց, մինչև նախ կիթ» (Բակ., էջ 387):

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բայական անդամ միակազմ նախադասությունների գերազանց անդամը սովորաբար արտահայտվում է անորոշ դերբայով: Այդ նախադասություններն ունեն բազմազան կիրառություններ: Բայական անդամ միակազմ նախադասությունները արտահայտում են հրաման, կարգադրություն, ցուցում, որով պահանջվում է կատարել որևէ գործողություն, կամ որով արգելվում է գործողության կատարումը:

Օրինակ՝ «Պանե՛լ այս ռազմակարգը, շշխոթվե՛լ իր՝ Վար-
դանի շարժումներին» (Անթ., էջ 90): «Բաթը կոացավ գրկեց
Պապին և հրամայեց ներսը գտնվող իր գինվորներին. — Կո-
տարե՛լ բռնորին... ողջ չթողնել ոչ մեկին: Պանակներ գնել,
դուռը փակել և փախչել ցանկացողին սատակել անմիջապես»
(ն. տ., էջ 133): «Կանգնեցնե՛լ ըստ հասակի» (ն. տ., էջ 145):
«Հեծյալները, որ Վարդանի կողմից էին՝ հրաման բերին նրա-
նից. — Կռվով փաշվե՛լ աջակողմյան լեռնակիրճը» (ԴՎ, էջ
435):

Այսպիսի նախադասություններն իրենց բնույթով մտնում
են հրամայական բնույթի նախադասությունների շարքը, բայց,
հիշարկեմ, չունեն այն լայն, բազմապիսի կիրառությունները,
ինչ որ դիմավոր բացով արտահայտված հրամայական նա-
խադասությունները: Վերջիններս, ինչպես տեսանք, արտա-
հայտում են ոչ միայն հրաման, կարգադրություն, այլև խրնդ-
րանք, աղերսանք և այլն, ըստ որում այս վերջին կիրառու-
թյունները պակաս սովորական չեն նախադասությունների
այդ տիպի համար, քան առաջինները: Իսկ անորոշ դերբայով
արտահայտված հրամայական բնույթի միակազմ նախադա-
սություններն ավելի շատ հրաման, կարգադրություն են ար-
տահայտում, քան խնդրանք, աղերսանք:

Անդեմ բայական նախադասությունները կարող են ար-
տահայտել պահանջ, առաջարկություն, կոչ:

Օրինակ՝ «Հրատարակե՛լ մասնագիտական բառարաններ,
այդ թվում՝ առևտրացանցի աշխատողների համար:

Կոմերիտական աշխատանքներում լայն տեղ տալ լեզվի
մաքրության, խոսքի կուլտուրայի հարցերին, կազմակերպել
ֆենարկուսներ, դասախոսություններ, հարց ու պատասխանի
նրբեկոտներ և այլն:

Կազմակերպել՝ լեզվի հարցերին նվիրված հաղորդում-
ներ՝ հեռուստատեսությամբ ու ռադիոյով» (Ավանգ., 8.2,
1961):

Քննարկվող տիպի նախադասությունները հարցական
ինտոնացիայով գործածվելով՝ արտահայտում են հարցում
տարբեր նպատակներով:

Ավելի հաճախ նրանք հարցական երանգով գործածվում են այս կամ այն գործողությունը կատարելու վերաբերյալ, երկմտություն, կասկածանք, երկընտրանք և նման այլ վերաբերմունք արտահայտելու համար:

Օրինակ՝ «Որի՞ն մոտենալ, որի՞ հետ ձուլվել առմիշտ. Ծ՛րն է բարվոքը—չգրկվել հարուստ տնից, մնալ հավատարիս անասկանին և անգե՞ն, քե՞ լինել հարուստ, գորավոր, ինքնիշխան» (Շիրվ., 4, էջ 74): «Ի՞նչ խելք գտնել վերջ տալու անտանելի վիճակին: Քաժանվե՛լ: Ո՛ւր գնալ... Ինքնապանություն՝ մ գործել: Նա այդքան քաջություն չունի: Մեռնել մի ծերունու պատճառով և մեռնել այդ երիտասարդ հասակում... Գանգատվե՛լ: Ո՛ւմ, ինչպե՞ս» (Շիրվ., 3, էջ 227—228): «Առարկե՛լ: Ձիավատա՛լ նրան: Հայտնե՛լ խորխոռունյաց նախարարին որևէ վստանություն» (ԴԴ, 6, էջ 222):

Հարցական բնույթի անդեմ բայական նախադասությունները երբեմն արտահայտում են բացասական, մերժողական վերաբերմունք այն գործողության նկատմամբ, որն արտահայտված է բայով: Այդ բացասական վերաբերմունքը կարող է տարբեր արտիճանի լինել՝ սկսած նրա կատարումը, կատարման անհրաժեշտությունը կասկածի տակ առնելուց՝ վերջացրած կատարման ժխտումով:

Օրինակ՝ «Ինչո՞ւ կեղծել և ստել, ինչո՞ւ խաբել և մի ուրիշ, ավելի վատ սխալ գործել» (Շիրվ., 3, էջ 291): «Ինչո՞ւ երկար մտածել, մի՞թե ամենքի վերջը այդ չէ... Տանջվե՛լ, նալածվե՛լ, չարչարվե՛լ և ինչո՞ւ, միայն մի անո՞ւմ թողնելու համար» (Շիրվ., 3, էջ 294):

Այս միակազմ բայական նախադասությունները թեև արտահայտված են անորոշ դերբայով, բայց և այնպես վերաբերում են որևէ դեմքի, մեծ մասամբ դրանք վերաբերում են հենց իրեն՝ խոսողին, ինչպես երևում է տեքստից:

Սակայն միակազմ բայական նախադասությունները հաճախ այնպիսի գործողություն են ցույց տալիս, որի կատարումը հատկապես չի վերաբերում որևէ դեմքի, այլ վերաբերում է ընդհանուրին՝ և՛ խոսողին, և՛ խոսակցին, և՛ ուրիշներին: Եթե վերոհիշյալ դեպքերում միակազմ և երկկազմ

նախադասությունների միջև ունական տարբերությունն է կարևոր խոսքի սեղմության և կամ այլ պատճառով, ապա այստեղ միտքը անդեմ նախադասությամբ արտահայտելու հարցում կա որոշակի անհրաժեշտություն, այն է՝ գործողությունը հատկապես որևէ դեմքին չվերաբերելու հանգամանքը արտահայտել՝ լեզվական միջոցներով, որի լավագույն միջոցը, իհարկե, գործողության արտահայտումն է բայի անդեմ ձևով:

Այսպես, Հր. Աճառյանը նշելով Համշենի բարբառում եզև բառի հոգնակիի անկանոնությունը, հարցնում է՝ «Խնչպե՞ս բացատրել այս անկանոնությունը» (ԱՃ., ԼՔ, 3, էջ 730):

Այստեղ բացատրելու գործողությունը արտահայտված է առանց վերագրելու որևէ դեմքի, ընդհանուր ձևով: Խոսքը վերաբերում է լեզվական այդ երևույթը ընդհանրապես բացատրելուն, բացատրելու հնարավորությանը և ոչ թե մասնավորապես այս կամ այն անձի, այս կամ այն դեմքի կողմից բացատրվելուն:

Բերենք մեկ այլ օրինակ՝ «Խնչպե՞ս ուղղել այս գրությունը:— Եղբայրական ժողովուրդների գեղարվեստական առձանի թաղամասության պրակտիկան ինչպե՞ս ներդաշնակել այդ գործի պետական նշանակությանը» («Գրական թերթ», 2. 9. 1960): Ինչպես երևում է բերված օրինակներից, այսպիսի անդեմ բայական նախադասությունները գործածվում են հատկապես հեռտրական նպատակներով, այս կամ այն խնդիրը հարցման ձևով առաջադրելու դեպքում:

Միակազմ բայական անդեմ նախադասությունները հաճախ արտահայտում են իդձ, ցանկություն, տենչանք:

Օրինակ՝ «Հայացքը հառել ձեզունին՝ նա մի քաղցր արթնություն է ապրում... Ձվեն՛լ, չվեն՛լ, միայն «նրան» տեսնել արթուն աչքերով. զգալ նրա հմայիչ դեմքի, սլացիկ նստակի, խոր հայացքի վայելքը» (ԴԴ, 6, էջ 211): «Զոքեցի և պապակված առաջ մեկնվեցի, որ խմեմ... Այդ բոպին ոչի՛նչ, ոչի՛նչ, ո՛չ կյանք, ո՛չ մահ, ո՛չ աշխարհ ինձ համար գոյություն չունի, բացի ջրից: Խմե՛լ, խմե՛լ, հագենալ, կյանք առնել և թուրք տեղ հասցնել» (Վ. Անանյան):

Անվանական միակազմ նախադասությունները գործածվում են հատկապես գեղարվեստական խոսքի մեջ՝ թե՛ արձակում, թե՛ շափածոյում։ Այս նախադասությունները կարող են հեշտությամբ փոխարինվել երկկազմ նախադասություններով և գործածվում են խոսքի սեղմության, միտքը ավելի խոնարհված արտահայտելու նպատակով։

Թրինակ՝ «Ութը հարյուր ութսունմեկ թիվ։ Էջմիածին։

Միրգ ու փոշի։ Անխիղճ արև։
Շողամրցում Մասիսների, Արագած
Սրբագործված հին-հին քարեր։
Եվ մայր Արաքս, և՛ Մայր Տաճար,
Տաճարի շուրջ սուրբ-սուրբ վանքեր,
հնչող,
շնչող,
կռնչող զանգեր...

Եվ Ճեմարան՝ մտքի կաճառ—
Ուսումնատենչ երազների
Սառցակալում և տաքացում...
Ճեմարանի բակում արձակ՝
Խոսվածքների, տարազների
Խայտաբղետ հավաքածու (ՊՍ, ԱԶ, էջ 17)։

Ընդամենը մի քանի տողում այսպիսի հարուստ և բազմակողմանի նկարագրություն տալու հարցում կարևոր դեր ունի միակազմ նախադասությունների օգտագործումը, բայց, իհարկե, վարպետ օգտագործումը։

Վերոհիշյալ հատվածում եղած նկարագրությունը կարելի է արտահայտել նաև երկկազմ նախադասություններով, և այդ երկու նկարագրությունների միջև կլինեն միայն ոճական տարբերություններ։

Մեկ օրինակ էլ բերենք Ե. Չարենցից, որը միակազմ անվանական նախադասությունները գործածում է մեծ վար-

պետութեամբ, խոսքը դարձնելով սեղմ, դիպուկ, միտքը խտացված:

«Ամեն ինչ գորշ, առօրյա: Ինչպես միշտ—գորշ փոշոտ փողոց: Սառը ջուր: Խաղող: Գինի: Մառդիկ: Կառնեք: Մառդիկ: Եվ ոչ ոք չգիտեր, որ հիմա Աստաֆյան փողոցի վրա հրաշք պիտի լինի» (ԵԶ, էջ 284):

Անդեմ անվանական նախադասութիւնները, ինչպես երևում է վերևի օրինակներից, գերազանցապես գործածվում են արտահայտելու համար առարկայի եղելութիւնը, գոյութիւնը տվյալ տեղում, պայմաններում, նշելու տվյալ տեղը: Այդպիսի անվանական նախադասութիւնների գլխավոր անդամն արտահայտվում է առարկա ցույց տվող գոյականով:

Անվանական միակազմ նախադասութիւնը կամ նրա գերադաս անդամը կարող է արտահայտվել նաև գործողութիւն իմաստ ունեցող գոյականով: Այդպիսի անվանական նախադասութիւնը ցույց է տալիս գոյականով արտահայտված գործողութիւն, վիճակի, երևույթի գոյութիւնը, այդ գործողութիւն կատարված լինելը, կատարվելը:

Օրինակ՝ «Թփրփոց: Պետք թնդաց տեղից» (ԴԴ, 1, էջ 82):

Անվանական նախադասութիւնների կազմութեան մեջ որոշ դեր կատարում է այժմայնարկութիւնը ցուցական իմաստով: Այս ձայնարկութիւնը դրվելով գոյականի վրա, հաճախ ցույց է տալիս առարկայի գոյութիւնը, գտնվելը տվյալ տեղում:

Օրինակ՝ «Ա՛յ ձե՛նի դե՛ղ, ա՛յ լա՛վ ձե՛նի դե՛ղ» (Թում., 3, էջ 254): «Ա՛յ ձե՛նի դե՛ղ, լա՛վ ձե՛նի դե՛ղ» (Թում., 3, էջ 255): «—Դե որ չես ուզում, վկաներդ բեր, գործը շարունակում եմ: Միմոնը չՎախեցալ:»

— Ա՛յ վկա,—համարձակ ցույց տվեց Մարուշին» (Թում., 3, էջ 20): «Ա՛յ Զորածառը: Արահետով որ գնաք, մի տասը ուպեից կհասնեք» (Անթ., էջ 400):

Որոշ անվանական նախադասութիւնների ձևավորման խնդրում դեր կատարում է նաև անհայտ կազմակերպող բառը՝ ցուցական իմաստով, որ դրվելով գոյականի վրա, ցույց է

տալիս այդ գոյականով արտահայտված առարկայի գտնվելը, գոյությունը տվյալ տեղում:

Օրինակ՝ «Ահա Բաբուր» (Պուշկին, 1, էջ 184): «Ահա բուն հարցմունքը» (Դվ, էջ 10): «Ահա իսկական մարդասպանը, պապի» (Անթ., էջ 249): «Ահա մի խումբ օրինակներ լեհահայոց բարբառից» (ԱՃ., ԼԹ, 3, էջ 899): «Ահա աստղերը... Նրանք մեծանում են, նրանք շարժվում են» (Բակ., էջ 154): «Ահա մեր գետը, մեր զուլալ գետը» (Բակ., էջ 145): «Ահա մի ծերուկ, աւաղջ, ալեգարդ» (Հ. Հակոբյան, «Կարմիր ալիքներ»):

Նման դեպքերում ահա եղանակավորող բառի հետ երբեմն գործածվում է նաև և շաղկապը:

Օրինակ՝ «Ահա և տիկին Մարիա Մելյանը» (ՎԱ, ԼԿ, էջ 78): «Ահա և նրա ձայնը, մի՞թե խելագարի ձայն չէ» (Շիրվ., 3, էջ 246): «Ահա և կյանքը այն կարոտալից» (Անթ., էջ 9): «Ահա և ձեր բարեկամները: Սեդան մի ըստե՛ս շեմում կանգնեց, նայեց Արշակյանին ու Արզամին» (Հ. Քոչար, «Մեծ տան գավակները»): «Ահա և նրանք, ընկերներ» (Հ. Հակոբյան, «Կարմիր ալիքներ»):

Ինչպես ահա բառը, այնպես էլ ահա և կապակցությունը երբեմն կիրառվում են թվարկումների ժամանակ, գործածվելով նախադասության թվարկվող անդամների հետ:

Օրինակ՝ «Ահա և նրանք՝ գործարանները

Նոր սերունդների,

Ահա և նրանք՝ ստեղծողները

Այս նոր աշխարհի....

Ահա և նրանք—ճախարակները

Զուգահեռ շարքով»

(Անթ., էջ 8):

Տարածված են նաև ժխտական բնույթի անվանական նախադասություններ, որոնք ցույց են տալիս անունով արտահայտված առարկայի, երևույթի գոյություն չունենալը: Ժխտական միակզմ անվանական նախադասություններով ժխտական բնույթը ձևավորվում է, նախ, ոչ մի դերանունով,

որ դրվում է այն գոյականի վրա, որի ցույց տված առարկայի, երևույթի գոյությունը ժխտվում է:

Օրինակ՝ «Ոչ մի ծառ: Նույնիսկ խոտը այնտեղ չի էլ, դեղնած ու չորացած» (ՎՓ, ԾԺ, 4, էջ 491):

Երբ ժխտական միակազմ անվանական նախադասության գլխավոր անդամն արտահայտվում է գործողության իմաստ ունեցող կամ այդպիսի իմաստ ենթադրող գոյականով, նախադասությունն արտահայտում է գործողության չկատարում, սովյալ գործողության բացարձակ բացասում:

Օրինակ՝ «Ոչ մի զիջում: Բոլորս կկործանվենք, եթե չմիանանք» (ԴՎ, էջ 105): «144 բարձունքի դիմաց ոչ մի փոփոխություն: Ամսի 5-ին հաջող հետախուզություն ունեցանք» (ԴԴ, 1, էջ 88): «—Ոչ մի արյունահեղություն այստեղ,— եզրափակեց Ներշապուհը Ատոմին լսելուց հետո» (ԴԴ, 4, էջ 36): «Կրկին ոչ մի պատասխան» (ԴՎ., էջ 27): «Սահալը ուժեղացրեց դարբասի թակոցը: Ոչ մի ձայն» (Ն. տ., էջ 363): «Իսկ Բյուզանդիայից և Հոնքից դեռ ոչ մի լուս» (Ն. տ., էջ 491):

Ավելի շատ են տարածված ժխտման կրկնությունն ունեցող կամ բազմակի ժխտում արտահայտող միակազմ նախադասությունները: Ժխտումն այս դեպքում արտահայտվում է ո՛չ... ո՛չ շաղկապով:

Օրինակ՝ «Երբեմն շրջվում էր և նայում ետ: Ոչ ոք, ոչ մի շուն, ոչ գազան, ոչ թռչուն» (ԴԴ, 3, էջ 346): «Այլևս ո՛չ սարսափ, ո՛չ մահ» (ԴԴ, 1, էջ 89): «Ու լուծվում: —Ո՛չ լաց եվ ո՛չ կական» (ՄՏԲ, էջ 324):

Որպես միակազմ նախադասությունների յուրահատկություն պետք է նշել, որ ոչ բոլոր միակազմ նախադասությունների ժխտականը կարելի է կազմել: Մինչդեռ, ինչպես հայտնի է, յուրաքանչյուր երկկազմ նախադասության դրական ձևը հեշտությամբ կարելի է վերածել ժխտականի: Այս տարբերության պատճառն այն է, որ երկկազմ նախադասությունը, ավելի ճիշտ, նրա ստորոգումն արտահայտվում է որոշակի քերականական միջոցով՝ օժանդակ բայով, բայի խոնարհված ձևով, որոնց ժխտականը հեշտությամբ կարելի է կազմել և

դրանով իսկ հաստատական նախադասությունը վերածել
ժխտականի։ Մինչդեռ միակազմ նախադասությունները ձե-
վավորվում են, ինչպես տեսանք, այլ եղանակներով, որոնք
դժվարացնում կամ անհնարին են դարձնում կառուցվածքա-
յին այդպիսի փոփոխություն կատարելը։

Միակազմ անդամ որոշ նախադասություններ արտա-
հայտում են գործողություն կատարելու հրաման, թելադրանք։

«Առա՛ջ,— հրամայեց լեյտենանտը» (Անթ., էջ 317)։
«Առա՛ջ դեպի ձախ, մտնե՛լ գլխավոր փողոցը» (Անթ., էջ
316)։ «—Լսում ենք։—Լուրջո՛ւն» (ՔԹ, ՈՀ, էջ 198)։ «Աթոյի
հարսը մեռնում է. օգնությո՛ւն, օգնությո՛ւն» (Իս., էջ 281)։
«Ջո՛ւր, մի կաթիլ ջո՛ւր» (Անթ., էջ 15)։ «—Հարգա՛նք, ո՛վ
անգղ, դեպի մարդկային ուղեղը» (Անթ., էջ 15)։ «Ձգա՛ստ։
Այդ բառը կրկնվեց վաշտ առ վաշտ» (Անթ., էջ 490)։ «Հեռո՛ւ
իմձանից, սպանի՛ր հուսահատություն» (Շիրվ., 3, էջ 272)։
«Վո՛ւտ՛ւտ,—սաստեց ժողովրդին Ալեքսիանոսը» (Անթ.,
էջ 92)։

ԲԱՌ-ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Միակազմ նախադասությունների մի հատուկ տեսակ է բառ-նախադասությունը, որն արտահայտվում է մեկ բառով։ Այս նախադասությունների ամբողջ բովանդակությունը հանդում է ընդհանուր հաստատման կամ ժխտման, համաձայնության կամ անհամաձայնության, արտահայտվածի եղանակավորող էքսպրեսիվ գնահատման¹։

Օրինակ՝ «—Դուք հա՞յ եք։—Այո՛» (Անթ., էջ 324)։

«—Եկե՛լ է Գրիգոր Սերգեևիչը, —հարցրեց նա։—Ո՛չ, պատասխանեց Մանեն» (Ն.-Դ., 3, էջ 10)։

Բառ-նախադասությունները չպետք է շփոթել այն անդեմ կամ դիմավոր միակազմ նախադասությունների հետ (պարզ համառոտ միակազմ նախադասություններ), որոնք նույնպես արտահայտվում են մեկ բառով, բայց բառ-նախադասություններ չեն, ինչպես՝ Մթնեց։ Լուսացավ։ Այս նախադասությունները, ինչպես տեսանք վերևում, հեշտությամբ կարող են ստանալ լրացումներ և դառնալ պարզ ընդարձակ նախադասություններ, իսկ բառ-նախադասությունները լրացումներ չեն կարող ստանալ և միտքն արտահայտում են միայնակ։

Առանձին դեպքերում սրանք կարող են արտահայտվել կայուն կապակցություններով, որոնք մեկ բառի արժեք ունեն։ Օրինակ՝ —Ի՞նչ ես կարծում, այսօր անձրև կգա՞։ —Հազիվ քե։ Քիսկ նա հիշո՞ւմ է այնպիսի ջրառատ տարիներ, երբ գետի ամբողջ հունով լիժը ջուր հոսեր։ —Ինչպե՞ս չե՞ (ԱՍԾ, էջ 231)։

¹ «Грамматика русского языка», Москва, том 2, часть вторая, стр. 79—80.

Բառ-նախադասութիւնների հետ կարող են գործածվել եղանակավորող բառեր՝ իմարկե, անշուշտ, հարկավ և այլն, որոնք նախադասության անդամ չեն, այլ համապատասխան երանգ են հաղորդում նախադասությանը:

Օրինակ՝ «Մալիշէր զգացված լոնց, ապա անձայն շշռն-յաց.—այո՛, իմարկե» (Զ. Քոշար, «Մեծ տան զավակները»):

Բառ-նախադասութիւնների հետ հաճախ գործածվում է կոչական, որ հանդիսանում է խոսակցի անունը, հանձինս նրա հատուկ անվան, կոչման և այլն:

«—Դու տակավին նրան հա՛յր ես համարում, Սամվել... —Այո՛, Աշխեն» (Ր, 7, էջ 283): «Դու ծանոթ ես մեր կողմերի հետ:—Այո՛, օրիորդ,— Դու տեսե՛՛, ես Մանակերտը:—Այո՛, օրիորդ: Քեզ ծանոթ է այն աղբյուրը, որ բխում է Մանակերտի ստորոտից:—Այո՛, օրիորդ» (Ր, 7, էջ 274): «Այժմ որտե՛ղ է Ռշտունյաց նահապետը՝ Գարեգին իշխանը, Նրեկ գերեցին նրան:—Ո՛չ, տե՛ր իմ» (Ր, 7, էջ 264):

Վերջապես բառ-նախադասության հետ նրա միտքը պարզաբանելու նպատակով կարող է գործածվել երկկազմ կամ միակազմ նախադասութիւն:

Օրինակ՝ «—Դու զգվելի գաղափար ունիս ամուսնության մասին,—նկատեց Մանեն նողկանքով:—Ո՛չ, սիրելիս, ես ճիշտ այն գաղափարն ունիմ ամուսնության մասին, ինչ գաղափար որ նա պարունակում է իր մեջ» (Ն.-Դ., 3, էջ 28): «—Դու քեզ համար, ես ինձ համար: Կարծեմ շատ պարզ է, չէ՞:—Այո՛, շատ պարզ է, որ դա կուշտ և ժլատ մարդու վարդապետություն է» (Ն.-Դ., 3, էջ 71): «—Ուրեմն դու մի քիչ կեղտոտ շապիկս և հնացած սյուրտուկս վերադրում ես այն բանին, որ ես ժա՞տ եմ:—Այո՛: Ձեռ ուզում մաքուր ու լավ հագնվել, որ փող ծախսած չիմես» (Ն. տ., էջ 72):

Բառ-նախադասութիւնները կարող են կրկնվել՝ հաստատումը, ժխտումը և այլն ավելի շեշտելու համար:

Օրինակ՝ «Ասիր, Մանե:—Հավատա, ես վատ եղբայր չեմ, որ ուզենաս, կարող եմ շատ պիտանի լինել քեզ: Արի գնանք դուռը:—Ո՛չ, ո՛չ,—կրկնեց Մանեն» (Ն.-Դ., 3, էջ 117): «Ա՛յ պառավ, մեկ էլ եմ հարցնում, սա քո որդին չէ՞ ...—Ձե՛, չէ՛...»

չէ՝» (Անթ., էջ 272): «(Տ. Պեշ): Դուք ինքներդ ձեզ մեծապես վնասում եք, պարոն Ֆորդ: (Ֆորդ). Այո՛, այո՛: Եվ ես պետք է տանջվեմ դրա համար» (Շեքս., 2, էջ 394): «Մի՛ շաղակրատիր: Հրամանը չի կատարի: Քեզնից ուժեղ և քեզնից խելոք մարդիկ են այն կողմը գնում: Նա ցույց տվեց արևելքը:— Այո՛, այո՛,—հաստատեց Ուլիտա Դիմիտրովնան իր ամուսնու խոսքերը» (Հ. Քոչար, «Մեծ տան զավակները»):

Բառ-նախադասությունները բաժանվում են երեք հիմնական խմբի՝ հաստատական, ժխտական, հարցական:

Հաստատական բառ-նախադասությունները միօրինակ չեն: Ժամանակակից ռուսական քերականագիտության մեջ այդ նախադասությունները բաժանվում են երեք խմբի՝ բուն-հաստատական նախադասություններ, արտահայտված որևէ մտքի հետ համաձայնություն արտահայտող նախադասություններ, մենախոսության մեջ գործածվող հաստատական նախադասություններ, որով խոսողը հաստատում է իր միտքը¹:

Հաստատական բառ-նախադասությունները գործածվում են երկախոսությունների մեջ՝ հարց ու պատասխանի դեպքում: Խոսողը այս նախադասություններով դրական պատասխան է տալիս խոսակցի այս կամ այն հարցին:

Օրինակ՝ «—Դուք ինձ ասացեք, այն երկու երիտասարդը, որ ձեզ հետ էին, գավառացիներ էին, չէ՞:—Այո՛» (Ն.-Դ., 3, էջ 76): «Դու Բադամյանի մասին ես ուզում խոսել, չէ՞,—հարցրեց Վահանը երկար սպասելուց հետո:—Այո՛» (Ն.-Դ., 3, էջ 95):

Բուն պատասխանական բառերից բացի, հաստատական բառ-նախադասություններն արտահայտվում են նաև մի շարք այլ եղանակավորող բառերով ու կայուն կապակցություններով, ինչպես՝ իհարկե, անշուշտ, ինչպես չէ, հարկավ և այլն:

Օրինակ՝ «—Համաձայն եք:—Անշուշտ» (ԵԶ, ԸԵ, 1955, էջ 88): «Դա շատ տգեղ վարմունք կլինի իմ կողմից:—Օ՜ անշուշտ (Ն.-Դ., 3, էջ 109): «Ուրեմն, Աքսել, քեզ տաքությունն

¹ «Грамматика русского языка», Москва, том 2, часть 2, 1954, стр. 81.

է մտահոգում:—Ինձաբեկ» (ԺՎ, էջ 41): «Լա՛վ, մի՛թե ոչինչ չես տեսնում այդ թերակղզու վրա:—Ինչպե՞ս չէ, մի լեռ եմ տեսնում» (ԺՎ, էջ 39):

Նման բառ-նախադասություններով հաստատական միտքն արտահայտվում է խոսողի որոշակի ընդգծված վերաբերմունքի հետ միասին կամ, ավելի ճիշտ, հենց այդ որոշակի վերաբերմունքով:

Հաստատական բառ-նախադասությունների երկրորդ խմբի մեջ մտնում են այն նախադասությունները, որոնք գործածվում են երկախոսության մեջ, բայց ոչ որպես հարցի պատասխան, այլ որպես համաձայնություն խոսակցի արտահայտած մտքին:

Օրինակ՝ «—Հո տեսնում ես, թե ինչ է դառել... ինչպես մեծացել, գեղեցկացել է:—Այո՛, շատ է գեղեցկացել» (Մուր., 5, էջ 20): «—Ես հավատացած եմ, որ երբ դրությունդ բարւոքվի, կաշխատես ավելին անել:—Անշուշտ» (Ն. տ., էջ 34—35): «—Այդ գիտենք. ընդհատեցին մի քանի ձայներ:—Այո՛. բայց գլխավորը չգիտեք» (Ն. տ., էջ 212): «—Այդ կողմերում, Արաքսի ափերը, ասում են, խիստ հարուստ են վայրենի երեւներով:—Այո՛, հարուստ են,—ասաց Մերուժանը մի առանձին հեգնությամբ:— Արշակունի թագավորները Արարատում բազմացրին վայրենի երեւներ միայն» (Բ, 7, էջ 483): «Մի անգամ հիմարացա փող պարտք արի, հինգ տարի քերթեց կաշիս... Բայց էլի մեր ցեղի մեջ մարդիկ կան. Սարոյենց ցեղը..., —Հա,—միջամտեցի ես,—լսել եմ. գյուղը երկու ցեղի է բաժանված, և երկուսն էլ իրար վնասում են» (ՎՓ, ԵԺ, 4, էջ 255): «Եվ ամենից խելոքը դու ես...—Անշուշտ» (Ն.-Դ., 3, էջ 67):

Վերջապես հաստատական բառ-նախադասությունները կարող են գործածվել ոչ միայն երկախոսության, այլև մենախոսության մեջ և վերաբերել իր իսկ՝ խոսողի արտահայտած մտքին:

«Սիրելի՛ ընթերցող: Ներիր, որ այս հարցերի պատասխանը չես գտնի այս գրքում: Այս հարցերի պատասխանը քո սրտում, քո հոգում պիտի գտնես: Պիտի ցանկություն զգաս

գտնելու, ուրիշ ոչինչ: Այո՛:—Ուրիշ ոչինչ» (Ե. Չարենց, «Երկիր նաիրի»):

Բուն ժխտական բառ-նախադասութիւնները, ամենից առաջ, արտահայտում են ժխտական պատասխան խոսակցի տված հարցին և, իհարկե, գործածվում են երկախոսութիւնների մեջ:

Օրինակ՝ «Անցե՛լ ես դու այդ ճանապարհով:—Ո՛չ» (Մուր., 5, էջ 35): «Դու քեզ վիրավորված ես համարում:—Ո՛չ» (Բ, 7, էջ 93): «—Դու այսօր ճաշին մեզ մոտ չե՞ս լինի,—հարցրեց Սամվելը:—Ո՛չ» (Բ, 7, էջ 100): «Մարդդ դեռ չի՞ վերադարձել հանքերից:—Ո՛չ» (Ն. տ., 3, էջ 23): «—Երեկ երազիս տեսա քեզ... —Ինչպե՞ս տեսար, սպանվե՞լ էի... —Ձե՛: Քաղաքացիական պայք էր» (Հ. Քոչար, «Մեծ տան զավակները»):

Ժխտական բառ-նախադասութիւնները երկախոսութիւններում կարող են գործածվել ոչ իբրեւ հարցի պատասխան, այլ արտահայտելու համար ժխտական վերաբերմունք խոսակցի մտքի նկատմամբ:

Օրինակ՝ «—Գիտեմ, թե ինչու՛ ւ այդպես վաղ արթնացրիր ինձ, սիրելի մայրիկ,—ասաց նա ուրախանալով:—Գիշերը պայման դրեցիք, որ այսօր մե՛նք գնանք որսի, և ո՛չ Շուշանիկն ու Հասմիկը:—Ո՛չ, սիրելի Որմիզդուխտ... Այսօր մե՛զ պիտի որսան» (Բ, 7, էջ 431): «—Ե՛կ, համբուրեմ քեզ, սիրելի Որմիզդուխտ,—ասաց Թագուհին վշտալի ձայնով:—Հասավ ժամը, որ անողորմ ճակատագիրը պիտի բաժանե մեզ միմյանցից... —Ո՛չ, մենք չենք բաժանվի՛ միմյանցից, ուր որ քեզ տանելու լինեն, ես էլ քեզ հետ կգամ» (Բ, 7, էջ 432): «—Խոստովանիր, որ դու գլուղում վաշխառությամբ էլ ես պարապում...—Ձե՛, այդ էլ չեղավ, քուլրիկ ջան» (Ն.-Դ., 3, էջ 72): «—Դու սկսում ես ծաղրել:—Բնա՛վ» (Անթ., էջ 411):

Ժխտական բառ-նախադասութիւնները գործածվում են նաև մենախոսության մեջ իր իսկ խոսողի արտահայտած այլ կամ այն միտքը ժխտելու համար:

«Ո՛վ գիտե Դրոյին... Խնշա՞ն է նա

Այդպես գաղտագողի հնձել...

Մեկը Թեիկն էր, Եգորի եղբայրը.

Եգորը Դրոյին կների՞:—Ո՛չ:

(Ե. Չարենց, «Խմբապետ Շավարշը»):

«Եվ մի՞թե մարդիկ այստեղ չեն նայել

Երբեք հեռուներն այս լա՛վ աշխարհի,

Ուր արևը բյո՛ւր հրաշք է վառել,

Որ մարդու հոգին խանդավառ, բարի՝

Գզվի մի անմար հիացքով ջահել

Ամեն մի խոտի, ամեն մի քարի:

Ախ, ո՛չ»

(Ե. Չարենց, «Դանթեական առասպել»):

«Նաիրի՛, ես սիրում եմ քեզ.

Քեզ սիրում եմ, իմ Իրան.

Ես հիմա հեռու՞ եմ... Օ, ո՛չ.

Ձեզ մոտիկ եմ հիմա ավելի»

(Ե. Չարենց, «Կապկազ»):

. Խնչպես ասվեց վերը, բառ-նախադասությունները կարող
են ունենալ հարցական բնույթ, արտահայտել հարցում:

Օրինակ՝ «—Ես չեմ ընդունում ձեր որոշումը:—Այո՞:—
Այո՞» (Շիրվ., 3, էջ 158): «—Եվ ուրա՛խ էիր:—Ո՛չ:—Ո՛չ»
(ն. տ., էջ 94): «Գո՞հ ես իմ օգնությունից: Այո՞» (Հ. Քոչար,
«Մեծ տան զավակները»): «Անչափ ուրախ եմ, ընկեր պետ:
Ո՞ր գունդը պիտի ծառայեք:—Զորամասի քաղբաժնում:—
Այո՞» (Հ. Քոչար, «Մեծ տան զավակները»): «Կարմիր արմեյ-
ցի՞ ես:—Այո՞:—Այո՞ն՞» (Ե. Չարենց, «Կոմունարների պատը
Փարիզում»):

Բառ-նախադասություններին են հարում ողջունի,
բարևի, բարեմաղթության, շնորհակալության և նման այլ
իմաստ ունեցող արտահայտությունները:

Օրինակ՝ «Պապի ջան, բա՛րի գալուստ» (Անթ., էջ 243):

«Կեցցես, ուրեմն» (Շիրվ., 3, էջ 342): «—Բարեւ ձեզ,—
ձիուց ցած թռչելով բարձր ողջուն տվեց թանկագին հյուրը»
(ՊՊ, 2, էջ 22): «—Բարեւողջուն, տեր մարգարան» (Դվ, էջ
24): «Ներողություն, որ ուշացա» (Շիրվ., 3, էջ 344): «Բարի
հանապարհ ձեզ, տղերք» (Հ. Քոչար, «Մեծ տան զավակնե-
րը»): «Բարեւ ձեզ, բնկեր գումարտակային կովիսար» (ն. տ.):
«Շնորհակալություն, Աննա Միխայլովնա» (ն. տ.): «Ներո-
ղություն, բեռի» (ն. տ.):

ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Նոսքի մեջ հաճախ անհրաժեշտ չի լինում գործածել բոլոր նախադասությունների բոլոր անդամները, և շատ անգամ վերջիններիցս մեկը կամ մի քանիսը բաց են թողնվում:

Օրինակ՝ «Պայթեցին առաջին ականները խոյացող տանկի առաջ, սոււեցին գնդակները թշնամու հակատանկային զենքերից»:

— Ինչի ա՛ջ, ուղիղ խրամատների վրա, — հրամայեց նա մեքենան վարողին... Տանկը կանգնում էր երբեմն միայն մի վայրկյան, հրամանատարը թնդանոթից կրակում էր փախչող խմբերի մեջ և հրամայում լցնողին:

— Արա՛գ-արա՛գ...

Նսեկից և աջ ու ձախ կողմերից գալիս էին ուրիշ տանկեր...

Ահա փողոցի սկիզբը: Ռադիստը հայտնում է.

— Փողոցի սկիզբը ականապատված է:

— Շուտ տուր դեպի ձախ, — հրամայում է տանկի պետը» (Հ. Քոչար, Որդու վերադարձը):

Այս հատվածում ընդգծված նախադասություններում բաց են թողնված, արտահայտված չեն մի շարք անդամներ: Առաջին ընդգծված նախադասությունը արտահայտված է միայն տեղի պարագայով, երկրորդ ընդգծված նախադասությունը՝ միայն ձևի պարագայով: Նրանցում չկան ենթական և ստորոգյալը: Հաջորդ նախադասության մեջ բաց է թողնված «նսեկից և աջ ու ձախ կողմերից» անդամների հատկացուցիչը (տանկի, ալդ տանկի): «Շուտ տուր դեպի ձախ» թերի նախադասության մեջ բաց են թողնված ենթական և ուղիղ

խնդիրը (եթե դիտենք իբրև լրիվ երկկազմ նախադասության թերի նախադասություն, այդ մասին տես էջ 156):

Այս և նման նախադասությունները թերի նախադասություններ են: Այսպիսով, այն նախադասությունը, որի մեկ անդամը կամ մեկից ավելի անդամները բաց են թողնված, բայց մտքով հասկացվում են, կոչվում է թերի նախադասություն:

Ինչպես երևում է վերևի օրինակներից, թերի նախադասությունը կարող է արտահայտված լինել մեկ անդամով և նրանում կարող են բաց թողնված լինել մի քանի անդամներ և քնդհակառակը, այն կարող է արտահայտված լինել մի քանի անդամներով, ու բաց թողնված կարող է լինել միայն մեկ անդամ:

Ծիշտ կառուցված խոսքում թերի նախադասության միտքը շատ որոշակիորեն հասկացվում է, թեկուզ և այն արտահայտված լինի մեկ խնդրով կամ պարագայով, և դրան նպաստում են խոսքը, խոսելու պայմանները, հանգամանքները:

Այս տեսակետից քննենք վերևի օրինակներից միայն մեկը: Երբ տանկի պետը մարտի ժամանակ որոշակի պայմաններում տանկիստին հրամայում է. «Շո՛ւռ տուր դեպի ձախ», թեև այդ նախադասության մեջ «շուռ տալ» ներդրածական սեռի բայի ուղիղ խնդիրը բաց է թողնված, այնուամենայնիվ հասկանալի է, որ խոսքը վերաբերում է տանկին, նրա ընթացքին: Այնուհետև, այդ նախադասության ենթական բաց է թողնված, զեղչված է, բայց հասկանալի է, որ ենթական դու-ն է, քանի որ ստորոգյալն արտահայտված է բայի երկրորդ դեմքով:

Թերի նախադասությունը որպես այդպիսին պետք է գիտել, ամենից առաջ, ձևային տեսակետից, քանի որ խոսքի մեջ նրա միտքը թերի չէ ու բավարար չափով հասկացվում է: Եվ քանի որ թերի նախադասության միտքը հասկացվում է, ուստի քոլորովին էլ անհրաժեշտ չի լինում վերականգնելու նրա շարտահայտված անդամները: Թերի նախադասության անդամք կամ անդամները չեն արտահայտվում՝ տվյալ խոսքում,

պայմաններում ինքնին հասկանալի լինելու պատճառով: Եվ առհասարակ լեզուն ձգտում է շարտահայտել այն, ինչ ինքնին հասկանալի է:

Թերի նախադասության մեջ շարտահայտված անդամը կամ անդամները կարող են հասկանալի լինել կա՛մ միայն տվյալ նախադասությունից առանձին վերցրած, կա՛մ կից նախադասություններից:

Երբ խոսակիցներից մեկն ասում է, օրինակ. «Վաղն այստեղ ինձ կսպասես, մինչև որ գամ», հասկանալի է, որ առաջին նախադասության ենթական է դու, իսկ երկրորդինը՝ ես, որոնք երկուան էլ զեղչված են ինքնին հասկանալի լինելու պատճառով:

Սակայն հաճախ, հատկապես երկախոսությունների դեպքում, թերի նախադասության միտքը հասկանալի է դառնում կից և հատկապես նախորդ նախադասությունների միջոցով միայն, խոսքի ընթացքից:

«—Դու ի՞նչ գծով ես գնում Չորածառ,—նույն քնկոտ ձայնով հարցրեց նա:

— Ակադեմիայի... — պատասխանեցի ես և պատմեցի իմ անելիքների մասին:

— Քանի՞ օր պիտի մնաս:

— Մոտ մի ամիս:

— Շատ է...

— Իսկ դո՞ւ...

— Մի ֆանի օր...

— Ի՞նչ՝ նպատակով...

— Հենց այնպես, ձեռկաճուրյան համար...

— Ձեռկաճուրյա՞ն...

— Այո:

— Երեի հումանիտար և էսթետիկ գիտությունների գծո՞ւմ,—կատակեցի ես» (Անթ., էջ 400):

Ընդգծված բոլոր նախադասությունները թերի են, և դրանց միտքը կարելի է հասկանալ միայն խոսքի մեջ վերցնելով, հաշվի առնելով նախորդ նախադասությունները:

Հասկանալի է, որ թերի նախադասությունը հակադրվում է լրիվ նախադասությանը, որի բոլոր անդամները արտահայտված են լինում: Նկատենք, որ թերի նախադասությանը հակադրվում է ոչ միայն երկկազմ լրիվ նախադասությանը, այլև միակազմ լրիվ նախադասությունը:

Օրինակ՝ «Եվ մինչև Տերենտը կընկներ տապալվող ծառի պես՝ Բաթը սուրն առաջ ճոճելով, բաց դռնից նետվեց դուրս: — Բռնե՛լ...» (Ս. Զորյան, Պապ թագավոր, 3): «Ոչ ոքի սպասել չենք կարող: Նղածով դիմադրե՛լ» (Դվ, էջ 432):

Ընդգծված նախադասությունները թերի միակազմ նախադասություններ են, որոնցից առաջինում բաց է թողնված ուղիղ խնդիրը, երկրորդում՝ անուղղակի խնդիրը:

Երբեմն դժվար է որոշել, թե տվյալ թերի նախադասությունը ինչպիսի լրիվ նախադասության թերին է՝ երկկազմ, թե՝ միակազմ: Այսպես, դժվար է ասել, թե սույն գլխի սկզբում բերված «Արագ-արագ» (էջ 153) նախադասությունը երկկազմ, թե՝ միակազմ նախադասության թերին է, քանի որ այն գործողությունը, որի պարագան է այդ թերի նախադասությունը, կարող է արտահայտվել թե՛ բայի երկրորդ դեմքով և թե՛ անորոշ դերբայով: Առաջին դեպքում համապատասխան լրիվ նախադասությունը կլինի երկկազմ, իսկ երկրորդ դեպքում՝ միակազմ: Սա նշանակում է, որ թեև թերի նախադասության միտքը լրիվ չափով հասկանալի է, բայց երբեմն դժվար է որոշել, թե խոսողը կամ հեղինակը նախադասությունը լրիվ ձևով կազմելու դեպքում հատկապես ինչ բառեր ու բառաձևեր կգործածեր: Դրա պատճառն այն է, որ միևնույն միտքը, մտքի այս կամ այն բաղադրիչը կարելի է արտահայտել լեզվական տարբեր միջոցներով:

Նախադասության թերի լինելու չափը տարբեր է լինում տարբեր դեպքերում: Նախադասությունը կարող է այնքան թերի լինել, որ չխանգարի նրա ինքնուրույն գործածությանը, կարող է և թերի լինել այնքան, որ խոսքից դուրս որևէ միտք չարտահայտի և չդիտվի որպես նախադասություն: Այս վերջինը հատկապես լինում է երկախոսությունների մեջ:

Թերի նախադասությունները շատ են գործածվում երկախոսությունների մեջ:

Երկախոսությունների մեջ, հատկապես հարց ու պատասխանի դեպքում, հաճախ խոսակցի հարցին պատասխան է տրվում ոչ լրիվ նախադասություններով, այլ միայն արտահայտելով խոսակցի հարցական նախադասության հարցման տակ եղող անդամի պատասխանը կամ այլ բնույթի նախադասության մտքի լրացումը բառով կամ բառակապակցությամբ:

Օրինակ՝ «Ո՞վ է նվագում այս կես գիշերին:—Նորան, իմ աղջիկը» (Անթ., էջ 402): «—Ո՞ւր է գնալու: —Քաղաք, կոնսերվատորիա: Դասերը շարունակելու» (ն. տ., էջ 348): «Իսկ ի՞նչ ես մտադիր հիմա: —Կատարել արքայի հրամանը» (Դվ., էջ 528):

Պատահում է նաև, որ երկախոսության մեջ գործածված թերի նախադասությունը ոչ թե խոսակցի հարցի պատասխանն է, այլ նրա արտահայտած մտքի որևէ լրացում, հավելում, որը կատարողը ամբողջությամբ չի կրկնում խոսակցի արտահայտած նախադասությունը:

«ՆԱՏԱԼՅԱ... Հերսիլեն ունի ամեն բան, ինչ որ հարկավոր է մի կնոջ բախտավորության համար:

ՍՈԼՈՄՈՆ. Բացի մեկից՝ համապատասխան ամուսնուց» (Շիրվ., 6, էջ 177):

«ՌՈՒԲԵՆ... Եվ նրանք, որոնց աշխարհայացքը մի փոքր բարձր է իրանց ամուսնու կոշիկներից, այժմ չեն կարողանում իրանց անհատական երջանկությունը նրա վրա հիմնել:

ՍՈՒՐԵՆ. (տաքանալով) Այդ այնտեղ ձեր լուսավոր եվրոպայում և ոչ մեզանում» (ն. տ., էջ 181):

«Ա. ՈՃՐԱԳՈՐԾ... Դու նենգ դավադիր, սուրդ մխեցիր քո թագավորի թիկունքը:

Բ. ՈՃՐԱԳՈՐԾ... Ուրիճ եղվեցիր սիրել, պաշտպանել» (Շեքս., 3, էջ 32):

Ծրկախոսութիւնների մեջ գործածվող թերի նախադասութիւնը կարող է ոչ միայն պատմողական բնույթ ունենալ ու լինել հարցի պատասխան կամ ասված որևէ մտքի հաստատական բնույթի լրացում, այլև կարող է լինել հարցում՝ խոսակցի ասածի այս կամ այն կողմի վերաբերյալ:

«ԿԱՐԻՆՅԱՆ... Ես ուզում եմ ձեզ հիշեցնել...

ԲԱԳՐԱՏ. Ձեր ոտնիկի մասի՞ն» (Շիրվ., 6, էջ 303):

«Այուրա Կոնստանդինովնա,—ասաց նա,—մի թանկագին նամակ եմ բերել ձեզ համար:—Վասյայի՞ց է,—ուրախացած հարցրեց աղջիկը, Իգնատ Պետրովիչից վերցնելով իրեն պարզած նամակը» (Անթ., էջ 390):

«ԱՆՆԱ... Հերսիլե, դու երևի ամեն օր զբոսնում ես:

ՀԵՐՍԻԼԵ. Ոչ, ես շատ քիչ եմ զբոսնում:

ԱՆՆԱ. Ինչո՞ւ» (Շիրվ., 6, էջ 72):

«ԱՆՏՈՆ. Դուք կին չեք, այլ հրեշ...

ՀԵՐՍԻԼԵ. Ինչո՞ւ: Որովհետև չե՞մ ատում և չեմ կարող ատել:

Որովհետև շրթունքներս չե՞ն դավաճանում իմ սրտին:

Որովհետև հանուն քո հպարտության չե՞մ պղծում անկեղծությունն ու նշմարտությունը...» (Ն. տ., էջ 195):

Թերի նախադասութիւնը երբեմն արտահայտվում է խոսողի նախադասութեան մեջ գործածված որևէ բառի կամ բառակապակցութեան միջոցով, որ արտասանում, կրկնում է խոսակիցը տվյալ առարկայի, հատկանշի վերաբերյալ իր վերաբերմունքը (զարմացական, հարցական և այլն) արտահայտելու նպատակով:

Օրինակ՝ «Մինչև ե՞րբ հանդուրժենք բռնությանն ու կեղծիքին... Միայն մոռցված Գաղիշոն ակամա հազաց և սրտատրուի՝ առանց կամենալու կրկնեց.— Բռնությա՞նը, կեղծիքի՞ն» (Դվ., էջ 431): «Կարծեմ գնացքն արդեն եկել է:— Ա՛, արդե՞ն,—արտասանեց նա և մեքենայաբար վերկացավ տեղից» (Ն.-Դ., 3, էջ 358): «Մինասյանին խոսք տալուց առաջ ուզում եմ իմանալ քո կարծիքը:— Իմ կարծի՞քը» (Ն. տ., էջ 315): «Ձեր բարեկամ Ջեհթաբիի տա՞նն էլ չեք խաղա-

ցել:—Իմ բարեկամ» (Անթ., էջ 370): «Եվ հանգչել ենք միասին էս արյունոտ դաշտում մինչև ելնելը:—Մինչև ելնելը...» (Անթ., էջ 370):

Թերի նախադասությունն ըստ իր արտահայտության լինում է բազմազան: Այն կարող է արտահայտված լինել նախադասության գլխավոր անդամներից որևէ մեկով, իր լրացումով հանդերձ կամ առանց լրացման, կարող է արտահայտված լինել որևէ երկրորդական անդամով կամ անդամներով: Վերջապես թերի նախադասությունը կարող է լինել մի երկրորդական նախադասություն, որ լրացնում է մի այլ (մեծ մասամբ երկախոսության մեջ գործածված) նախադասության միտք:

Ներքակայով արտահայտված բերի նախադասություններ.

«—Ո՞վ փոխարինեց քեզ:—Պետրովք» (Անթ., էջ 202):

«ՆԱԶԱՐ. Ո՞վ է վախկոտ:

ՈՒՍՏԻԱՆ. Դու» (Անթ., էջ 85):

Ներքակայով և իր լրացումով կամ լրացումներով արտահայտված բերի նախադասություններ.

«ՆԱՎԱՍԱՐԴ. Հա... էդ ո՞վ որոշեց:

ԿԱՐԻՆՆ. Մեր կանայք» (Անթ., էջ 242):

«Քե՞զ ով է տվել:— Իմ ասեղը» (Ն.-Դ., 1, էջ 160): «Ի՞նչ էս կարծում, ինչն էր թելադրում այս ծիծաղելի բաներն անելու:— Պարզ նախապաշարումը և սնահավատությունը» (Ն.-Դ., 3, էջ 25): «—Հապա ինչո՞ւ աշխարհ քիչ է քո աշխօրհրի թիվը: Ո՞վ է գրանցել:— Մեր բրիգադի կուսկազմակերպիչ ընկեր Վասիկ Չորանյանը» (Անթ., էջ 185):

Ներքակայի լրացումներով արտահայտված բերի նախադասություններ. «—Ո՞ւմ տղան ես:—Ուստա Ստեփանի» (ՎԱ, ՍԱ, էջ 72): «—Քանի՞ գիրք ես գնել երեկ:—Քսաներկա»:

Ստորոգյալով (կամ ստորոգելիական վերադիրով) արտահայտված բերի նախադասություններ.

ԱՆՏՈՆ... Հապա ո՞րն է ձեր երևակայած կյանքի խարխախն,
ասացեք:

ՀԵՐՄԻՆ. Սիրտը» (Շիրվ., 6, էջ 195):

ԱՆՆԱ. Ահ, այդ ի՞նչ է:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. Շվի» (ն. տ., էջ 181): «Այս ի՞նչ ձայնն
են,—հարցրեց նա, խողովակը հեռացնե ով հիվանդի թի-
կունքից:— Ձիւր եմ,—շտապեց պատասխանել Պետրո-
սը:—Մեր կողքին գոմ է» (ն.-Դ., 1, էջ 193):

ՄԱՅԱԿ ԱՄԻ... Էդ ո՞վ է էդտեղ թեք ընկել:

ԵԱՀԵՆ.— Ռուբենն է» (Անթ., էջ 639):

Ստորագյալի լրացումներով արտահայտված բերի նա-
խադասություններ.

ՎԵՐԺԻՆԵ.—Սիրտս կտրատվում է նրան նայելիս...

ՄԱՐՄԱՐՅԱՆ.—Ո՛ւմ:

ՎԵՐԺԻՆԵ.—Տիրումու» (Շիրվ., 6, էջ 200):

ՀԵՐՄԻՔՆԱԶ. Յո՛ւակ ջան, մի նորից կարդա, ի՞նչ են տվել...

ՅՈՒԱԿ.—Մեղալ, ...մեղա՛լ. աշխատանքային արիություն հա-
մար» (Անթ., էջ 249): «—Բացի այդ, ճանապարհին պի-
տի լցնել խոսքովի ականջը:—Քո՞ մասին:— Իմ պա-
տասխան քղրի անմասնակցության մասին» (Դվ, էջ
129): «—Համարիկը ինքն էր մեղավոր,—ընդդիմախոսեց
Արշավիրը: —Ինչո՞վ» (Անթ., էջ 723): «—Ո՛ւր էիք
գնացել: Քերեզի կողմերը» (ն. տ., էջ 374): «—Ուզում
եմ մի քիչ խոսեմ քեզ հետ...—Ինչի՞ մասին» (Անթ.,
էջ 121):

Երկրորդական նախադասությամբ արտահայտված բերի
նախադասություն. «Գնա, ես քո քույրը չեմ... —Այ քեզ
բան: Ինչո՞ւ — Ինչո՞ւ Որովհետև քանի որ է, որ եկել ես և
նոր ես հիշում ինձ, ինչպես միշտ» (ն.-Դ., 3, էջ 43): «Ինչո՞ւ
չպետք է հավանեի պարոն Բաղամյանի վեպը, համարձակ-
վում եմ իմանալ:—Որովհետև խավաբամիտների բանակին
եմ պատկանում» (ն.-Դ., 3, էջ 79): «Այդ ինչպե՞ս է, որ
ձեզ չեմ նկատել թատրոնում:—Որովհետև մենք հասարակա-

կան գործիչներ շենք և հետևն եմք նստած» (ն. տ., էջ 74):
«— Էդ ինչ կարգ է, որ միշտ իմ գլուխը կուգես ուտել...: — Ուր
վրադ, լամ, ցույց տամ սրտիս սերը, գրչիս ուժը» (Իս.,
էջ 260):

«ԳՆՈՍՏԵՐ.— Դու պառսավ ջաղու, ինչո՞ւ եկար դեմս:

ՄԱՐԳԱՐԻՏ.— Որպեսզի հաշվեմ քո ռեկրեները» (Շեքս.,
3, էջ 22):

Երբեմն թերի նախադասությունը կազմված է լինում
գլխավոր նախադասության մի մասից և այն լրացնող երկ-
րորդական նախադասությունից կամ նախադասություններից:

«ԱՆՏՈՆ. Ասե՛լ է, ես չունեմ միջոցը, այո՞:

ՄԱՐՄԱՐՅԱՆ. (նստում է).— Գուցե ունես, բայց ոչ Հերսիլեի
պես մի կնոջ համար:

ԱՆՏՈՆ.— Ինչո՞ւ:

ՄԱՐՄԱՐՅԱՆ.— Այն հասարակ պատճառով, որ քո և նրա մեջ
կա անանցանելի անդունդ» (Շիրվ., 6, էջ 200):

«— Անտոնիո, ասա ինձ, ո՞վ ես դու: — Ես որք եմ: —
— Ո՞վ էր հայրդ: — Մի բանվոր, որ մեքենայի տակ ջարդվեց
և մեռավ» (Ն.-Դ., 3, էջ 122):

Պատահում է, որ երկախոսություններում գործածվող
թերի նախադասությունների նմանությամբ նախադասություն
է կազմվում նաև մենախոսության մեջ: Դա լինում է այն
դեպքում, երբ խոսողը հոգևորական կամ այլ նպատակով
հարց է տալիս և ինքն էլ պատասխանում:

Օրինակ՝ «Եվ ի՞նչ կլինի այս բոլորի հետևանքը: Օ՛, շատ
մեծ, շատ սոսկալի աղետ ու արհավիրք» (Դվ., էջ 119):

ԶԵՂԶՎԱԾ ԵՆԹԱԿԱՅՈՎ ՈՒ ՍՏՈՐԳՅԱԼՈՎ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թերի նախադասությունների շարքում ուրույն տեղ են
գրավում ազատ շարադրանքի մեջ կամ բոլորովին առանձին
գործածվող այն նախադասությունները, որոնց մեջ բաց են
թողնված՝ զեղչված են ենթական կամ ստորոգյալը: Երկա-
խոսությունների մեջ գործածվող թերի նախադասությունները

հաճախ, առանձին վերցրած, նախադասության տեսք չունեն և, խոսքից դուրս վերցրած, որևէ միտք չեն կարող արտահայտել: Այդպիսին է վերևում բերված թերի նախադասությունների ճնշող մեծամասնությունը: Հիշենք, որ հաճախ որպես թերի նախադասություն է հանդես գալիս երկախոսության մեջ որևէ թեք հոլովով դրված մի գոյական կամ նույնիսկ մի մակբայ և այլն, որոնք այդ կապակցությունից դուրս վերցրած չեն կարող համարվել նախադասություն: Սակայն լինում են այնպիսի թերի նախադասություններ, որոնք կապակցված անքստից դուրս էլ կարող են հանդես գալ, գործածվել որպես նախադասություն: Այսպիսով՝ այս նախադասությունները թերի նախադասությունների նախորդ խմբի համեմատությամբ ինքնուրույն են: Ինչ խոսք, որ խոսքի մեջ գործածված այնպիսի թերի նախադասությունների վերաբերյալ չի կարող բացարձակ ինքնուրույնության մասին խոսք լինել, քանի որ նույնիսկ չքիվ նախադասությունները խոսքի մեջ բացարձակ ինքնուրույն չեն, ինչպես տեսանք իր տեղում:

Այսպիսի թերի նախադասությունների զեղչված անդամի իմաստը երբեմն հասկացվում է հենց տվյալ նախադասությունից՝ առանձին վերցրած: «Ինձ՝ արմատը հողումը, Քեզ՝ փրերն ու ցողունը» (Ա. Խնկոյան, Գյուղացին ու արջը) նախադասության ստորոգյալը զեղչված է, բայց հասկացվում է նախադասության մտքից ու կարելի է հեշտությամբ վերականգնել:

Լինում է այնպես, որ բաց թողնված անդամը հենց տվյալ նախադասության մեջ կարելի է վերականգնել, բայց այդ վերականգնումը կլինի ձևական և ըստ էության այդ անդամը հասկանալու համար պետք է դիմել խոսքին, տվյալ նախադասության հետ գործածված մյուս նախադասությանը կամ նախադասություններին:

Քերենք մեկ օրինակ. «Գիշերները փոքրիկ գազանների նման դուրս էինք գալիս մեր թաքստոցներից և թափառում էինք գյուղերում ուտելիք որոնելու, անցնում էինք մեր հարազատների դիակների միջով» (Հր. Քոչար, Գններալի քույրը): Այս նախադասության զեղչված ենթական հեշտությամբ կա-

րէի է ձեռականորեն վերականգնել ստորոգյալի գեմքի հիման վրա, այն է՝ մենք: Այս վերականգնումով թերի նախադասությունը դառնում է լրիվ, բայց լրիվ չի բացահայտվում արտահայտված գործողությունները կատարողների ով լինե՞ր: Եվ դա իմացվում է նախորդ նախադասություններից. «Թյուրքերի սրից ընկավ մեր ողջ նահապետական ընտանիքը, ամբողջ գյուղը: Փրկվեցինք ես և յոթ եղբայրներիցս միայն մեկը, որ ինձնից մեծ էր ութ տարով: Թաքնվեցինք մենք քաղաքներում» (նույն տեղում):

ԶԵՂԶՎԱՄ ԵՆԹԱԿԱՅՈՎ ՆԱԽԱԳԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Նախադասության ենթական կարող է զեղչվել հիմնականում երկու դեպքում. 1. Երբ ենթական հասկացվում է խոսելու պայմաններից և 2. Երբ ենթական հասկացվում է խոսքից¹:

Ենթական խոսքից կարող է հասկացվել, հետևապես այն կարող է զեղչվել, նախ, այն դեպքում, երբ նախադասության ստորոգյալն արտահայտված է բայի առաջին դեմքով:

Օրինակ՝ «Մենակ մնացի կառքի մեջ: Խանութպանը եկավ և թե՛ առաջարկեց: Մերժեցի: Դարձա հակառակ կողմը և այգիներն ու ջրադացը դիտել սկսեցի» (ՎՓ, ԵԺ, 5, էջ 9): «Էռտրված սրտով նորից գործի կպանք» (ՎԱ, ԼԿ, էջ 28): «Գնանք վերցնենք աղջկանդ» (ԱՆԹ., էջ 233):

Ենթական հիշյալ պատճառով կարող է զեղչվել նաև այն դեպքում, երբ նախադասության ստորոգյալն արտահայտված է բայի երկրորդ դեմքով:

Օրինակ՝ «Ինչո՞ւ ես լուռ և ինչո՞ւ չես նայում ինձ» (Ն.-Դ., 1, էջ 211): «Նայիր ուղիղ աչքերիս և պարզ առա, ի՞նչ ես ուզում հասկացնել այդ ակնարկներով» (Ն. տ., էջ 213): «Արի ստացիր ինձանից մի քանի հազար ռուբլի, թուղթ տուր, որ ինձանից պահանջ չունիս և ինձ էլ ու քեզ էլ ազա-

¹ Հմմտ. պրոֆ. Գ. Ս և ա կ, Հայոց լեզվի շարահյուսություն, դասագիրք միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի համար, Երևան, 1951, էջ 17:

տիր գլխացավից» (Շիրվ., 6, էջ 256): «Եթե այդքան վստահ ես, թե՛ ուզում ես, արա» (Անթ., էջ 240):

Այսպիսի դեպքերում երկրորդ դեմքով ցույց է տրվում սովորաբար խոսակիցը: Այդպիսին էին վերոհիշյալ օրինակները: Սակայն պատահում է, որ խոսողն ինքն իրեն է դիտում իբրև խոսակից և երկրորդ դեմքով արտահայտված բայը ու նրա վերականգնված ենթական փաստորեն վերաբերում են իրեն՝ խոսողին:

Օրինակ՝ «ՆԱՎԱՍԱՐԴ.—(Չնկատելով Զավենին՝ խոսում է) Չէ, Նավասարդ, էս քսան տարվա մեջ չես վայելել կյանքի քաղցրությունը... Մեղքդ շալակիդ, ընտանիքիդ փառքն ու պատիվը սրտիդ մեջ, քաշ ես տվել գոյությունդ... Չէ, Նավասարդ, լավ ես մտածել... գնա, հեռացիր...» (Անթ., էջ 247):

Ենթակայի զեղչման նախորդ դեպքերի ընդհանուր հատկանիշն այն է, որ ենթական զեղչվում է և վերականգնել կարելի է խոսելու պայմանների, հանգամանքների շնորհիվ:

Ենթական կարող է զեղչվել նաև այն դեպքում, ինչպես ասվեց վերը, եթե այն արդեն գործածված է խոսքի մեջ և նորից կրկնելու անհրաժեշտություն չկա:

Օրինակ՝ «Երկու շաբաթից ավելի էր, որ Սարիբեկյանը տուն չէր գնացել: Ամեն օր մենակ գնում էր, ստուգում, թե սարում որքան խոտ է հարվել, ինչպես է դիպել հարած խոտը: Լինում էր նախարարների հորթարածների մոտ, հետևում էր, թե որ կողմերն են տանում նախիրն արածացնելու» (Անթ., էջ 346):

Զեղչված ենթական նախորդ կամ այլ նախադասության մեջ հաճախ գործածված է լինում ոչ որպես ենթակա, այլ ուրիշ պաշտոնով, և դա չի խանգարում զեղչված ենթական հասկանալուն:

Օրինակ՝ «Զննեցի մարդուն: Կնճուռ և արևակեղ դեմքով անձ էր, համեմատաբար լավ ու մաքուր հագնված: Կարճահասակ էր, մաշված, թախծոտ և զգուշավոր հայացքի տեր» (ՎՓ, ԵԺ, 5, էջ 9): «Կանանցից մեկը վախվախելով ձեռքով շոյեց այծյամի գլուխը:—Ինչ գեղեցիկ, խելոք աչքեր ունի» (Անթ., էջ 373):

Բարդ նախադասության կազմում եղած գեղջված ենթակայով նախադասության ենթական կարող է վերականգնվել նույն բարդ նախադասության մյուս բաղադրիչի հիման վրա: Ինչպես՝ «—Միտար Բենատն, կանգնեցրեք դրան, այդպես երևի շատ է նեղվում, տեսեք քիչ է մնում՝ լաց լինի» (Անթ., էջ 373):

Զեղջված ենթակայով նախադասության ենթակա գիտակցվող բառը կարող է գործածված լինել ոչ միայն նախորդ նախադասության կամ նախադասությունների մեջ, այլև երբեմն հաջորդ նախադասությունում: Օրինակ՝ «Ինչքան ծիծաղեցին էն գիշեր... Ամենք գաղթականներ էին: Նոր էին Թիֆլիս հասել» (Թում., 3, էջ 89):

ՋԵՂՋՎԱԾ ՍՏՈՐՈԳՅԱԼՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ստորոգյալի գեղջումը (ամբողջ ստորոգյալի կամ նրա մի մասի) սովորական երեւոյթ է ժամանակակից հայերենում: Լեզուն միշտ ձգտում է սեղմության և այդ տենդենցի շնորհիվ նախադասության մեջ չի գործածվում այն, ինչ որ առանց գործածվելու հասկանալի է, ինչի գործածության անհրաժեշտություն չկա: Ստորոգյալի գեղջումը ևս, ինչպես ամեն մի գեղջում, այդ տենդենցի արտահայտություն է:

Ստորոգյալի հասկանալի լինելը պայմանավորված է նրանով, որ այն տվյալ խոսքի մեջ արդեն գործածված է լինում կամ էլ անկախ գործածվելուց և առանց գործածվելու, նախադասության ընդհանուր մտքից որոշակիորեն ենթադրվում է:

Քննենք ստորոգյալի գեղջման հիմնական դեպքերը¹:

Ստորոգյալը հաճախ գեղջվում է այն դեպքում, երբ այն ինքնին հասկանալի է նախադասության մտքից:

¹ Այս մասին տե՛ս պրոֆ Գ. Ս և Կ, Հայոց լեզվի շարահյուսություն, միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի համար, 1951, էջ 23—24:

Օրինակ՝

«ՍՈՒՐԵՆՆ.— Պարսիկ հազարապետը, տեր Մարզպան, Տիգրոսից եկած հատուկ սուրհանդակի հետ վաղը կժամանեն այստեղ...

ՎԱՍՍԱԿ.— Հազարապետը ինձ մո՞տ, հատուկ սուրհանդակի հետ» (ՎՓ, ԵԺ, 5, էջ 283): «Միայն անշուշտ էս տարի ինձ՝ արմատը հողումը, Քեզ՝ փրերն ուցողունը» (Ա. Խընկոյան, Գյուղացին ու արջը): «Հազար խոսքին՝ մեկ խոսք, հազար ճնճղուկին՝ մեկ քար» (ԱՂ, ՀԱ, էջ 56): «Խենթը՝ քուն, բախտն՝ արթուն» (Ն. տ., էջ 59): «Հասկացողին՝ մին, չհասկացողին՝ հազար ու մին» (առած):

Ստորոգյալը կարող է զեղչվել այն դեպքում, երբ այդ նախադասության մեջ արդեն գործածված է տվյալ բայով ստորոգյալ (բայի քերականական հատկանիշները տվյալ դեպքում կարևոր չեն):

Օրինակ՝ «Ետո մենք ճամփա ընկանք, սրանք էլ՝ մեզ հետ» (Թում., 3, էջ 109): «Ապերն առավ փրերը, Արմատենբը՝ ընկերը» (Ա. Խնկոյան, Գյուղացին ու արջը):

Այս օրինակներում ստորոգյալը զեղչվում է ամբողջությամբ, և ինչպես ասվեց, դրա համար վճռական պայման է հանդիսանում այն, որ նման դեպքերում զեղչված ստորոգյալը այն բայով պիտի արտահայտվեր (չզեղչվելու դեպքում), որն արդեն մեկ կամ մի քանի անգամ գործածված է, ուստի և գործածվածի կրկնությունը դառնում է ավելորդ:

Այստեղից արդեն հասկանալի պետք է լինի, որ այն դեպքում, երբ նախադասության մեջ գործածվում են տարբեր բառերով արտահայտված ստորոգյալներ, ստորոգյալի ամբողջական զեղչում հնարավոր չէ: Նման դեպքերում կարող է զեղչվել միայն հանգույցը:

Օրինակ՝ «Նա ճարպիկ է, թեթևաշարժ և, ըստ երևույթին, քաջասիրտ» (Մուր., 2, էջ 9): «Երկու դեպքում էլ համբերության մեջ եմ, որովհետև տեսնում եմ, որ լավ ընկեր է և փորձված առաջնորդ» (Ն. տ.): «Ծրբ ինձ զարթեցրեց, արդեն ժամը չորսն էր, և արևը հակված դեպի արևմուտք» (Ն. տ., էջ 11): «Տների սրահներում երևում էին միայն կանայք,

որոնք կամ ճախարակն էին հավաքում, կամ հավերք տուն անում և կամ վառած թոնրի շուրջը պտտում» (ն. տ., էջ 13):

Իհարկե, այսպիսի նախադասությունները շատ մասնակի չափով են թերի: Զեղչված ստորոգյալով նախադասություններ պետք է համարել նաև հատկապես ժողովրդական խոսքի մեջ գործածվող այնպիսի նախադասությունները, որոնց ստորոգյալը, որը պիտի արտահայտվեր ասել բայով, բաց է թողնվում և նույն տեղում գործածվում է թե բառը: Այսպիսի նախադասությունները գործածվում են պատմություններ անելիս և շատ են հանդիպում ժողովրդախոսակցական խոսքի մեջ: Հենց այդ է պատճառը, որ այդպիսի նախադասություններ շատ է գործածում ժողովրդական խոսքի մեծ վարպետ Հ. Թումանյանը:

Օրինակ՝ «Մին էլ թե՛ տղեք, եկեք» (Թում., 3, էջ 109): «Մին էլ Ավագը թե՛ Այ տղա, էն ով է, հրե մի մարդ է գալի վերի կոնիցը» (ն. տ., էջ 52): «Էս Ավագը թե՛ այ տղա, էդ ի՞նչ խաբար է, էդ ի՞նչ ես եղել» (ն. տ., էջ 55): «Վեցերորդ օրը Սիմոնը թե՛—Այ տղա, էլի փորձանք կգա, սելին բարձենք, գյուղ տանենք» (ՎԱ, ԼԿ, էջ 29):

Պատահում է, որ ստորոգյալի հետ միասին ենթական էլ է լինում զեղչված և այդ թե՛ն փոխարինում է ամբողջ նախադասությամբ: Ինչպես՝ «Հրացանիս քարը շինեցի, պնդացրի, ասի՝ Ավագ, էլի պետք է գնամ, թե՛ այ տղա, ձեռք վեր կալ, կը բռնի կը գզի: Ասի՝ հիմի սովորեցի, էնպես չեմ անի, որ բռնի: Թե՛ դու գիտես» (Թում., 3, էջ 55): «Ասի՝ տղեք: Թե՛ ինչ է: Ասի՝ էս գեղ չի... թե՛ բա էս ինչ են» (ն. տ., էջ 109): «Ասի՝ Ավագ, էս օքմին չի, արջ է: Թե՛ բոհ, չէ չէ պոգեր» (ն. տ., էջ 52):

Ստորոգյալը կարող է զեղչվել նաև երկախոսությունների մեջ, երբ մեկի նախադասության մեջ սպասվում է գործածվել այն ստորոգյալը, որ խոսակցի նախադասության մեջ արդեն գործածված է: Այս դեպքում ևս ընդհանրությունը ստորոգյալը ներկայացնող բառի մեջ է, իսկ նրա քերականական հատկանիշները՝ դեմքը, թիվը, կարող են տարբեր լինել:

«—Ինձ դուր է գալիս այս նկարը:

—Իսկ ինձ՝ այս արձանը» (Անթ., էջ 231):

Այս հարցի վրա երկար կանգ առնելու անհրաժեշտություն չկա, քանի որ այսպիսի փաստեր քննարկվել են երկախոսություններում գործածվող թերի նախադասությունների քննության բաժնում:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ք Ց Ո Ւ Ն

- Մ. Արծղյան, Աշխարհագրի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912:
- Ս. Արաճաճյան, Նախադասության տեսակներն ըստ բնույթի (ՀՍՍՌ ԳԱ Լեզվի ինստիտուտի «Լեզվի և ոճի հարցեր», 1960):
- Էդ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952:
- Վ. Առախյան, Հայոց լեզվի շարահյուսություն, հ. 1, Երևան, 1959:
- Գ. Բառայան, Տրամաբանություն, Երևան, 1957:
- Ա. Գրիգորյան, Հայոց լեզու, դասագիրք միջնակարգ դպրոցի 8—10-րդ դասարանների համար, 1952:
- Ա. Ղառիբյան, Հայոց լեզու, դասագիրք միջնակարգ դպրոցի 5—6-րդ դասարանների համար, 1956 և այլն:
- Գր. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939:
- Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, դասագիրք միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի համար, 1956 և այլն:
- Գ. Սևակ, Շարահյուսության մի քանի հարցեր մարքս-լենինյան իմացաբանության լույսի տակ (ՀՍՍՌ ԳԱ Լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», հ. 4, 1949):
- «Грамматика русского языка», Издательство АН СССР, Москва, 1952.
- Есперсен, Философия грамматики, Москва, 1959.
- «Современный русский язык. Синтаксис», Издательство МГУ, 1957.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

- ԱՀ, ՆԺ—Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1—2, 1955—1956;
- ԱՀՄ—Ա. Հովսեփյան, Սիրտը, 1957;
- ԱՂ, ՀԱ—Ա. Ղանալանյան, Հայկական առածանի, 1951;
- ԱՃ, ԼՔ—Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1—3, 1952—1957;
- ԱՃ, ԼՔՆ—Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն, 1955;
- Անթ.— Սովետահայ գրականության անթոլոգիա, 1950;
- ԱՍԾ—Ա. Սահյանյան, Ծարավ, 1955;
- ԱՍ, ՈՄ — Ա. Ստեփանյան, Ոսկե մեդալ, 1952;
- Ավանգ.—«Ավանգարդ», թերթ, օրգան ՀԿԵՄ Կենտկոմի:
- Ար.— Արազի, Ընտիր երկեր, 1948;
- Բակ.—Ա. Բակունց, Երկեր, 1955;
- ԳՄԵ—Գ. Մահարի, Երկեր, 1954;
- ԳՄԹ—Գ. Սեուկ, Թեհրան, 1953;
- ԳՍ, ԺՀԴ—Գ. Սեակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 1955;
- ԴԴ — Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 1—6, 1955—1957;
- ԴՎ — Դ. Դեմիրճյան, Վարդանանք, 1951;
- ԵԶ—Ե. Չարենց, Ընտիր երկեր, 1954;
- ՔԹ, ՈՀ—Ք. Թափալցյան, Ոսկե հովիտ, 1955;
- Թում.— Հ. Թումանյան, հ. 1—5, 1940—1950;
- ԺՎ — Ժյուլ Վեռն, Ուղևորություն դեպի երկրի կենտրոնը, 1946;
- Իս.— Ա. Իսահակյան, Ընտիր երկեր, 1948;
- Իս, ԱԷ — Ա. Իսահակյան, Արծակ էջեր, 1946;
- Լեո—Լեո, Կեղարվեստական երկեր, 1959;
- ՀԺՊ — Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, 1956, հ. 2, 1957;
- ՀՇ — Հ. Շիրազ, Գիրք խաղաղության և սիրո, 1950;
- ՀՇ, ՔՀ — Հ. Շիրազ, Քնար Հայաստանի, 1958;
- ՀՍ, ՄՏ — Հ. Սահյան, Միածանը տափաստանում, 1953;
- ՀՔ, ՄՏԶ—Հ. Քոչար, Մեծ տան զավակները, 1952;
- Մուր.— Մուրացյան, Երկերի ժողովածու, հ. 1—3, 1951—1953;

Ն.-Դ.—Նար-Դոս, Երկերի ժողովածու, հ. 1—3, 1955:

Շեքս.—Վ. Շեքսպիր, Ընտիր երկեր, հ. 1—2, 1951—1955:

Շիրվ.—Ա. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1—6, 1950—1951:

ՊՍ, ԱԶ — Պ. Սևակ, Անյուշի զանգակատուն, 1959:

Սիր.—Հ. Սիրաս, Երկերի ժողովածու, հ. 1, 1958:

ՍԱԼ — Ս. Ալվազյան, Լեռնցիներ, 1955:

ՍԽՀ — Ս. Խոնկազյան, Հողը, 1957:

ՍՀ — Սովետական Հայաստան, օրաթերթ, օրգան ՀԿՊ ԿԿ-ի և Հայկական ՍՍՌ աշխատավորների դեպուտատների սովետների:

ՄՅՔ — Ս. Տարոնցի, Բանաստեղծութուններ, 1955:

ՎԱ, ԼՎ — Վ. Անանյան, Լեռնային կածաններով, 1956:

ՎՏ — Վ. Տերյան, Երկեր, 1956:

ՎՓ, ԵԺ—Վ. Փափազյան, Երկերի ժողովածու, հ. 1—4, 1958—1959:

ՎՓ, ՍՊ.—Վ. Փափազյան, Սրտիս պարտքը, 1959:

Բ—Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1—7, 1955—1956:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Փրկու խոսք	6
Նախադասություն	7
Նախադասության հիմնական հատկանիշները և բնորոշումը	7
Նախադասությունների ինքնուրույնության հարաբերականու- թյունը և փոխհարաբերությունները խոսքի մեջ	34
Նախադասության տեսակներն ըստ բնույթի	58
Պատմողական նախադասություն	63
Հարցական նախադասություն	73
Հրամայական նախադասություն	86
Բացականչական նախադասություն	93
Խառը կամ ընդհանրական բնույթի նախադասություն	106
Միակազմ նախադասություն	112
Դիմավոր միակազմ (անենթական) նախադասություն	120
Անդեմ նախադասություն	134
Բայական անդեմ միակազմ նախադասություն	137
Անվանական նախադասություն	141
Բառ-նախադասություն	146
Փոքրի նախադասություն	153
Քիբի նախադասությունը երկախոսության մեջ	157
Զեղչված ենթակայով և ստորոգյալով նախադասություն	161
Զեղչված ենթակայով նախադասություն	163
Զեղչված ստորոգյալով նախադասություն	165
Գրականություն	168
Ոգիտագործված աղբյուրների համառոտագրություններ	169

ՄԵՐԳԵՑ ԳՏԱՆՔՈՒՄԻ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

СЕРГЕЙ ГЯНДЖУМОВИЧ АБРААМЯН

«Ժամանակակից հայերենի շարահյուսությամբ
սի քանի հարցեր»

Պատ. խմբագիր Ա. Ս. ՂԱՐԻՔՅԱՆ
Հրատ. խմբագիր Ա. Հ. ՇԱԴԳԱՄՅԱՆ
Կազմը Հ. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆԻ
Տեխ. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբադրիչ Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ

ՎՃ 00453 ԽՀԽ 707 հրատ. 2006 Պատ. 28 տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 18/1 1962 թ., ստորագրված է տպագրու-
թյան 20/111 1962 թ., թուղթ $84 \times 108^{1/32}$, տպագրական $10^3/4$ մամուլ,
հրատ. 7,39 մամուլ: Գինը կազմով 64 կոպ.

Հայկական ՍՍՈՒ Դիտությունների տեղեկագրի հրատարակչության
տպագրան, Երևան, Բաբեկամության, 24:

ЦЕНА

15354